Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1395

ԿՈՄՍԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 33

ՎԼ. ՍԱՐԱԲՅԱՆՈՎ

ՊԱՐԶ ԶՐՈՒՅՑՆԵՐ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

338(47)
Ս-25

ԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1925

Գ-25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏ. ԽՈՐՀ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:

№ 33 ԿՈՄՍԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 33

ՎԼ. ՍԱՐԱԲՅԱՆՈՎ

ՊԱՐԶ ԶՐՈՒՑՑՆԵՐ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*C.C.P.A Центральная Библиотека
7/II—1922
Москва, Масникова
Ա. ՍՅԱՍՆԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Գ 4258
1395

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1925

26.07.2013

29209

36078
45-ա.ա.

571-91

(19324-5)

Գրառեսպար № 220 բ. Պատ. № 267 Տիրաժ 4000

Պետիրատի VI տպարան Լենինականում

1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ

Ամեն մի բանվոր գիտե, վոր դեռ 1920 թ. բուրժուան աշխատում եր համեղաճաշակ կերակուր ուտել սուսուփուս, արագավազ ձիերով քիչ շրջել, հագնվել այնպես, վոր թանգությունն ու հագուստի շքեղությունը շատ ել աչքի չընկնեին։

Այժմ այլ է պատկերը. Նեպմանները տրրկել են, կարմրել, ճաշում են ճոխ ճաշարաններում. ափաշկարա. հատկապես նրանց համար բացված են մասնավոր շքեղ մագազիններ՝ կոշիկի, հագուստի, փողպատների... Հանդես յեկան ֆաբրիկանտներ, իսկ բանվորները՝ ինչպես եր մինչև հեղափոխությունը, ստիպված են նույնիսկ գործադուլներով կռվելու, վոր իրենց քիչ շահագործեն։

Հարց է առաջ գալիս թե՝ ինչու և ինչու համար և վորոշ չափի ազատություն տրված բուրժուազիային. ինչու չի շարունակվում այն քաղաքականությունը, վոր վարում եյինք մինչև 1920 թվականը։ Մի՞թե բանվոր դասակարգը նրա համար մասնակցեց հեղափոխությանը, վոր բուրժուան՝ իր քաղաքական պարտությունից հետո նորից ճաբպակալի տնտեսապետ։

Փորձենք այդ խնդիրները պարզաբանել։ Վոր բուրժուազիան է մեզ թշնամի։

Ի հարկե՝ նախ և առաջ խոշորը և միջինը, այստեղ դնելով բանկիրներին, ֆաբրիկանտ-գործարանա-

տերերին, խոշոր առևտրականներին և՝ ընդհանրապես, շատ թե քիչ արդյունաբեր ձեռնարկությունների տերերին՝ լինին այդ ձեռնարկությունները տուն, մագազին, նույնպես և գյուղական համփանները—կուլակները։

Յեթե մենք բուրժուական ամեն մի խմբակցություն քննենք առանձին, կըհամոզվենք, վոր բոլոր այդ ֆաբրիկանտները, տնատերերը, առևտրականները և բանկային գործարարները վոչ միայն բուրժուաներ են, այլև այնպիսի մարդիկ, վորոնք գիտեն իրենց գործը և՝ հաճախ, շատ լավ գիտեն. կարող են բանեցնել գործարանը, գնել ու վաճառել, տունը կարգին պահել հայլն։

Այժմ տեսնենք, թե ինչ պետք է անի բանվոր դասակարգը, վոր գյուղացության հետ մեկտեղ նըվաճել է իշխանությունը։ Խորհրդային իշխանությունը պետք է ձգտի, վոր աշխատավորների կյանքը տարեցտարի լավանա։

Կոմմունիստները բուրժուազիայի դեմ կռվում են վոչ թե նրա համար, վոր բուրժուան լավ է ապրում, այլ նրա համար, վոր նա՝ շահագործելով աշխատավորությանը, թույլ չի տալիս, վոր վերջինս գոնե տաներելի կյանքով ապրի։ Մենք Հոկտեմբերյան հեղափոխությունն առաջ բերինք հենց այն նպատակով, վոր վերջ տանք շահագործության և ամբողջ հարստությունը՝ վոր մեր սեփական ձեռքերն են արտադրում, բաժին դառնա բոլորին։

Գյուղացիները հետզհետե ել ավելի կողմակից են դառնում Խորհրդային իշխանության գլխավորապես այն պատճառով, վոր նրա որոք տնտեսությունն

ամրապնդվում է, ապրելն աստիճանաբար հեշտանում։

Բանվորն ու գյուղացին այնպես ամուր են կառչել Խորհրդային կառավարությանը վոչ միայն նրա համար, վոր այդ կառավարությունն իրենցն է, այլև այն ըմբռնման շնորհիվ, վոր հարկերը կըպակասեն, արժեքները կընկնեն, դպրոցների թիվը կըշատանա, գրագիտությունը կաճի։

Այժմ՝ դիցուք թե Խորհրդային իշխանությունը վերացրեց բուրժուաների իրավունքները բոլոր գործարանների, բոլոր տների, բոլոր առևտրական հիմնարկների վրա. ինչ կըլիներ։

Նախ և առաջ սաստիկ կըկրճատվեր արտադրելի ապրանքների քանակը։ Ֆաբրիկան խամ-խամ չես կառավարի. նրան պետք է ծանոթ լինես, վարժվես նրան, իմանաս թե վորտեղ ինչ է գրված, վորտեղից ուր և գնում դանազան նյութերները, ինչպես են բանում դազգյահները, վորտեղից պետք է ձեռք բերել լավ և միաժամանակ ձեռնտու գնով ածուխ, հում նյութ, ոժանդակ նյութ, ումը վաճառել պատրաստի ապրանքը հայլն։

Կյանքի մեջ ամեն բան սովորում են։ իսկ ֆաբրիկ-գործարանային գործը՝ ևս առավել։

Յերբ բանվորներն ու գյուղացիք կառավարությունը ձեռք քցեցին, նրանք՝ նախ և առաջ ինչը պետք է կարգավորեին։

Պարզ է, թե պետք եր առաջին հերթին նոր պետական ապպարատ ստեղծել։ Հին կալվածատիրական և բուրժուական ապպարատն անպետք եր մեզ՝ սկսած թագավորից, զեմստվոյի պետից մինչև քաղաքապետն ու տասնապետը։ Հենց միայն հին ապպարատի վերա-

ցումը մեզնից պահանջում եր ուժերի հսկայական լարումն և բազմաթիվ հմուտ գործիչներ. փորձեցինք հետամուտ լինել թե ուր թաղնվեցին հին չինովնիկները. արդյոք մեր խորհրդային պաշտոններումը չեն տեղավորված ուրիշ ազգանուններով և ուրիշ քաղաքներում։ Նշանակում է, թե հին պետական մեքենայի կործանումը մյուս գործերից խլում եր հարյուրհազարավոր մարդ, բայց ախր պետք եր մեր ապպարատն ստեղծել. պետք եր հսկել կյանքի կարգ ու կանոնի վրա, քննել բնակչության մեջ յերևան յեկող գանգատներն ու վիճերը, ստեղծել բանակ հայրն ըստ կարգի։ Բանվոր դասակարգը, վոր Հոկտեմբերին նվաճել եր ազատորեն կազմակերպվելու իրավունքը, պետք է մարդկանց հսկայական մի քանակ հատկացներ արհմիության աշխատանքներին։ Արագապես աճող կուսակցությունը լավ կազմակերպիչների, ագիտատորների պրոպագանդիստների, հրապարակախոսների և այլոց կարիքն եր զգում։

Ցարական Ռուսաստանում բանվոր դասակարգի (գյուղացության մասին չենք ել խոսում) միայն վերին բարակ խավը յեռանդուն մասնակցություն ուներ հասարակական մշտական աշխատանքում. փետրվարից մինչև հոկտեմբեր ժամանակամիջոցում, ճիշտ է, բանվորները լծվեցին հասարակական աշխատանքի, բայց այդքան ժամանակը բավական լինելուց շատ հեռու եր՝ բանվորից հասարակական լավ գործիչ դուրս գալու համար։ Ամենից ավելի գործունյա, ընդունակ, կրթված աշխատավորները բայշևիկների կուսակցությունից եյին ելնում, բայց այդ կուսակցությունը շատ մեծ չեր և հատկապես գավառումն եր զգացվում կուսակցական աշխատավորների պակասը. այնտեղ մի մարդը միաժամանակ և՛ ագիտատոր եր, և՛ կազմակերպող, և՛ տնտեսավար, և՛ թերթի խմբագիր։

Ահա այսպես նոր պետական ապպարատն աշխատավորների գլխավոր բազմությունն իր գիրկը քաշեց։ Վոչ կուսակցությունը, վոչ արհմիությունները չեյին կարող բավարար քանակությամբ տաղանդավոր ընկերներ հատկացնել ֆաբրիկների, գործարանների կառավարմանը։ Հապա վորքան մարդու պահանջ կար, վորոնք արդյունաբերական հիմնարկների գլուխն անցնեյին։

1920 թվին արդյունաբերական ցուցակագրությունն յեղավ, վորով պարզվեց թե ՍԽՀՄ ուներ մոտավորապես 413,000 արդյունաբերական հիմնարկ, վորոնցից 210,000 շարժիչ մեքենաներով։

Առանց խոսք իսկ բանալու գործարանների կառավարման վրա, մենք չեյինք ել կարող մինչև իսկ մի-մի փոքր ի շատե լավ գործիչ տալ այդ 413,000 հիմնարկներին։ Յեթե հենց առաջին պատահած աշխատավորներին դնեյին այդ տեղերում, հատարձակ քայլ կըլիներ, վորովհետև ֆաբրիկա կառավարելը դյուրին բան չե, իսկ արտադրությունը քայքայելը վտանգավոր կըլիներ, վորովհետև բնակչությունը հսկայական կարիք ուներ ֆաբրիկագործարանական ապրանքների։

Գուցե ասեն թե պետք եր նախկին տերերին և տեսուչներին բռնությամբ ստիպել, վոր հանձն առնեյին խորհրդային հիմնարկները կառավարել. սակայն գործն այդպես դնել ի հարկե կարելի չեր։

Ել ինչ արդյունաբերություն, յեթե նրանում աշխատողների մեջ չկա վոչ մի կապ բացի ուժից։ Յեվ

մթթե հնարավոր է հսկել այն բոլոր խաղերի վրա, որ կարող են սարքել՝ դեպի մեզ թշնամորեն տրամադրված նախկին տերերը, տեսուչները, կառավարիչները և նմանները։ Յուրքանչյուր բանվոր գիտե թե ինչպես կարելի է պես-պես և յերբեմն ակնախույս, զբաղվել սաբոտաժով։

Վոչ, պետք եր կամ շատ ֆաբրիկաներ թողնել իրենց տերերի ձեռքը, կամ գրավել և կարճ ժամանակից հետո եկ փակել վնասի հետևանքով։ Սակայն կարելի՞ յե թույլ տալ, որ մեր աղքատության ժամանակ ֆաբրիկա փակվի։

Այդ արդյունաբերությունը պատերազմի ընթացքում և Կերենսկու կառավարության որով սաստիկ հուժվեց և՝ որ եականն է, պակասացրեց աշխատանքը, իսկ պատերազմից առաջ եկ շատ քիչ բան եր արտադրում։ Գյուղացիք կիսաքաղց վիճակով եյին ապրում, բանվորները գնում եյին միայն ամենաանհրաժեշտը, այն եկ սահմանափակ քանակությամբ։ Անցյալում՝ յերբ բանվորն անցնում եր մագազինի մոտով, նրան թվում եր, թե մագազիններն ապրանքի առատությունից տրաքում են և թե իրենց բոլորին հերիք կելիներ, յեթե բաժան-բաժան անեյին։ Բայց իրոք շատ քիչ ապրանք կար, և յեթե բնակիչներից ամեն մեկը ժտածեր վոտնաման հագնել, չեր բավականանա։ Արտասահմանումն եկ բանվորները քիչ բան են գնում, իսկ մեզնում՝ եկ ավելի պակաս։

Յեթե նախապատերազմյան վերջին տարին բոլոր վաճառված ապրանքը բաժանեյին բնակչությանը հավասար չափով, հետևյալ պատկերը կըստացվեր. Ռուսաստանում ամեն մեկին չուգունից կընկներ (այսինքն մեխ, կացին, յեղան և այլն) տարեկան 1 փութ, մինչդեռ Գերմանիայում՝ 13 և կես փ., Հյուսիսային Ամերիկայի Միացյալ-Նահանգներում՝ եկ ավելի՝ մոտավորապես 18 փ., Ռուսաստանում բամբակը կընկներ 5 և կես ֆունտ, Գերմանիայում՝ 14 և կես ֆ., Հյուսիսային Ամերիկայի Միացյալ-Նահանգներում՝ 27 և կես ֆ., իսկ Անգլիայում նույնիսկ 42 ֆունտ։

Վորքան եկ վոր ցարական կառավարությունն ողիով եր հարբեցնում բնակչությանը, այնուամենայնիվ Ռուսաստանում ամեն մի հոգի ավելի քիչ սպիրտ եր գործ ածում, քան Ֆրանսիայում և Ավստրո-Վենգրիայում և գրեթե այնքան, որքան Հյուսիսային Ամերիկայի Միացյալ-Նահանգներում, որտեղ ողու վաճառքն արգելված է։ Գյուղացիք և բանվորները (յուրաքանչյուրն առանձին) ֆաբրիկայի ապրանք քիչ եյին գործածում պատերազմից առաջ, իսկ Խորհրդային իշխանությունը պետք է ձգտեր մեծացնել արդյունաբերությունը և վոչ թե պակասացնել։

Ահա թե ինչու նա բանվորներին և պաշտոնյաներին աշխատանքի վերահսկողության (контроль) կոչեց։

Խորհրդային կառավարությունն ասաց.—Միայն շատ սակավ ընկերներ կարող են ֆաբրիկա և գործարան կառավարել, հետևաբար նախ պետք է կառավարել սովորել, ուստի և սկզբում մենք նրանց վերահսկողության կենթարկենք. հետզհետե կըկազմվեն կառավարիչների նորանոր խավեր, որոնց և կուղարկենք մեր սեփական ֆաբրիկաներն ու գործարանները։ Մենք առաջ ենք մղել մեր հմտության խնդիրները վերահսկողության հանդարտով։

Մի՞թե այդ նշանակում եր, թե մենք մի կողմ ենք դնում ֆաբրիկաների դրավման գործը։

Հարկավ վոչ, այդ չեր նշանակում։ Մենք կըտրականապես վճռեցինք արդյունաբերությունը մեր ձեռքը գցել, բայց այդ անել աստիճանաբար և հմտորեն, այլ վոչ միանգամից և հանպատրաստից։ Մենք դատում եյին շատ պարզ. ամենակարևոր ձեռնարկությունների համար մենք մարդ կըգտնենք, կարող ենք ամենախոշոր հիմնարկություններին լավ կազմակերպիչներ հասցնել. դրանք մեր հրամանատարական բարձրունքներն են արդյունաբերության մեջ. ըստ հնարավորության՝ հենց վոր մեր աշխատավորների նոր կադրերը կըկազմվեն, մենք հետզհետե ամբողջ արդյունաբերությունը պետական կըդարձնենք։

Ինչպե՞ս ե գործի բուն եությունը։

Նրանում՝ վոր մեր գործարանը կապիտալիստների գործարանից վոչ միայն վատ չբանի, այլ նույնիսկ լավ բանի։ Ցեթե նա կարտադրի ավելի քիչ, ավելի թանդ և ավելի վատ, ամեն մի գյուղացի կարող ե հարց տալ. «Եվ ինչո՞ւ դրավեցիք գործարանը. նրա՞ համար, վոր վատ բանի»։ Ուստի մենք վճռեցինք մեր ձեռքում պահել այնպիսի ձեռնարկությունները, վորոնց հախիցը մենք կարող ենք գալ. իսկ մնացածները թող մնան կապիտալիստների ձեռքում. ավելի լավ ե, վոր ֆաբրիկան մասնավոր լինի, բայց բանող, քան թե կողպեքի տակ դրվի։

Ելի մեկ անգամ շեշտենք, վոր մեր արդյունաբերությունն աղքատ ե և մենք չենք կարող թույլ տալ, վոր կողպեքներ դրվեն, յերբ հնարավոր ե ֆաբրիկան գործի դնել, թեկուզ ուրիշների ձեռքով։

Ահա թե ինչու մեզնում ազատորեն են ապրում ֆաբրիկաների և գործարանների, արհեստանոցների ու խոշոր տնայնագործական ձեռնարկությունների մասնավոր տերերը։

Առևտրի մասին հո խոսք ել չի լինի։

Մի՞թե բանվոր դասակարգը և գյուղացությունը կարող են մեկեն ի մեկ վերացնել մասնավոր առևտուրը. նրանք վո՞ր տեղից պետք ե ճարեյին իրենց հմուտ աշխատավորներին, վորոնք առևտրով պարապեյին։

Բայց չէ՞ վոր միայն քաղաքներում և քաղաքատիպ ավաններում 1923 թ. սկզբում հաշվի յե առնված 281,000 առևտրական հիմնարկ։ Միայն Մոսկվայում նրանց թիվը հասնում եր մոտ 15,000։ Ախր այդ ժամանակ Մոսկվայում յուրաքանչյուր 100 մարդուն բնկնում եր մեկ առևտրական, իսկ նահանգական քաղաքներում մեկ առևտրականը սպասարկում եր ել ավելի քիչ՝ 65 մարդու։ Ցեվ ամեն մեկ առևտրական գիտե, թե գնողն ինչ ե պահանջում, ինչ գին պետք ե հարմար համարել, վորտեղ ծախել, վորտեղ գնել, տարվա վո՞ր ժամանակը և որվա վո՞ր ժամերին։

Կարելի՞ յե վոչնչացնել մասնավոր առևտրային կապիտալը։ Ի հարկե կարելի յե, բայց այդ բանը ցավագին հարված կը հասցնի ամբողջ տնտեսությանը։ Այժմյան տնտեսությունն՝ առանց առևտրի կառավարվել դեռ չի կարող։ Մեզնում վոչ միայն քաղաքն և առուտուր անում գյուղի հետ, այլև գյուղը գյուղի, քաղաքը քաղաքի հետ։

Այժմյան հասարակությունն ինքն իր մեջ զանազան ճյուղերում խիստ մասնագետ ե դարձել. Բազմաթիվ նաֆթ են արդյունաբերում, Մոսկվայում՝ կոշ-

կեղեն պատրաստում, Դոնի ավազանում ածուխ, Վլադիմիրում և Իվանո-Վոզնեսենսկում մանածագործական ապրանք, Աստրախանում ձուկ են վորսում, Սարատովում՝ բույսերից ձեթ պատրաստում, Վրաստանում մարգանեց հայթհայթում, վոլգացիք ցորեն են ցանում, հյուսիսաբանկները՝ աճառ և վուշ, Թուրքեստանցիք՝ բամբակ, Երիվի գյուղացիք՝ խաղող և այլն։ Նրանք բոլորն էլ իրենց ապրանքը ծախում են և ուրիշներից գնում, ինչ վոր իրենց պետք է։

Հենց այս է շուկան։

Յեթե առևտրական յերակները խանգարվել են, տնտեսության գործը դժվարանում է. որինակ՝ վուշ մշակողին դժվար է իր վուշը վաճառել, մինչդեռ նա հենց այն նպատակով է մեծ քանակությամբ ցանել, վոր վաճառի։ Ֆաբրիկայում դեզ-դեզ ապրանք է թափված, մարդ չկա, վորին վաճառես (առևտրական յերակներ չկան, կամ վատ են), մինչդեռ վառելիքի, հում նյութերի արժեքը, ինչպես և աշխատավարձը պետք է վճարես։

Արդի հասարակությունը յերկար կառավարվել չի կարող առանց առևտրային յերակների բավարար քանակության, իսկ մասնավոր առևտուրը վերացնելը կարելի յե միայն այն դեպքում, յեթե հնարավոր լինի նրա տեղը պետականը և կոոպերատիվը դնել։

Ահա թե ինչու Խորհրդային իշխանությունը թույլ է տալիս մասնավոր խանութներ, մագազիններ, կրպակներ բանալ, առուտուր անել սայլերով, թաբախներով, տկերով և այլն։ Ի՞նչ պետք է աներ մեր գյուղացին, յեթե մենք արգելեյինք բաղարը, տոնավաճառը, վորոնք այնքան շատ են գավառական քաղաքներում ու

գյուղերում։ Թագուն առուտուր անել. բայց այդ էլ միշտ ձեռնտու չե, այլև վտանգավոր է։

Ահա այսպես Խորհրդային իշխանությունը թույլատրեց արդյունաբերական և առևտրական կապիտալիստների գոյությունը։ Նա ասաց՝ առուտուր արեք և արտադրեցեք։

Աչը մենք այն էլ ենք հասկանում, վոր բուրժուան վոչ կարտադրի, վոչ էլ առուտուր կանի, յեթե ոգուտ չունենա։

Պետք եր ուրեմն թույլ տալ մասնավոր անձերին, վոր կապիտալիստ դառնան, այսինքն այնպիսի մարդիկ, վոր շահագործում են բանվորներին և ապրում նրանց հավելյալ արժեքով։

Ահա թե ինչու մեր այժմյան տնտեսական կարգը կոչվում է պետական կապիտալիզմ։ Խորհրդային իշխանությունը դիտե, վոր մի վոստյունով մինչև սոցիալիզմը չես թռչի, վոր սոցիալիզմին մենք կըհասնենք տարեցտարի բուրժուազիայի դեմ վարած կռվի հետևանքով։

Ուստի Խորհրդային իշխանությունը թույլ է տալիս կապիտալիզմը խորհրդային հասարակության մեջ, իսկական կապիտալիզմ վարձու բանվորով նրանց շահագործությամբ և այլն, բայց միաժամանակ իր ձեռքումն է պահում ամենակարևոր բարձունքները, վորտեղից և ամբակոծում է բուրժուազիային։

Մեզնում խոշոր արդյունաբերությունը՝ գրեթե իր ամբողջությամբ գտնվում է պետության ձեռքում. մերն են փոխադրությունը, բանկերը, ինչպես և պետական ամբողջ ապպարատը։

Մենք վատ չենք գինված և յեթե չհորաջենք

այլ ջանքով ուսանենք, մեր հաղթանակը կապիտալիզմի վրա ապահովված է։

Բայց քանի որ կապիտալիզմը պահում է իր գոյությունը, մենք մեր բոլոր ուժերով ձգտում ենք այնպես անել, որ նրանց առավելագույն ոգուտն ըստանա բանվորա-գյուղացիական հասարակությունը։

Այդ բանին ինչպես կարող ենք հասնել. կապիտալիստներին շահագրգռելով պես-պես ոգուտներով։ Որինակ՝ մենք կարող ենք ֆաբրիկան կապալով տալ այն կապիտալիստին, որ կբհամաձայնի գյուղացու համար պիտանի ապրանք՝ և որ թե նեպմանների համար ճոխության առարկաներ պատրաստել։

Մենք կարող ենք վարձավճարն իջեցնել այն դեպքում, յեթե կապիտալիստը տնտեսության սապոն է պատրաստում տուալետի սապոնի փոխարեն, հասարակ կոշիկ՝ շևրոյի և խրոմի կոշիկների փոխարեն, աշխատավորների պահանջած կոպիտ մահուդներ՝ նեպմանների նուրբ մահուդի փոխարեն։

Առայժմ քանի որ առանց կապիտալիզմի չենք կարող կառավարվել, պետք է այդ կապիտալիզմը դնենք այնպիսի հունի մեջ, որ ձեռնտու յե Խորհրդային պետության։

Հենց այստեղից է և պետական կապիտալիզմի անունը։

Խոշոր և արդյոք մասնավոր կապիտալը ՍԽՀՄ մեջ. նա չափազանց ուժեղ չէ, վորեսզի հաջողվի մեզ յերբևիցե նրան վերջնականապես դուրս քշել։

Այս հարցին պատասխան տալը շատ ել հեշտ չե, վորովհետև մասնավոր կապիտալը հաշվառման այնքան ել մատչելի չե, սակայն այնուամենայնիվ մենք ունենք ավելի կամ պակաս ստույգ թվեր։

Արդյունաբերությունից սկսենք.

Յեթե վերցնենք արտոնյալ արդյունաբերությունը (16 հոգուց վոչ պակաս բանվորով և մի շարժիչ մեքենայով և վոչ պակաս 30 բանվորով առանց շարժիչ մեքենայի), կը տեսնենք, որ մասնավոր ձեռնարկություններն ամբողջ արդյունաբերության՝ մոտավորապես 4 տոկոս են արտադրում և զբաղեցնում են բանվորների մոտավորապես 4 տոկոսը։ Այդ նշանակում է, թե մենք 24 անգամ ավելի ուժեղ ենք մասնավոր կապիտալից։ Մանր արդյունաբերության մեջ ընդհակառակը, համարյա բացառապես մասնավոր սեփականատերերն են իշխում՝ տնայնագործները և արհեստավորները։ Խոշոր արդյունաբերությունն արտադրում է յերեք անգամ ավելի, քան արտադրում են տնայնագործականն ու արհեստավորականը և ապա ամբողջ արդյունաբերական արտադրության այդ մի քառորդը գրեթե ամբողջովին մասնավոր-սեփականատիրական է։

Զմոռանանք, որ հարյուր հազարավոր տնայնագործներ և արհեստավորներ այն վիճակումն են գտնվում, որ նման է միջին գյուղացիականին և նույնիսկ չունևորների վիճակին, նրանք վոչ վոքի չեն շահագործում, իրենց աշխատանքովն են ապրում, պատրաստված գործվածքները սովորաբար եժան գնով ծախելով ապրանքառուին։ Տնայնագործներն ու արհեստավորները բնակչության այն խավն են, որ մեծ մասով Խորհրդային իշխանության թշնամաբար չի վերաբերվում և որ՝ խոշոր բուրժուազիայի դեմ մղվող կռվի մեջ պրոլետարիատի և գյուղի միջակների—չունևորների կողմնակիցն է։

Վերջապես առևտրի մեջ մասնավոր կապիտալը շատ խոշոր տեղ է բռնում։

Միայն քաղաքներում և քաղաքատիպ ավաններում վիճակագրական ցուցակագրությունը 281,000 առևտրական հիմնարկ գտավ, որից 206,000 պատկանում է մասնավոր անձերի։

Առևտրական հիմնարկների այդ ահագին թիվը բաց էր թողնում ապրանքների 100 մասից 64-ը, մինչդեռ պետությանը և կոոպերացիային բաժին է ընկնում 36 մասը. ուրիշ խոսքով առևտրի մեջ՝ մասնավոր կապիտալը գրեթե յերկու անգամ ավելի զորեղ է մեր առևտրից։ Այդպես էր 1923 թ. սկզբներում, սակայն այժմ մասնավոր առևտուրը՝ պետական և կոոպերատիվի համեմատությամբ մի փոքր պակասել է, բայց դյուղում նա ավելի ուժեղ է, քան թե քաղաքում։

Առևտրի շրջանում թշնամին զորեղ է և մենք պետք է ջանք դնենք կոոպերատիվի ամրապնդման վրա առանց ձեռքներս ծալելու։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/3 1922
Ереван, Абовяна
Ս. ՍՅՈՒՆԻ ԱՆՎԱՆ

2. ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄ

Նախընթաց զրույցի մեջ մենք ասում էյինք, վոր Խորհրդային իշխանությանն ոգուտ չէ մեկ անգամից ազդայնացնել բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները, վերացնել մասնավոր առուտուրը։

Հապա ինչպես բացատրենք, վոր մենք՝ այնուամենայնիվ, ձեռք քցեցինք համարյա ամբողջ արդյունաբերությունը և ցրեցինք շուկաները՝ առևտուրն արգելելով։

Այստեղ մի մեծ սխալ չի՞ կատարվել։ Կամ գուցե այժմյան քաղաքականությունն է սխալ։

Մենք իսկույն կըտեսնենք, վոր թե հին և թե նոր քաղաքականությունն ուղիղ էյին։

Պետք է լավ հիշել, վոր մեր քաղաքականությունը մի ենուենը չի կարող մնալ յերբ պարագաները փոխվում են։

Կյանքի մեջ միշտ այդպես է. ինչ վոր այսոր լավ է, վաղը վատ է յերևում, և ընդհակառակը։

Առնենք մեր հին տնտեսական քաղաքականությունը։ Նա հիրավի շատ բանով ուղղակի հակադիրն է այժմյան քաղաքականության։

Արդյունաբերությունից սկսենք.

Այժմ մենք տնայնագործներին և արհեստավորներին թույլ ավինք աղատորեն աշխատել, կապիտալիստներին ֆաբրիկաներ, գործարաններ ենք տալիս,

վորոնք մեզ համար՝ առայժմ բեռ եյին, իսկ մինչև 1921 թ. մենք 3 տարում ազգայնացրինք գրեթե ամբողջ արդյունաբերությունը՝ մասնավոր կապիտալիստներին համարյա բան չթողնելով։ Այդ ազգայնացումը հարկադրական եր. մեր կուսակցությունը չեր կամենում գրավել բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները. նա՝ ընդհակառակն, ասում եր թե պետք է ազգայնացնել միայն ամենախոշոր և կարևորագույն հիմնարկները, վոր բանը այնքան ազգայնացման մեջը չե, վորքան՝ վերահսկողության։

Սակայն հեղափոխությունը պատերազմ է, իսկ մեր սոցիալիստական հեղափոխությունն այնպիսի պատերազմ եր, վորի ընթացքում քաղաքական հողի վրա վոչ մի հաշտություն չեր կարող լինել սպիտակ բանակայինների և հեղափոխական բանակի մեջ։

Մեր Հոկտեմբերն այն հեղափոխությունն եր, վորի դեմ պետք է վոտքի յելնեյին բոլոր կապիտալիստական և կալվածատիրական ույժերը՝ թե յերկրի ներսում և թե դրսում։

Մինչ մենք կառուցանում եյինք մեր նոր պետությունը, ռուսական բուրժուազիան՝ կալվածատերերի և գեներալների հետ միասին, ինչպես և կապիտալիստական պետությունները, պատրաստվում եյին զինված ձեռքով խեղդել Խորհրդային Հանրապետությանը։

Մեր յերկիրը շրջապատված եր ամեն կողմից արյուն ռուշտ թշնամիներով։

Հյուսիսից ատամ եյին կրճտացնում ֆինլանդական բուրժուազիան և Յուդենիչը, Արևելքից խփում եյին Չեխո-Սլավակները, Յապոնիան և Կոլչակը, Հարավից՝

Ֆրանսիան, Կրասնովի, Դենիկինի, Վրանգելի հետ միասին, Անգլիան՝ Բաքվի ազգայնականների և Կովկասի մենշևիկների հետ միասին, Ծայրագույն Հյուսիսում՝ Անգլիան Չայկովսկու հետ միասին կայլն։

Մեզ պաշարել եյին ամեն կողմից թշնամի պետությունները։ Մենք վոչ բան եյինք ստանում արտասահմանից և վոչ կարողանում եյինք բան ուղարկել արտասահման։ Այդ դեռ քիչ է. մեզնից հակահեղափոխությունը կորզեց այնպիսի նահանգներ, վորպիսին Բաքուն է իր նաֆթով, Դոնի ավազանն՝ իր ածուխով, Ուրալն՝ իր մետաղով, Սիբիրը՝ յուղով, Վոլգայի ձախ ափը՝ ցորենով, հացառատ Ուկրայինան։ Սկսվեց լարված և անողոք կռիվ։

Մենք գիտեյինք, վոր հաղթելու շատ շանսեր ունենք, իսկ բուրժուազիան հաստատ հավատում եր մեր պարտությանը, հույս դնելով անգլո-ֆրանսական հզոր պաշտպանության և իբրթե գյուղացիների հակախորհրդային տրամադրության վրա։

Ամեն մի ֆաբրիկանտ՝ այսպես թե այնպես մասնակցում եր պատերազմին մեր դեմ կամ Կոլչակի և Դուտովների մոտ փախչելով, կամ մասնակցելով ներքին հակահեղափոխական կազմակերպություններին և կամ՝ լավագույն դեպքում, սահմանափակվում եր սաբոտաժով։

Ահա թե ինչ պարագաներում եր կատարվում արդյունաբերության ազգայնացումը։

Ֆաբրիկանտը փախչում եր արտասահման կամ Կոլչակի մոտ. հո չեմ թողնի ֆաբրիկան անխնամ, բաղդի քմահաճույքին. տեղական իշխանությունն ազգայնացնում եր այն։

Ֆաբրիկանտը բռնվում էր հակահեղափոխական գործողությունների մեջ. հո չէր կարելի այդպիսի մարդու ձեռքում թողնել ամբողջ ձեռնարկությունը, վորովհետև զենք կըդառնար նրա համար կռվելու Խորհրդային իշխանության դեմ. այդ ձեռնարկությունը աղդայնացվում էր։

Կամ թե՝ ֆաբրիկանտը սաբոտաժ (նենգադուլ) է անում. նա բացարձակ կերպով գեներալների կողմը չէր բռնում, բայց նրանց աջակցում էր իր նենգադուլով՝ չվճարելով աշխատավարձը բանվորներին, կըրճատելով արտադրությունը հում նյութի կամ վառելիքի պակասության պատրվակով. և վերջապես ուղղակի կանգնեցնելով ֆաբրիկան այս կամ այն պատրվակով։

Այդպիսի դեպքերում Խորհրդային իշխանությունը փորձում էր «ուղղել» նենգադուլ անողին բանակցություններով և նման միջոցներով, սակայն վերջի-վերջո պետք էր ֆաբրիկան աղդայնացնել։

Հաճախ գործարանի գույքը եժանագին վաճառելու դեպքեր եյին լինում, այն՝ ինչ վոր կոչվում է փեշի տակից։

Ֆաբրիկանտը ձևանում էր, վոր ինքն աղնվաբար է աշխատում Խորհուրդների հետ, սակայն ժամանակ ծախսում էր վառելիքի նյութերի, պատրաստի գործվածքների պաշարները, արժեքները վոսկի և ակնեղեն էր դարձնում, անցկացնում արտասահման և վերջապես ինքն էլ նրանց յետևից էր գնում։ Խորհրդային տնտեսության թալանն էր այս։ Մնում էր մեզ ֆաբրիկան աղդայնացնել։

Վերջապես ֆաբրիկանտներն իրենք ղդացին հետզհետե, վոր իրենց ձեռնարկությունը բանեցնելն անոգուտ է դարձել, վորովհետև մենք առուտուրն արդելել եյինք, մինչդեռ ֆաբրիկանտը ֆաբրիկան բանացնում է մեկ նպատակով, այն է՝ պատրաստված ապրանքը վնասով ծախել։

Ահա թե ինչպիսի պատճառներ կային արդյունաբերությունը լայն կերպով աղդայնացնելու։

Այստեղ պետք է դնել նաև այսպիսի փաստեր. ֆաբրիկանտը չի ցանկանում բանի տեղ դնել բանվորական վերահսկողությունը, Աշխատողկոմի, Արհմիությունների որդանները եայլն. հետևանքը աղդայնացումն է լինում։ Շատ մեծ դեր խաղաց և այն փաստը, վոր 1920 թվին մենք արդեն չունեյինք վոչ նաֆթ, վոչ ածուխ, բացի ընդ Մոսկովյան վատ նաֆթից, վոչ փայտ կարելի յեր ձեռք բերել պահանջվող քանակությամբ, վոչ հում նյութ ու մթերք և վերջապես վոչ էլ բանվորներ, վորոնք մեծ մասով գյուղերն եյին ցրվել և կամ քաղաքներում սկսել եյին մասնավոր պատվերներով պարապել։

Այստեղ արդեն այն կապիտալիստն էլ վոչ մի լուրջ գործ անել չէր կարող, վոր կըկամենար իսկ Խորհրդային իշխանության ժամանակ էլ շարունակել իր գործարանային աշխատանքը։

Իսկ յերբ հիմնարկությունը բանացնել չի կարելի, նա այլևս ֆաբրիկա չէ, այլ զանազան իրերի պահեստ։

Այն ժամանակ վաճառանքն արդելված էր և Խորհրդային իշխանությունն աշխատում էր ամեն ինչ իր պահեստները հավաքել, վորպեսզի պետության համար ամենամեծ չափով ոգտագործեր։ Յերբ ֆաբրիկան չի բանում, բայց նրանում կան ամեն տեսակ պատրաստի գործվածքներ և կիսաարդյունքներ, Խորհրդային

իշխանությունն այդ ֆաբրիկաները հայտարարում եր պետության սեփականություն։

Ահա այն գլխավոր պատճառները, վորոնց հետևանքով ֆաբրիկաները, գործարանները, հանքերն ու մյուս արդյունաբերական ձեռնարկությունները գրեթե գլխովին աղդայնացան։

1918, 1919, 1920 թվականներին արդյունաբերական բուրժուազիան այս կերպ զինաթափվեց անտեսապես։

Ինչ վերաբերում է առևտրի արգելմանը, այդ առաջ յեկավ հատկապես մեր սոսկալի աղքատության հետևանքով։

Մենք արդեն ասացինք, վոր սպիտակ բանակայինները Անգլիայի, Ֆրանսիայի և մյուս իմպերիալիստական պետությունների հետ միասին, կենդրոնից կտրել եյին ամենակարևոր արդյունաբերական և հացառատ շրջանները։

Նաֆթ են արդյունահանում Կովկասն ու Եմբեն, և այդ բոլոր շրջանները մատչելիության սահմաններից դուրս եյին, մինչդեռ կարելի՞ յե առանց հանքային հեղուկ վառելիքի կառավարվել, թեկուզ այնտեղ, վորտեղ ներքին այրման շարժիչներն են բանում։

Ածուխ է արդյունահանում գրեթե բացառապես Դոնի ավազանը. ընդ Մոսկովյան ավազանը վատ վորակի ածուխ է տալիս, և մինչև իսկ յերկաթուղային փոխադրության յենթակա չէ, թեկուզ՝ համեմատաբար կարճ տարածության վրա։

Մինչդեռ համարյա մեր ամբողջ արդյունաբերությունը և յերկաթուղիների մեծ մասը ածուխով են կանգուն։ Հարավում և Ուրալում չուգուն և հալվում,

բայց այդ յերկու շրջանն եկ «արտասահման» դարձան և մենք ստիպվեցինք կառավարվել Մերձոկեան լեռնային շրջանի գործարանների չնչին հալոցքով։ Ախր չուգունի կարիք ունեն արդյունաբերության բոլոր ճյուղերը, գյուղատնտեսությունը, քաղաքն ու գյուղը։

Բամբակագործական արդյունաբերությունից, վոր ամենամեծն է ՍԽՀՄ, կտրված եր Թուրքեստանը, վորտեղ բամբակ է մշակվում։

ՍԽՀՄ հյուսիսային կես մասը միշտ կարիք եր զգում բերովի հացի և այդ հացը գնում եր Ուկրայնայից և Վոլգյան շրջանից. սակայն սպիտակ բանակն ամրացավ Ուկրայնայում և հաճախ ընդհատում եր մեր կապը Վոլգայի ցորենաշատ ձախ ափի հետ։

Արդյունաբերությունը վատ եր աշխատում, յուրաքանչյուր կիսամյակին գործվածքների արտադրությունը պակասում եր, հին պաշարներն արագապես սպառվում եյին։

Ահա թե ինչ վիճակի մեջ ընկավ մեր յերկիրը պաշարման հենց առաջին որերից։

Ի՞նչ պետք է անեյինք։

Այն՝ ինչ վոր անում եյին բոլոր յերկարատև պաշարված ամրոցներում, ինչ վոր անում եր Գերմանիան, յերբ պատերազմի ժամանակ ամբողջ աշխարհից կտրված եր՝ հյուսիսից, արևելքից և արևմուտքից։

Պետք եր հաշվի առնել բոլոր անհրաժեշտ բաները հաղթության համար, կողպեքով փակել, պահել և բաշխել այնպես, վոր պատվով տանեյինք պաշարումը, վոնդեյինք թշնամուն, մեկ խոսքով՝ հաղթեյինք։

Բայց բաշխելու համար նախ՝ պետք եր ստանալ այն, ինչ վոր բաշխվելու յենթակա յեր։

Ինչպես կարելի չէր ստանալ։

Կամ գնելով, կամ յուրացնելով—խլելով։

Սակայն գնելու համար բավարար փող չկար։ Արդեն կերենսկու ժամանակներից, Հոկտեմբերյան հեղափոխության մոտերքում, գներն՝ ըստ Մոսկվայի, $7^1/_2$ անգամ բարձր էին նախապատերազմյան գներից, իսկ պատերազմի վերջերին, փետրվարյան հեղափոխության մոտերքում, նրանք նախապատերազմյան գներից բարձր էին $3^1/_3$ անգամ։

Գետական ծախքերն արդեն 1916 թ. ծածկվում էին $^3/_4$-ով (76 տոկ.) փոխառությամբ և թղթադրամ բաց թողնելով, իսկ 1917 թ.՝ մենշևիկների և ես-երների ժամանակներում, ավելի քան չորս հինգերորդով։

Գնելու համար միջոց չկար։

Ուրեմն պետք էր վերցնել հացը, միսը, ձուն, վուշը, բամբակը, կաղինը, մեկ խոսքով՝ այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ էր բանակը, քաղաքի բնակիչներին, պրոլետարիատին, հիվանդներին կերակրելու, հագցնելու համար, վոր պահեյինք դպրոցներ, հիվանդանոցներ, ուսուցիչներ, բժիշկներ և այլն, և այլն։

Ցեղ մենք մացրինք պարենի մասնատրումը, վորի համաձայն գյուղացի սեփականատերը պետք է տար Խորհրդային կառավարությանն իր ունեցածի բոլոր ավելցուկը, այսինքն՝ այն ամենը, ինչ վոր մնում էր անձնական գործածությունից, ցանքից և տնտեսության անհրաժեշտ կարիքներից դուրս։

Հարկ չկա ասելու, վոր գյուղացին հաճությամբ չէր տալիս պարեն մասնատրումն. ընդհանրապես չէր էլ տա, յեթե Խորհրդային իշխանությունն ուժի չդիմեր պարենավորման ջոկատների միջոցով և յեթե նա

չշահագրգռեր աղքատին, վոր ոգներ կուլակ կողոպտչին «կողոպտելու» գործում։

Այժմ մտածենք՝ ինչ կլիներ, յեթե պարեն մասնատրման ժամանակ թյուլատրելի լիներ ազատ առուտուրը։ Ինչպես հայտնի է, մասնատրում կատարելու համար վորոշ ժամանակ էր տրվում և Գարժողկոմն ստանում էր այն՝ սովորաբար, ամբողջ տարվա ընթացքում։

Ապա ուրեմն՝ յեթե ազատ առուտուրի դեպքում պարենավորման ջոկատը գար գավառը հացի և կերի (фураж) հունձից կես տարի հետո, նա գյուղացոց մոտ ավելցուկ կըգտներ։

Ի հարկե չէր գտնի, վորովհետև գյուղացին ավելցուկը ծախած կլիներ։ Դե գնա ու հետո իմացիր, թե ով ինչքան է ծախել։

Ըստ մասնատրման ստանալու միակ հնարավորությունն էր արգելել առուտուրը, արգելող ջոկատներ դնել և այդպիսով պահպանել ավելցուկը գյուղական տնտեսության մեջ։

Հենց այդպես էլ վարվեց Խորհրդային իշխանությունը,

Այդ պետության ոգին էր, վորովհետև առանց հացի և կերի չես պատերազմի, վոչինչ էլ չես արտադրի։ Գարեն մասնատրումն անհրաժեշտ էր նաև բանվորների համար, վորովհետև շուկայի մթերքի գները շատ բարձր էին, ուստի և փայով հացը ապրելու հնարավորություն էր տալիս բանվորներին։ Ճիշտ է, տոմսերով հացի լրիվ քանակը չէր տրվում, այնուամենայնիվ տրված հացի խնայողության մի յերրորդ մասն էլ ահագին ոգնություն էր։ Խոշոր և առանձնա-

պես կարևոր ձեռնարկություններում բանվորներն ա-
լյուրը՝ նույնիսկ ամբողջությամբ եյին ստանում ան-
հրաժեշտ կիսաքաղց կարիքների սահմաններում։ Այս-
պես եր դրված պարենավորման մթերքների «ազատ
առևտրի» գործը։ Մենք փոխեցինք այդ ազատությու-
նը, մթերքը տոմսակով բաժանելով, նկատի ունենա-
լով թե ում պետք է ավելի տալ, ում պակաս, նա-
յելով թե ստացողը ինչ դեր ունի հեղափոխության և
պաշարված ամրությունների պաշտպանության գոր-
ծում։

Իսկ ինչպես եր դրված արդյունաբերական գործ-
վածքների խնդիրը։

Այստեղ պետք է ասենք, վոր պատերազմական
տարիներում արդյունաբերությունը խիստ կրճատեց
խաղաղ ժամանակի առարկաների մշակումը, բայց սուր
կերպով ընդարձակեց ռազմական արտադրությունը։

1917, 1918 և հետագա տարիներում՝ մինչև Նեպը,
արդյունաբերությունը շարունակ ընկնում եր։
Չիթ, մահուդ, կոշկեղեն, հագուստ, նպարեղեն, սապոն,
մեխ և այլն, շատ քիչ կար։

Այս ամենը և գյուղն եր պահանջում և՝ քաղաքը։
Յեթե այդ ապրանքների ազատ առուտուրը թույլ տա-
յինք, այնպիսի բարձր գին կըշորթեյին, վոր բան-
վորի գրպանը թյուլ չեր տա։ Գյուղում նրանք միայն
կուլակներին բաժին կըդառնային և ամբողջ ապրան-
քը կընկներ բուրժուաների, սպեկուլյանտների, ապրան-
քառուների և այլ կողոպտիչների ձեռքը։

Մինչդեռ Խորհրդային իշխանությունը պետք է
բանակի և՝ հնարավորության սահմաններումը, ար-
դյունաբերող բանվորների համար կոշկեղեն, հագուստ,

սապոն և ուրիշ կարևորագույն իրեր հայթհայթեր և
գյուղը մեխ, չիթ, սապոն, լուցկի ուղարկեր, վորպես-
զի գեթ մի կերպ ոգնած լիներ գյուղացիներին, վո-
րոնք պարենի մասնատրում եյին տալիս։

Պարզ է, թե այդ առարկաները չեր կարելի ա-
զատ ապրանքատուրյի մեջ թողնել։

Հարկ չկա նույնիսկ խոսք բանալ և այնպիսի
իրերի մասին, ինչպիսիք են նաֆթը, ածուխը, մե-
տաղը և ուրիշ շատերը։

Այդ ամենը մենք հարվի եյինք առնում՝ բաշխե-
լով մեր սեփական ծրագրով։

Ահա թե ինչու այն ժամանակ առևտուր չկար,
ահա թե ինչու Խորհրդային իշխանությունը՝ նույն-
իսկ կոոպերացիան վերածեց բաշխման որգանի, վոր
գործում եր Պարժողկոմի ղեկավարությամբ։ Այս ամե-
նի մասին կարող են ասել թե պետության հաշվառած
իրերը, այնուամենայնիվ անցնում եյին Սուխարևկա,
գողություն եր կատարվում, բաշխումն՝ նույնիսկ պե-
տական իշխանության ույժերով, միշտ և ամենուրեք
սխալ եր, անհաջող, անոգուտ պետության համար։

Մենք այդ առարկությանը կըպատասխանենք ա-
ռանց այլևայլության։ Ի հարկե, մանուկ պետությունը
չի եկ կարող միանգամից գործն այնպես դնել, վոր գո-
ղություն չլինի, վոր հաշվառած ապրանքը սրիկա-
յաբար չթռչի Սուխարևկա, վոր պարենավորման ջո-
կատները հաց տանող գյուղացիներին բաց չթողնեն և
այլն։ Բանը նրանումը չե, վոր պարենը և արդյունա-
բերական ապրանքը վաճառվում եր, չնայելով արգել-
քին, այլ նրանումն է, վոր վաճառվում եր համեմատաբար
քիչ քանակությամբ։ Յեթե առևտրի ազատություն լի-

ներ, ամբողջ ապրանքն արագությամբ կըչքանար, մինչև շուկաների ցրումով, կարգի տակ դրած ապրանքների վաճառքի արգելումով, փեշի տակից եյին ծախում, վախենալով շուրջկալի հանդիպեն, ապրանքը կորցնեն հայլն։

Ազատ առևտրի դեպքում գյուղացիները հացն արագությամբ կըծախեյին, մինչդեռ պարենամատակարման, պարենջոկատի և արգելող ջոկատների ներկայությամբ հայլն, միայն պարենի մի մասն եր ծծվում շուկայում. մյուս մասն՝ այնուամենայնիվ պետության ձեռքն եր ընկնում։

Միայն այսպիսի քաղաքականությամբ կարելի յեր դիմանալ պաշարված ամրությունից դուրս գալ գրոհի և բոլոր թշնամիներին Սև, Հյուսիսային, Արևելյան ծովերը թափել։

Գյուղացու դրությունն այդ տարիներում շատ դժվար եր. նա տալիս եր ավելցուկը, կատարում եր աշխատանքի պարտքը, քաղաքից գրեթե բան չեր ստանում, սակայն նա պահեց Հոկտեմբերին նվաճած հողն ու ազատությունը կալվածատերից, իսպրավնիկներից (դավառապետ) և զեմստվային պետից։ Այս եր ռազմական կապը բանվորների և գյուղացիների մեջ, կապ՝ հակահեղափոխության դեմ, այսինքն՝ կալվածատերերի, ֆաբրիկանտի, գեներալի, տերտերի և ոտարյերկրյա կապիտալի դեմ։

«Ռազմական Կոմմունիզմի» տարիները շատ ծանրը պատերազմի տարիներ եյին, յերբ պետք եր պատերազմել առանց վինտովկի, կռվել տիֆի դեմ՝ առանց սապոնի, սառնամանիքի դեմ՝ առանց վառելափայտի, քաղցի դեմ՝ ստամոքսի սնքումով։

Յեվ այդ պատերազմում մեր պետությունը ռազմական եր և կառուցված ըստ ռազմականի։ Նույնիսկ արդյունաբերության ամբողջ կառավարումը ամփոփված եր կենդրոնի ձեռքում, ի դեմս զանազան որգանների և հաստատությունների։

Կառավարման այդ ձևը կոչվում եր «գլավկիզմ», (գլխավորական), կամ՝ սակավ գործածական, «ցենտրիզմ» (կենդրոնական)։ Որինակ՝ ամբողջ արդյունաբերությունը յենթակա յեր արտադրական «գլավկների» կառավարմանը, վորպիսիք եյին՝ մետաղի գլխավոր վարչությունը, ցենտրոտեքստիլը, գլխաքիմը, կենդրոնոճառը, գլխալուցկին հայլն։

Այդ կենդրոնները վարում եյին իրենց յենթակա գործարանները, նրանց վառելիք, հում նյութ, պարեն, կեր, թղթադրամ հայհայթում, վերցնելով նրանցից պատրաստված ապրանքները։

Ֆաբրիկան, կամ նույնիսկ տրեստը, չեյին կարող բան գնել կամ վաճառել. նրանք պետք և մշակեյին միայն այն, ինչ վոր առաջարկվում եր կենդրոնից, միայն կենդրոնից ուղարկված հացն ու շաքարը բաց թողնեյին բանվորներին։ Արդյունաբերությունն ապրում եր կենդրոնի հրամանների համաձայն։

Կարելի չեր արդյոք ընդարձակ ազատություն տալ տեղական որգաններին։ Խոսքով կարելի յեր, իսկ գործով՝ միևնույն և, բան չեր դուրս գալ։

Ազատությունը լավ և, յերբ ազատորեն կարելի յե ձեռք բերել վառելիք, հում նյութ, մթերք, արտադրության գործիքներ, պարեն, կեր հայլն։

Սակայն յեթե առևտուրն արգելված և, յեթե բոլոր մեր թված հայթհայթման որգանների ձեռքումն և

գտնվում, յեթե բաշխվող առարկաներն այնքան քիչ են, որ անհրաժեշտ է նրանց բաշխել միայն կենդրոնական հայթհայթող որգաններին ծրագրով, հասկանալի յե, թե վոչ մի գործարանական վարչություն այլ կերպ վոչինչ չի կարող ստանալ, բայց յեթե իր գլխավոր վարչության միջոցով։ Այս գլխավորն է։

Բացի դրանից, պետք է նշել, որ դլավկիզմը գործ ուներ սակավաթիվ գործող ձեռնարկություններին հետ. մի հանգամանք, որ հեշտացնում էր կառավարելու խնդիրը։

Ի յեզրակացություն Ռազմական Կոմմունիզմին վերաբերող մեր զրույցի, մատնանշենք դրամի դերը։

Խորհրդային դրամանիշները, ինչպես շատերը կը հիշեն, շարունակ ընկնում ու ընկնում եյին. և որովհետև առևտուրն արգելված էր և շատ բան միայն տոմսերով էր արձակվում, ուստի և դրամն ընդհանրապես կորցրեց իր վաղեմի նշանակությունը։ Ամեն վոք գերադասում էր մթերք ստանալ, քան թե ընկնող դրամ, որ նույնիսկ՝ վոչ թե շաբաթներով, այլ նույնիսկ մի ավելորդ որ զրպանում պահելը վտանգավոր էր՝ կեժանանար։ Այդ ժամանակ, Խորհրդային իշխանությունը շատ թղթադրամ էր տպում, իսկ պարեն մասնատրումը տարեցտարի էլ ավելի՝ և՛ պարեն, և՛ կեր, և՛ հում նյութ էր տալիս արդյունաբերության։

Դրամի գինն իջնում էր և այնպիսի ամիսներ եյին պատահում, որ գյուղացությունը՝ որպինակ, հրաժարվում էր դրամով մթերք ծախել, բայց հաճությամբ ապրանքի փոխանակության էր գիմում։

Հանդես յեկավ Նեպը, առևտուրն սկսվեց և դրամը նորից իր վաղեմի նշանակությունն ստացավ։

---

3. ՇՈՒԿԱ

Յեթե մենք աչքի անցնենք մեր կյանքը. կիմանանք ամեն մի առարկայի ծագումը, որի հետ պետք է լինում գործ ունենալ, մենք բազմաթիվ կապեր կը զտնենք, որոնք մեզ կապում են ամբողջ աշխարհի հետ։ Այս սեղանի վրա, որի առաջը յես այս բոպեյիս նըստած եմ, մի սրվակ է դրված՝ մեջը թանաք. նա շինված է ապակու գործարանում, վրան մի շշանիշ, որ պատրաստված է թղթի գործարանում, վրան էլ մի մակագրություն՝ տպված տպարանում։ Սրվակի թանաքը պատրաստված է քիմիական գործարանում. սրվակի բերանը գոցված է խցանով, որ ստացված է արևադարձային խցանածառից, որ Յեվրոպա յեն բերել ովկիանոսի հսկաները և համապատասխան գործարանում դարձել են գլանակներ, որոնցով գոցվում են թանաքի, գարեջրի, կվասի, ձկան յուղի և այլ միլիոնավոր շշեր։

Իմ գրչակոթը շինված է փայտից, որ ձեռք է բերված մեր անտառում շրջաններից և պատրաստված է փայտեղենի գործարանում. ունի մետաղյա փոքրիկ գործիք, որ ձուլված է Հարավի կամ Ուրալի վորևե տեղում, և՝ ինչ որ մի գործարանում կլորել և դարձրել են գրչակալ։

Գյուղացին՝ որ կարծում է, թե ինքը ուրիշի հետ հաշիվ չունի, ինքն իր տերն է, չի էլ կասկածում

վոր իր հավերի ձուն, իր կովերի կաթը, իր խոզերի ապուխտը մատուցվում է անգլիական, ֆրանսիական բուրժուայի սեղանի վրա, վորոնք նախաճաշում են Լոնդոնում կամ Փարիզում։

Մեր գյուղացին շատ քիչ է խորհում թե վոքտեղից է կաշին, վոր բանվորները կոշիկ են դարձնում և ովքե շինել նրանց յերիզները և մետաղյա բեւեռները, վորոնցով ամրացած է կրունկը և փայտյա բեւեռները, վոր ամրացնում են կրունկը և այն թելը, վորով կոշիկ է կարված կաշիի կտորներից, այն մոմը, վորով թելն է մոմած։

Վոր մտածես, գլուխդ կըկպչի, թե՞ինչ բարդ կառուցվածք է գործ դրված, վորի հետևանքով գյուղացին հնարավորություն է ունեցել կոշիկ հագնելու։ Հիշենք վոր նրանք կարվում են գործիքների ոգնությամբ, վոր պատրաստվում են մեր գործարաններում և բերվում են արտասահմանից։

Հենց նույն պես-պես գործարաններում, ֆաբրիկաներում, արհեստանոցներումը չե՞, վոր պատրաստված են՝ նրա վրայի շապիկը, գոտին, վոր կապեց, սանրը, վորով սանրվեց, հայելին՝ վորի մեջը նայեց, հուշատետրը՝ վորի մեջ մատիտով գրեց վորևե տեղեկություն, ժամացույցը՝ վորին նայեց թե ժամանակը չե՞ կոոպերատորների ժողովին գնալու։

Իսկ գնդասեղներն ու ասեղները, սանրերն ու վարսակալները, յերիզները, կոճակները, ունելիքներն ու թավեքը, անթրոցն ու պուտուկը, հեշտայեռն ու գավթները, սրբիչները, ափսեները, պատառաքաղներն ու դանակները—այն ամենը, ինչի հետ վոր անենորյա գործ ունի մեր գեղջկուհի տանտիկինը. Մի՞թե այս

բոլորը պատրաստված չեն մեքենաներով, վոր արտասահմանից են բերվել, մի՞թե ամերիկան բամբակիցը չե այն չթի բաճկոնակը, վոր հաճախ հագնում է մեր գեղջկուհին, մի՞թե նա և իր ամուսինը, հայրը, յեղբայրը, քույրը, ամենքը, ամենքը, ամենքը կապված չեն բոլոր տեսակի արտադրությունների, բոլոր յերկիրների և ազգերի բանվորների հետ։

Ցեվ մի՞թե գյուղացիք գյուղացոց հետ շաղկապված չեն. մի՞թե հյուսիսարևելակ գյուղացին չի գնում այն ալյուրը, վոր բուսցրել են Վոլգայի ափերում կամ Ուկրաինայում, իսկ հարավարևելակ գյուղացիք փայտը հյուսիսից չե՞ն ստանում։

Պետք է՝ ինչպես հարկն է, հասկանալ, վոր արդի հասարակությունը պինդ հանգում է մասնագիտության վրա, աշխատանքի հասարակական բաժանումի վրա։ Աստրախանում և Մուրմանսկում ձուկն են վորսում ամբողջ ՍԽՀՄ համար. նույն Աստրախանում, Պերմի մոտերքում և Բախմուտում ամբողջ յերկրի համար աղ են հանում, Բազվում և Գրոզնում յերկրի խորքերից նաֆթն են դուրս ծծում, վոր վաճառեն ամենքին, ամենքին, ամենքին։ Դոնի ավազանում պեղում—հանում են ածուխի, անտրացիտի, կոքսի հրակայական դեղեր, վորոնցով սնվում են հազարավոր ֆաբրիկաներ, շոգեկառքեր, գործարաններ. Սամարայում Վոլգայի ցորենից են աղում ալյուրը, վոր հասնում է Մոսկվա և Լենինգրադ. Վլադիմիրում և Իվանո-Վոզնեսենսկում մանում են ու գործում. Մոսկվայում և Եկմբայում կոշիկ են կարում. Կալոմենսկի, Սորմովի, Պուտիլովի, Նեվայի, Խարկովի գործարաններում պատրաստվում են շոգեկառքեր և պես-պես

մեքենաներ. Թուրքեստանում ահագին քանակությամբ բամբակ են ցանում և շերամի վորդեր աճեցնում, իսկ Կալմիկների, Կիրգիզների տափաստաններն արոտատեղեր են ձիյերի և ուղտերի բազմաթիվ յերամակների, վոչխարների հոտերի. Խրիմում, Վրաստանում գինի յեն պատրաստում. մեծ քաղաքների մոտակա հողերն ել ծածկված են գազարի, կաղամբի, կարտոֆիլի բանջարանոցներով։

Յեվ ամենուրեք շատ ավելի յե արտադրվում, քան կարող ե գործածել ինքը՝ տնտեսատերը։

Խրիմցի հարուստ թաթարը կարող եր լոկ տալ խաղողի հյութի ավազանում, բայց տակառներ ու շշեր լցնելով ուղարկում ե զանազան տեղեր վաճառելու համար։

Ի՞նչ պետք ե աներ իր բամբակը Թուրքեստանցի-Դեկխանինը, յեթե նա չծախվեր։

Ել ինչի համար ե կաղամբի ընդարձակ արտեր ցանում ընդմսկովյան գյուղացին, յեթե նրան և իր բազմանդամ ընտանիքին բերքի մի տասներորդ մասն ել բավական կըլիներ։

Ամբողջ հասարակությունն աշխատանքը վեր ե ածել հատուկ մասնագիտությունների և նրանցից ամեն մեկով զբաղվում և հասարակության մի վորոշ մասը։ Արդյունաբերության մեջ բանվորները, գյուղատնտեսության մեջ գյուղացիք, ահա հիմնական բաժանումը. թե մեկը և թե մյուսն իր հերթին բաժանվում են մետաղագործների, քիմիկոսների, դարբինների, ժանձագործների, անոռնապահների, հողագործների, գինեգործների, պարտիզպանների, այգեգործների, վշագործների...

Տեխնիկայի և գիտության զարգացումը նպաստեց, վոր աշխատանքի հասարակական բաժանումը լայնանա ու խորանա, մեծացնելով արդյունքների արտադրությունը։

Առանձին արտադրողները հենց այն պատճառով, վոր իրենց համար բոլոր պետքականը չեյին մշակում և չեյին ել կարող մշակել, պետք ե իրենց աշխատանքի արդյունքները փոխանակեյին իրար հետ։

Արդի հասարակությունն առանց փոխանակության չի կարող կառավարվել։ Փոխանակության հողի վրա առաջ յեկող բոլոր հարաբերությունները մարդկանց մեջ կոչվում ե շուկայի հարաբերություն կամ կարճ՝ շուկա։

Տնտեսական լեզվի մեջ շուկա կարելի յե կոչել բոլոր տեսակի գնումներն ու վաճառումները, լինեն նրանք գնողին ապրանքն անմիջապես հանձնելով, զբաղվոր գործարքով, թե բանավոր գործարքով։ Ահա այդ շուկան իր որենքներն ունի, վորոնց խախտումով՝ նրանցից հակահարված կըստանաս անշուշտ։

Նրանցից գլխավորները թվենք.

Նախ և առաջ նշենք, վոր շուկան՝ շատ թե քիչ նորմալ վիճակ ունի, յերբ տվյալ ժամանակում պահանջն ու առաջարկն իրար հավասար են։ Որինակ՝ յեթե շուկա յեն յելնում յերկու կողմերը՝ արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, շուկայի ամենաառողջ դրությունն այն ե, յերբ գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը վաճառքի յեն հանում (առաջարկում են) մեկի և մյուսի համար պիտանի ապրանք միատեսակ արժեքի։

Այդ դեպքում՝ յերբ ապրանքային յերակները

լավ են, այսինքն համարեն աշխատող բավարար քանակությամբ խանութներ, կրպակներ, մագազիններ, մեծաքանակ պահեստներ և այլն կան, ամեն ինչ կըվաճառվի. ուրիշ խոսքով՝ արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների պահանջը հավասար կըլինի նրանց առաջարկությանը, ուրեմն շուկան կըհամապատասխանե արտադրության։

Իսկ յեթե ապրանքի առաջարկը գերազանցում է պահանջին, այդ դեպքում նրանց գներն սկսում են նորմալից դուրս գալ, իջնել, վորով հարված է հասնում այդ արտադրության։ Այդպես յեղավ՝ որինակ, 1923 թ., յերբ գյուղական ապրանքներն ավելի շատ յերևացին, քան թե պետք ուներ նրանց յերկիրը, իսկ նրանց արտահանությունն արտասահման դեռ կանոնավորված չեր։ Շատերն են հիշում, թե ինչպես ցածր եյին հաճարի գները, վոր հիվանդացին անդրադարձավ գյուղացիական տնտեսության վրա։

1924 թվին չթի, շաքարի, կոշկեղենի և ուրիշ շատ լայն սպառման ապրանքների առաջարկը խիստ յետ մնաց պահանջից. մագազինների առաջ պոչեր կազմվեցին, գլուխ եյին ջարդում ապրանք գտնելու համար։

Հետևանքն այն յեղավ, վոր գները բարձրացնում եյին և գնորդն իր դրամին այն չեր ստանում, ինչ վոր կարող եր ստանալ նորմալ գների ժամանակ։

Պահանջի այդ անհամապատասխանությունն առաջարկին մեծ ազդեցություն են թողնում մկրատի բացվածքի վրա։

Այսպես 1923 թվին և 1924-ի սկզբին մենք մեծաքանակ վաճառքի մկրատների լայն յերախ ունինք,

իսկ 1924 թ. ընթացքում համարյա ամբողջ մեր դիմացն են մեծաքանակ-հատավաճառային մկրատներ, այսինքն՝ հատավաճառի և մեծաքանակի գների տարբերությունն աճում եր։

Մկրատների մասին մենք դեռ խոսելու յենք հետո. առայժմ մենք կանգ կառնենք մի ուրիշ կարևոր հանգամանքի վրա, վորից կախված է շուկայի դրությունը՝ դրամի սիստեմի վրա։

Այժմ ապրանքը սակավ է ուղղակի փոխանակվում պահանջվող մի այլ ապրանքի հետ։ Սովորաբար նա փոխարկվում է դրամով, վորով՝ իր հերթին, կարևոր ապրանքն է գնվում։

Հենց ինքը՝ դրամը դառնում է ապրանք, վորովհետև իբրև վոսկի, արծաթ, պղինձ կայլ մետաղ, պատրաստվում է և նրա պատրաստության վրա բանվորական ուժ է ծախսվում։ Թղթադրամը միայն ժամանակավորապես է փոխարինում մետաղյա դրամին. որինակ՝ մեր չերվոնեցը ապահովված է վոսկով և ուրիշ ապրանքների արժեքներով։

Դրամը՝ ապրանք լինելով հանդերձ, տարբերվում է նրանից մի շարք հատկություններով, վորոնք դրամը հարմար միջոց են դարձնում փոխանակության համար։

Վոսկին քիչ տարածություն է բռնում (10 ռուբլանոց վոսկե դրամը և 10 ռուբլու աճար, կամ չիթ, կամ մատիտ), հեշտությամբ չի փչանում, հարմար է համարվում կայլն։

Վոսկին՝ միաժամանակ և հասարակ ապրանք է և ապրանք-միջոց փոխանակության, պահելու կայլն։

Չի կարելի վոսկին՝ իբրև երամ, վորոշ չափից ա-

վելի կորել. այլապես նրա մի մասը անգործադրելի կլինա, տնտեսության համար մեռած կապիտալ կլինի, ինչպես մի դազդյան, որով վոչ վոք չի ոգտվում։

Ինչպես վոր ֆաբրիկայում պետք է միայն այնքան բանվոր ունենաս, վորպեսզի գործվածքների պահանջվող քանակն արտադրես, իսկ ավելորդներն անելու գործ չունեն, այդպես էլ շուկայում. յեթե դրամը՝ իբրև շրջանառության և պահպանության միջոց, կարիքից ավելի յե, նրա ավելորդը նույնպես անելու գործ չունի։

Մետաղյա դրամի տեղը դնենք թղթադրամը, վորի հետ էլ գլխավորապես գործ ունի մեր յերկիրը։

Դրամի վերաբերմամբ ինչ է պետք, վորպեսզի շուկան ապրի, զարգանա վոչ հիվանդագին կերպով։

Ամենից առաջ՝ նրա հարկավոր քանակը։ Յեթե դրամը սակավ է, առուծախի գործարքները կանգ են առնում, հետևաբար ապրանքի շրջանառությունը կբռնատվում է. ուրիշ խոսքով՝ գյուղացիքն ու արդյունաբերողները իրենց ամբողջ ապրանքը չեն կարողանում վաճառել պատշաճ արագությամբ և գնել իրենց համար բոլոր կարևոր ապրանքները, թեև նրանք շուկայում կան։

Յերևակայենք հակառակ դրությունը. դրամն ավելի շատ է, քան պահանջվում է։ Այդ դեպքում նրանց գինն ընկնում է և դրամատերը վնաս է անում։

Արժեքներով ապահովված և կարևոր չափով բաց թողված թղթադրամը կայուն դրամ է, վոր շուկայի՝ այսինքն առևտրի զարգացման համար չափազանց նշանակալից է։ Մենք բոլորս էլ հիշում ենք թե՝ ինչ պատահեց 1924 թվականին, յերբ դրամական ռեֆորմը դեռ չէր կիրառված. վորքան դժվար էր այն գյուղացիների բանը, վորոնք իրանց մոտիկ խնայողական գանձարկղ չունեյին, այն բանվորները, վորոնց աշխատավարձն ընկնում էր միայն այն պատճառով, վոր նրանք չեյին հասցնում իսկույն գնել կարևոր իրերը, պարտքերը տալ, ինչպես խանգարվում էր կոոպերացիան իր «ապահովագրական» հավելումներով ապրանքների գների վրա։

1924 թ. մենք մեր անձնական փորձով համոզվեցինք, թե ինչ է նշանակում կայուն դրամանիշը։

Սակայն շուկան պետք ունի վոչ միայն կայուն ռուբլու այլև զանազան արժեք ունեցող դրամանիշների, կանոնավոր բաց թողնելուն։

Յերբ մանր դրամը շատ է իսկ խոշորը՝ սակավ, սաստիկ կաղում է գանձարկղների աշխատանքը, դրամի ընդունելությունը և ապրանքի բաց թողնելը. այլ կերպ ասած՝ առևտրական որգանների բաց թողնելու ունակությունն իջնում է, ապրանքապտույտը կրճատվում։

Ընդհակառակն՝ յեթե մանր դրամի պակասություն կա, այդ դեպքում գնորդը կամ պետք է գնի մանրադրամը (խուրդեն) չստանալու վտանգով, կամ հրաժարվի գնումից։ Ուրեմն՝ առաջին դեպքում այդ մի հարված է՝ գլխավորապես աշխատավորներին, վորոնց համար 5 կոպեկն էլ փող է, իսկ յերկրորդ դեպքում՝ կրճատվում է ապրանքապտույտը։

Սրա հետ մեկտեղ հաճախ ռոճիկն էլ տալիս են խոշոր դրամով 2—3, կամ նույնիսկ մեկ բանվորի. մանրելու համար պետք է փող վճարել. շահվում են սպեկուլյանտն ու մասնավոր առևտրականը, վորից ապրանք և գնում փողալի հասարակությունը, վնասն

եվ կրում՝ բանվորն ու ծառայողը, նրանց հետ եվ կոոպերացիան, վոր գործ ունի միայն հենց աշխատավոր գնորդների հետ։ Մանր դրամի պակասությունը՝ գլխավորապես, հարվածում և առևտրական մանր գործարքները, իսկ խոշոր դրամի պակասը՝ խոշոր գործարքները։

Խորհրդային իշխանությունն ամեն կերպ աշխատում և կանոնավորել դրամի շրջանառությունը, համաչափության մեջ դնելով դրամանիշների բաց թողնելը և շուկայի պահանջը։

Վերջապես շուկայի կյանքի մեջ կա մի կարևոր մոմենտ ևս, այդ առևտրական՝ թե մշտական և թե ժամանակավոր, բավարար խիտ ցանցի ներկայությունն է։

Գյուղացին գնում է իր գավառական կամ գյուղական խանութում կամ թե չե գավառական քաղաքի շուկայում, ավանում հայլն։ Շատ վաճառքները և գնումները նա հարմարեցնում է մի վորոշ ժամանակի, որինակ՝ տոնավաճառներին, վորոնք մեզնում շատ շատ են։

Գյուղական խանութպանը՝ սովորաբար կանխորեն գնում է իր ապրանքը կամ հարևան գավառական քաղաքի խոշոր հատավաճառից և կամ նահանգական քաղաքի մեծածախս-հատավաճառից, վոր՝ իր հերթին, գործ ունի խոշոր մեծածախս առևտրականի կամ ուղղակի գործարանների հետ։

Առևտրի մեջ խոշոր դեր է խաղում շատ փոքր շրջիկ մանրավաճառը (չարչին)։

Այդ առևտրական ցանցը ամբողջ յերկիրը կապում է մի տնտեսական հանգույցով և յեթե այդ ցանցը մի տեղից պատռվի, շուկան իսկույն կըզգա այդ պատռվածը. ապրանքը ճանապարհին կըկանգնի, տուռջ կրգան արգելքներ, ինչպես վոր լինում է յերկաթուղու հանգույցային կայարաններում կատաստրոֆի կամ վատ կարգադրության հետևանքով։

4. ՆԵՊԸ ՅԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեր Միության մեջ՝ մոտավորապես, 22 միլիոն գյուղական տնտեսություն կա։ Նրանք բոլորն եվ մանրը ու մանրագույն տնտեսություններ են, վոր արտադրում են հաց, բանջարեղեն, կաթ, մասամբ իրենց անձնական գործածության և մասամբ եվ ծախելու համար։

Մեր գյուղացին շատ փոքր, շատ համեստ պահանջներ ունի, սակայն առանց շուկայի նա այդ պահանջները բավարարել չի կարող։

Նրան պետք են մախորկա կամ լուցկի, կամ մեռաղ՝ տափանի համար, պայտ՝ ձիու համար հայլն։

Մինչև իսկ մեր խավար, անկիրթ գյուղացին անզոր է զգում իրեն, յերբ բաղաքի, քաղաքի, արդյունաբերության հետ կապերը կտրվում են. համենայն դեպս նստեք առանց մեխերի, առանց թիակի կամ կացնի, առանց ասեղի։

Ռազմական կոմունիզմի տարիներում կապը շուկայի հետ խզվեց և մեր գյուղատնտեսությունն ըստանց բնական տնտեսության հատկություն ձեռք բերավ, վորի ժամանակ տնտեսատերը իր խոշոր պիտույքները ինքն է արտադրում առանց շուկա դիմելու։

Գյուղացիները դադարեցին նախկին քանակությամբ բամբակ, վուշ, կանեփ, թութուն հայլն հայ-

լը՝ ցանել։ Ի՞նչ միտք ունի ունի վուշ ցանելը, յերբ գնող չկա, մանավանդ վոր նրա գնահատությունը չափազանց իջել է։

Ի՞նչ միտք ունի խոզ բուծանել, յեթե չես կարող վոչ վոքի վաճառել. հո չե՞ս բուծանի միայն քո գործածության համար։

1919 և 1920 թվականներին մեզնում շուկան սեղմվեց, թուլացավ և գյուղատնտեսությունը սահմանափակվեց միայն ճարի և կարտոֆլի մշակությամբ, այն էլ միայն անձնական գործածության համար։

Տնտեսությունն ամման ճանապարհի վրա դնելու համար անհրաժեշտ եր վերականգնել շուկան, վերականգնել արդյունաբերության և գյուղատնտեսության կապերը, քաղաքի և գյուղի, քաղաքների, գյուղերի խզված կապերը։

Պետք եր այնպես անել, վոր գյուղացիական 22 միլիոն տնտեսություններն սկսեին աշխատել ամբողջ յերկրի համար, վոր Թուրքեստանում բամբակ ցանեին, Մոսկվայի տակ կաղամբ և ուրիշ բանջարեղեն, Խրիմում խաղող, իսկ Պսկովի և Տվերի նահանգներում վուշ։

Յեվ նրանք հետ կըդառնային դեպի իրենց մասնագիտությունները, յեթե գիտենային թե շուկայում հնարավոր կըլինի ազատորեն վաճառել և ազատորեն գնել։

1921 թ. Խորհրդային իշխանությունը պարենի մասնատրումը պարենհարկի փոխելով՝ առևտրի ազատություն հայտարարեց վոշոշ սահմաններում. հետըզհետե այդ սահմաններն ընդարձակվում եին և այժմ

մենք գրեթե անսահման ազատություն ունինք գնելու և վաճառելու։ Սահմանափակվել միայն պարեն մասնատրումը պարենհարկի փոխելով, չեր կարելի։ Ի հարկե, պարենհարկն ինքնըստինքյան գյուղատնտեսական զարգացման համար մի խթան է, վորովհետև ապահովում է տիրոջը ավելցուկը, վոր մնում է նրան հարկի վճարումից հետո։

Յեթե նույնիսկ առևտրի ազատություն էլ չլիներ, միևնույնն է, գյուղացին պետք է աշխատեր ընդարձակել իր ցանքը, լավացնել տնտեսությունը այն հաշվով թե ավելցուկը կըծախի, թեկուզ թագուն։

Պարենի մասնատրումն ասում եր «տուր ամբողջ ավելցուկը»։

Պարենհարկը պահանջում եր՝ «տուր բերքի վորոշ մասը, մնացածը քոնն է»։

Այնուամենայնիվ տնտեսությունն առանց առևտրի ազատության չեր կարող վերականգնվել այնպես, ինչպես վոր վերականգնվում է վերջին տարիները։

Յեթե առևտուրն արգելված է, ուրեմն վաճառել պետք է թագուն։ Հապա փորձեցեք սուսիկ-փուսիկ վաճառել միլիոնավոր փութ վուշ, բամբակ, բուրդ։ Այդ հաց չէ, վոր միլիոնավոր գնորդների ձեռքն է ընկնում. արդյունաբերական հում նյութը մտնում է վուշի, բամբակի և այլ ֆաբրիկաներ, այսինքն միայն տասնյակ կամ հարյուրավոր սեփականատերերի ձեռքերը։

Այս դեռ քիչ է. արգելված առևտրի դեպքում՝ գյուղացին չի կարող իրեն համար կարևոր իրերը ձեռք բերել։ Չե՞ վոր պետական տրեստը չի կարող

Խորհրդային իշխանության վորոշումները խախտել և սուսուփուս ապրանք վաճառել գյուղացիներին. իսկ յեթե այդպիսի տրեստ գտնվի, վայրկենապես կըփակեն։ Ուրեմն գյուղացին պետք է գներ ամեն մի պատահական կողոպտողից, վորոնք պետությունից գողացած ապրանքն են ծախում. եվ չենք ասում՝ վոր գյուղացին հնարավորություն էլ չեր ունենա ընտրություն անել, պարզապես՝ ապրանքն էլ հերիք չեր անի։ Մինչև իսկ այժմ էլ՝ առևտրի ազատ ժամանակը, էլի բավական ապրանք չկա։

Միամտություն կը լիներ հուսալ թե՝ պետությունը բոլոր կարևոր բաները ինքը կըհայթհայթեր գյուղացությանը. մինթե հնարավոր է մեր սակավ դրագիտության մեջ հաշվի առնել թե ում և ինչ է պետք. այսոր ինձ պետք է բկատու (թորխ), վաղը՝ մի ֆունտ ձեթ, իսկ մյուս որը՝ տետրակ, վորի մեջ գրեմ կովին տալիք կերի հաշիվը։

Ահա թե ինչու Խորհրդային իշխանությունը՝ փոխելով պարենի մասնատրումը, մտցնելով պարենհարկը, առևտուրն ազատ հայտարարեց։

Քանի վոր մեզանում մանր տնտեսները միլիոններով են, նրանց հաշվի առնել, նրանց հետևել չես կարող։ Նրանց ընթացիկ կարիքները հոգալու միակ ճանապարհը շուկայի ճանապարհն է. վաճառեցեք և գնեցեք, ինչ վոր ուզում եք և յերբ վոր ուզում եք։

Առևտրի ազատությունը նույնպես շատ պետք եր արդյունաբերությանը։

Ճիշտ է, արդյունաբերությունը գյուղատնտեսություն չէ և յեթե վերջինս մեջ միլիոնավոր տնտեսություններ են մտնում, արդյունաբերության մեջ նրանց

թիվը միայն հազարավոր է, ուրեմն հեշտ է հաշվի առնել, հսկել, կարիքներն իմանալ, հեշտ է և հայթհայթել։

Սակայն «ռազմական կոմունիզմի» տարիներում մենք համոզվեցինք, վոր արդյունաբերության վերաբերմամբ հայթհայթման խնդիրը չափազանց դժվար է և նույնիսկ առայժմ անիրականանալի։

Ի հարկե մենք հայթհայթել կարող ենք, ֆաբրիկանները կըբանեն, միայն մեր հայթհայթումը կըլինի անկանոն, աշխատանքները մերթ կանգ կառնեն, մերթ նորից կըվերականգնեն։

Մեկ խոսքով՝ առայժմ պետությունն անկարող է հայթհայթման խնդիրներից գլուխ հանել այնպես հաջող, ինչպես վոր կարող կըլինեին գլուխ հանել իրենք ֆաբրիկանները թե առանձին-առանձին և թե տրեստով համախմբված։

Հայհայթման որգանները, նույնիսկ Գարժողկոմը, չեն կարող վաղորոք գնել այն ամենը, ինչ վոր պահանջվում է՝ դիցուք, արդյունաբերության համար։ Վուշի տրեստն էլ անմիջապես հետաքրքրված է վուշի նախապատրաստությամբ, վորովհետև նախապատրաստության անհաջող դեպքում ստիպված ես կրճատել արտադրությունը, փակել ֆաբրիկան, բանվորների հաշիվները մաքրել։

Գարդ բան է, վոր արդյունաբերական որգանը կաշուց պետք է դուրս գա, միայն թե նյութի նախապատրաստությունը տեսնի պահանջվող քանակով։

Բացի դրանից տրեստը շատ լավ գիտե թե՝ ինչ հում նյութ է պետք իրեն, ինչ վորակի, ինչ բերքի հայլն։

Իսկ՝ վոր գլխավորն և, առևտրի ազատությունը արդյունաբերության համար նրանումն և, վոր՝ շնորհիվ տնտեսությունների բազմամիլիոնության, շուկան շատ խայտաբղետ և, և այսոր կարելի չէ գնել այնտեղ այն, ինչ վոր յերեկ չկար։

Պարզ է թե քանի ազատ է արդյունաբերական որդանն իր գործունեության մեջ, ավելի դյուրին և նրան իր կարիքները հոգալ. հո չես կարող սպասել, թե յերբ Պարժողկոմի լիազորը կը գա, յեթե ինքդ կարող ես առաջարկվող ապրանքը ձեռք բերել։

Յեվ այսպես, արդյունաբերության, գյուղատնտեսության և մեր բոլոր մյուս տեսակ տնտեսությունների զարգացման համար Խորհրդային իշխանությունն առևտրի ազատություն հայտարարեց։

Սակայն գործը սրանով սահմանափակվել չեր կարող։

Մեր նպատակը վոչ միայն շուկա թույլ տալու մեջն է, այլև նրանումն է, վոր շուկան ոգտակար լինի գլխավորապես բանվորներին, գյուղացիներին, արհայնագործներին, ծառայողներին, մեկ խոսքով՝ աշխատավորներին։

Յեթե ազատ շուկայի գործերին պետությունը չխառնվի, մեր դիմաց կըլինեն այնպիսի յերևույթներ, ինչպիսիք են գների սուր տատանումն, չարաշահությունը (սպեկուլյացիա) և նման բաներ։

Առնենք՝ որինակ, շուկան անբերրի տարին.

Հացի գները սովորաբար մեծ չափերով բարձրանում են. ալյուրի պակասության շնորհիվ այս կամ այն քաղաքում, կամ շրջանում, այդ գները հասնում են բացառիկ բարձրության սահմաններին. հացի

սպեկուլյացիայի ժամանակ բանվորն ու բոլոր նրանք, վորոնք գլխավորապես հացով են սնվում, շատ բան են կորցնում, մինչդեռ ծախողները հարստանում են։

Խորհրդային իշխանությունը չի կարող չխառնվել շուկայի հարաբերություններին, յեթե միայն նա կարող է շուկան փոփոխել հոգուտ աշխատավորության։

Այս բանը մենք տեսնում ենք 1923—1924 թվականների և ամբողջ վերջին շրջանի ընթացքում։

Խորհրդային իշխանությունն սկսեց վորոշ գներ սահմանել արդյունաբերական ապրանքների համար, և վորովհետև մանրածախս առևտրի մեջ մասնավոր առևտրականները վոչ մի սակագին չեն պահպանի, իսկ նրանց չի կարելի ուժով, հրամանով ստիպել, վոր սակագին պահեն, յեթե հնարավորություն չկա հսկելու ամբողջ առևտրի վրա, ուստի գների կարգավորումը մեր ձեռքով տարածվում է գրեթե բացառապես մեծաքանակ առևտրի վրա։

Մանրածախի մեջ մենք ավելի կամ պակաս կայուն արժեքներ ենք պահում միայն պետական և կոոպերատիվ առևտրում։

Բայց և այնպես մանրածախի արժեքների այս սահմանափակ կանոնավորումն էլ զգալի չափով ազդում է շուկայի տարերքի, ապրանքափոխության քաոսի վրա։

Պետք է ասել վոր մանրածախս առևտրի՝ մոտավորապես, մեկ-երրորդը կատարվում է պետական և կոոպերատիվ մագազիններում, խանութներում, կիոսկներում, ընդ վորում մեր մագազիններում գնում են գլխավորապես աշխատավորները։

Քանի ավելի աճի կոոպերատիվ առևտուրը, այն-

քան ամուր կը պահենք մենք մեր ձեռքում արդյունաբերական ապրանքների առևտուրը։

Բայց բանը միայն առևտրի մեջը չէ, այլև վաճառքի հանված ապրանքների քանակի մեջը։

Յեթե մենք շատ ձեթ, կոշիկ, լուցկի, շաքար և ուրիշ ապրանք ունենանք, մեզ համար հեշտ կըլիներ ազդել գների բարձրության վրա, մինչև իսկ մասնավոր մանրածախս գների վրա։

Ակներև է, որ որտեղ մասնավոր ժաղովների կողքին կա և կոոպերատիվ կամ պետական մագազին, և՝ յեթե բոլոր մագազիններում ապրանքը բավարար է, այդ դեպքում գնորդը մասնավոր վաճառականից մեզ մոտ կը գա, յեթե մենք միևնույն ապրանքն ավելի եժան ենք վաճառում։

Ուրեմն յեթե շատ է ապրանքը, այն ժամանակ մենք կոոպերատիվի և պետական մանրածախսի մեջ գներ սահմանելով, հենց դրանով սահմանում ենք և մասնավոր մանրածախսի գները։

Մասնավոր վաճառականը միայն այնտեղ կը բարձրացնի գները, որտեղ նա լիազոր տեր է, որտեղ իրանից բացի ոչ ոք չկա, ոչ կոոպերացիա, ոչ պետական խանութ։

Սակայն այդպիսի տեղեր՝ թեև շատ շատ են, բայց հետզհետե պակասում են, որովհետև պետական առևտրի ցանցն ընդարձակվում է և կոոպերացիան բավական ամրանում և բաղմանում է։

Վորպեսզի թույլ չտրվի մասնավոր առևտրականներին՝ ապրանքի սովից ազատվելով, արժեքները սաստիկ բարձրացնել, Խորհրդային իշխանությունը՝ ոչ միայն ձգտում է իր արդյունաբերության արտադրությունները մեծացնել, այլև արտասահմանում այն ապրանքն է պատվիրում, որի կարիքը մեծ է։

Հիշենք, թե ինչպես 1924 թ. մասնավոր առևտրականները շաքարի գինը բարձրացրին, բայց հենց որ վաճառքի հանվեց մեր պատվիրած արտասահմանի շաքարը, մանրածախսի գներն իջան։ Մենք կարող ենք պես-պես միջոցներով կանոնավորել գները, կառավարել շուկան, միայն թե այդ միջոցներն առատությամբ գտնվեին մեր ձեռքում. որինակ՝ ապրանքի կանոնավոր բաշխան շրջանների վրա։ Դիցուք Դոնի ավազանում կոշկեղեն չկա. մասնավոր առևտրականն ոգտվելով այդ բանից մեկեն բարձրացնում է կոշկեղենի գները։

Այդպիսի դեպքում մենք ինչ պետք է անենք։

Շատ պարզ բան. կարևոր քանակությամբ կոշիկ վերցնենք և ուղարկենք Դոնի ավազան։

Այս կոչվում է «ապրանքային ինտերվենցիա» (միջամտություն)։

Յերբ որ Անգլիան, Ֆրանսիան և մյուս բուրժուական կառավարությունները փորձում էին մեզ խեղդել զինավառ ձեռքերով, նրանք իրենց բանակները էին ուղարկում մեզ վրա՝ ամբողջ շրջաններ գրավելով։ Այդ կոչվում եր ռազմական ինտերվենցիա։ Յերբ մենք կամենում ենք խեղդել առևտրական սպեկուլյացիան, որ աշխատավորության դեմ է ուղղված, մենք ուղարկում ենք որոշ շրջաններ մեր առևտրական բանակները, գործադրում ենք ապրանքային ինտերվենցիայի քաղաքականությունը։

Դժբաղդաբար մենք դեռ բավարար միջոց չունենք, որպեսզի այդ կերպով վերջ տանք շուկայի սպեկուլյացիային։ Բայց որքան ուժ ունենք, նը-

բանից ոգտվում ենք և քանի դնա, այնքան ավելի հը-զոր կլինի մեր ձեռքում այդ գործիքը՝ շուկայի դեմ կռվելու համար։

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական ապրանք-ների առևտրին և նրանց գների կանոնավորման, այս-տեղ էլ ապրանքային ինտերվենցիան չափազանց ոգ-տակար է։

Մենք այժմ վաղորոք գնում ենք գյուղատնտե-սական արդյունքների մեծ քանակություն և՝ յերբ վոր նույն Դոնի ավազանում սպեկուլյանտները հացի գինը կբարձրացնեն, մենք այնտեղ կուղղենք ալյուր հարկավոր քանակությամբ և կբաշխենք սպեկու-լյացիան։

Այդ նպատակով էլ Խորհրդային իշխանությունը վորոշեց արտասահմանում վաղորոք ցորեն գնել, վորի բերքը մեզնում սակավ եր և վորով մասնավոր առևտրականներն են հարստանում։

Գյուղատնտեսական արդյունաբերքի գների կա-նոնավորումը իրագործվում է և այնպիսի միջոցնե-րով, վորպիսին է լիմիտների սահմանումն, այսինքն գների վորոշ սահման դնելը, վորից ավելին մեր պատ-րաստում կատարողները չպետք է վճարեն։ Այսպես 1924 թ. հացի գներն այնքան բարձրացան, վոր վոչ կոոպերացիան, վոչ էլ պետությունն այդ գներով չը-կարողացան արդյունքեր պատրաստել կարևոր չափով, իսկ յեթե կարողանային էլ պատրաստել, պետք է մի-ևնույն հացը այնպիսի գներով վաճառեյինք, վորոնք մատչելի չեյին բանվորներին և աղքատ գյուղացինե-րին, վորոնց սեփական հացը պակաս եր,

Այդ լիմիտներն ոգուտ են բերում ի հարկե

միայն այն դեպքում, յեթե կոոպերացիան և պետու-թյունը հանդիսանում են խոշոր պատրաստում կատա-րողներ, հակառակ դեպքում՝ մասնավոր ապրանքառուն՝ լիմիտային գները խախտելով, դեպի իրեն կբաշխի ծախող գյուղացիներին և իր ձեռքում կկենդրոնացնի գյուղատնտեսական ապրանքների մեծ քանակություն։

Ահա շուկայի և գների կանոնավորման գլխավոր միջոցները։

Խոշոր նշանակություն ունի նրանց հաշվառու-թյան դրվածքը. արժեքներն ու շուկան ավելի կամ պակաս հաջողությամբ կանոնավորել կարելի յե այն ժամանակ միայն, յերբ մեզ հայտնի յեն տարբեր շըր-ջանների գները, ապրանքի քանակը, կոոպերացիայի, պետական առևտրի, մասնավոր առևտրական կապի-տալի ուժը։

Այդ նպատակով Խորհրդային իշխանությունը հիմնեց ապրանքային բորսաներ, վորտեղ նշանակվում են առևտրական գործարքները, գները, վորով ապրանք և վաճառված ու գնված. նշանակվում և, թե ով և ծա-խել, ով և գնել. այսպիսով մենք կիմանանք, թե վոր ապրանքն ավելի և վորը պակաս և ծախվում, գներն աճում են, թե՞ ընկնում, ընդարձակվում են մասնավոր կապիտալը, կոոպերացիան, Պետառը, թե՞ նվազում և այլն։

Մենք բոլոր խոշոր քաղաքներում ապրանքային բորսա ունենք. բայց բորսաներում մանր գործարքնե-րը չեն նշանակվում և մենք մի շարք միջոցներ ենք ձեռք առնում, վոր իմանանք, թե ինչ գներով և ծա-խում մանրածախս առևտրականը, վոր ապրանքներից և խուսափում կոոպերացիան և այլն։

Այդ միջոցներից մեկը շուկայի ուսումնասիրությունն է գործակալների միջոցով։ Որինակ՝ մենք գործակալներ ենք ուղարկում, որոնք որպես մասնավոր գնորդներ, մի ֆունտ աղ են գտնում մանրածախ խանութում, կոոպերատիվում, կրպակում հայլն, քաղաքի կենդրոնում և ծայրերում, տոն և լուր որերին, Սուխարևկայում և Սմոլենսկի շուկայում, մայրաքաղաքում, նահանգական քաղաքում, գավառականում... Յեվ որովհետև վաճառողը չգիտե, թե մեր գնորդը գործակալ է, ուստի և նրան ապրանք է բաց թողնում այն գներով, ինչ գներով որ տալիս և ուրիշ գնորդներին։

Բոլոր այս միջոցները հնարավորություն են տալիս մեզ իրազեկ լինելու շուկայի գործերին, ուստի և գների ու շուկայի կանոնավորումը շատ է հեշտանում։

Առանց ուսումնասիրության, լոկ հրամանով գները չես փոխի, մասնավոր առևտրականին չես մեռցնի, նրան չես ոգտագործի։ Հեղափոխության տարիներում մենք շատ անգամ, մանավանդ գավառներում, կայուն գներ եյինք սահմանում ապրանքի համար, և որովհետև մենք անծանոթ եյինք շուկային և թույլ, որ շուկայի հարաբերությունները յենթարկեյինք մեզ, ուստի և մեր սակագները չքանում եյին, ապրանքն անհայտանում և թագուն ծախվում էլ ավելի բարձր գներով։ Շուկայի տարերքի դեմ կռվելու մեր գլխավոր միջոցը սպառողին և արտադրության կոոպերացումն է։

Կոոպերացիան աշխատում է մեր դեկավարությամբ, կոոպերացիան կատարում է Խորհրդային իշխանության այն հրամանները, որ նրա հետ միասին և մշակել, իսկ մասնավոր առևտրականը միայն ոգուտի

մասին է մտածում, ուստի և՝ յերբ նրան ձեռնտու չե, ամեն կերպ կաշխատի աչքաթող անել Խորհրդային իշխանության պայմանները։

Քանի ավելի ուժեղ է կոոպերացիան, այնքան ավելի հեշտ կլինի կյանք մտցնել այն միջոցները, որոնցով Խորհրդային իշխանությունը կանոնավորում է շուկան։

ՌԿԿ 13-րդ համագումարի որոշումների մեջ շեշտվում է կոոպերացիայի աչքի ընկնող դերն ընդհանրապես և սպառողականինը՝ մասնավորապես։

ԿԿ հունվարի (1925 թ.) պլենումում ելի մի անգամ մատնանշված է, թե կոոպերացիան պետք է զարգանա և ահագին ուժ դառնա շուկայում։

Լենինն ասում եր, թե մենք պետք է առուտուր անել սովորենք։ Մենք սկսեցինք ուսանել, շատ սխալներ արինք, բայց սկսեցինք առաջվանից ավելի լավ առուտուր անել և մինչև իսկ ձեռնարկեցինք շուկան կանոնավորել։

Մենք այժմ արդեն ներքին Առևտրի կոմիսարիատ ունենք, որ իշխանության և կուսակցության բարձրագույն որգանների ղեկավարությամբ զբաղվում է մասնավորապես շուկայի և նրա հարաբերությունների կանոնավորման ուսումնասիրությամբ։

---

5. ՆԵՄՐ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Աշխատանքի բաժանման այն վիճակում, որ այժմ կա, արտադրությունը հնարավոր է միայն այն դեպքում, յեթե տնտեսության տարբեր ճյուղերն իրենց մշակած արդյունքներն իրար հետ փոխանակեն։

Այս բանը վերաբերում է թե տնտեսության հիմնական մասերին, այսինքն՝ արդյունաբերության և գյուղատնտեսության, և թե մեկի և մյուսի առանձին ճյուղերին։

Յեվ քանի որ արտադրության գործիքներն ու միջոցները գտնվում են մասնավոր սեփականատերերի ձեռքում, ինչպես որինակ՝ մեր գյուղերում, արհեստների և տնայնագործության մեջ, այդ արդյունքների փոխանակությունը լինելու է առևտրի միջոցով։

Բայց աշխատանքի բաժանումը գոյություն ունի վոչ միայն ամեն մի պետության ներսում, այլև յերկրագնդի բոլոր տնտեսության մեջ։

Ամբողջ յերկրագունդը փաստորեն գտնվում է մի քանի իմպերիալիստական պետությունների ձեռքում։ Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան, Յապոնիան և Միացյալ-Նահանգները մինչև պատերազմը գրավել եյին աշխարհի գրեթե բոլոր յերկրամասերը, գրեթե նրա ամբողջ բնակչությունը։

Կապիտալիստական մեծ յերկիրներում վաղուց արդեն, 20—25 տարուց վոչ պակաս, ավելի ապրանք է

արտադրվում, քան թե կարող է գնել յերկրի բնակչությունը։

Կապիտալիստական պետությունների առջև վաղուց արդեն իրենց արդյունաբերության ապրանքների համար բազմաթիվ գնորդներ գտնելու խնդիրն է դրված։

Ուստի նրանք բոլորն ել իրար դեմ են կռվում Չինաստանի, Պարսկաստանի, Տաճկաստանի, Բալկանների, Ռուսաստանի, մեկ խոսքով այնպիսի յերկիրների համար, վորոնք շատ բնակիչ ունին և վորտեղ նրանք արդեն սկսել են գործ ունենալ շուկայի հետ, այսինքն գնելու և վաճառելու հետ։

Այդ յերկիրները կարելի յե ներմուծել և՛ պատրաստի ապրանք, և՛ մեքենաներ, և՛ հում նյութեղեն մանուկ արդյունաբերության համար. այստեղ կարելի յե ուղղել կապիտալը՝ տեղավորելով նրան գործարանների, ֆաբրիկաների, ելեքտրաքարշի մեջ, յուրաքանչյուր 100 ռուբլուն ավելի շահ ստանալով, քան կարող եյին ստանալ կապիտալիստական զարգացած յերկիրներում։

Այսպես՝ համաշխարհային պատերազմի սկզբներում գաղութները միացած եյին տիրող պետություններին մի հանգույցով. արդեն խոշոր պետությունները ամուր կապերով կապվում եյին յերիտասարդ պետությունների հետ, վորոնք նոր եյին սկսել զարգանալ կապիտալորեն (Տաճկաստան, Պարսկաստան, մասամբ ցարական Ռուսաստան), իսկ կապը իմպերիալիստական առանձին ժողովուրդների մեջ ամրապընդվում եր ամեն մի տասնամյակով և տարով, չնայելով վոր սուր թշնամություն կար բոլոր յերկիրների

բուրժուաների մեջ։ Վորոնք ավելի եյին ամրապնդում համաշխարհային կապերը, այնքան ավելի յերկրագունդի տնտեսությունը արագորեն եր դառնում մի համաշխարհային տնտեսություն. այդ մասին վկայում են այս թվերը. 5 տարվա ընթացքում, 1907-ից մինչև 1911-ը, Ռուսաստանի արտահանությունն աճել եր մեկ և կես անգամ, Գերմանիայինը՝ 18 տոկոսով, Անգլիայինը 8 տոկոսով, Իտալիայինը՝ 12 տոկոսով. իսկ ներմուծումն Ռուսաստան 37 տոկոսով. Գերմանիա 9 տոկոսով, Անգլիա 5 տոկոսով, Իտալիա 17 տոկոսով։

Առանձնապես արագ աճում են արտահանումն ու ներմուծումն Ռուսաստան նույնպես, ինչպես և մյուս յերկիրները, վորոնք դեռ նոր եյին թևակոխում կապիտալիստական ուղին։

Ահա, որինակ, նույն 5 տարիների ընթացքում Կանադան մեծացրել է արտահանությունը 51 տոկոսով, իսկ ներմուծումը 37 տոկոսով։

Ռուսաստանը հարաբերության մեջ եր գրեթե աշխարհի բոլոր՝ ավելի կամ պակաս, աչքի ընկնող պետություններ հետ և արտահանում եր վոչ միայն Յեվրոպա և հարևան յերկիրները, այլև Յեգիպտոս Արևելյան Հնդկաստանով միասին. նույնը և ներմուծումն։

Սակայն Ռուսաստանը ամենամեծ շրջաբերությունը կատարում եր ի հարկե կապիտալիստական գլխավոր պետությունների հետ, նախ և առաջ Գերմանիայի, հետո Անգլիայի, այնուհետև դալիս են Հոլանդիան, Ֆրանսիան, Միացյալ-Նահանգները, Իտալիան և այլն։

Թե վորքան կարևոր եյին առևտրական այդ հարաբերությունները, նկատելի յե թեկուզ այն բանից,

վոր 1923 թ. բերված 1218 միլիոն ռուբլու բոլոր ապրանքներից հում և կիսահում նյութերին ընկել եր 600 միլիոն ռուբլի, այսինքն ներմուծած ապրանքների հետ գնացել եր արտադրության կարիքներին, առանց հաշվելու 169 միլիոն ռուբլու ներմուծված մեքենաներն ու գործիքները։

Արտահանությունն ել նույնպես չափազանց կարևոր է, վորովհետև հնարավորություն է տալիս գյուղացիներին վոչ միայն վաճառել հացի ավելցուկը, այլև ընդարձակել այնպիսի մշակույթներ, վորպիսիք են վուշը, կանեփը և այլն։

Չէ վոր 1,420 միլիոն ռուբլու արտահանությունից կենսական մթերքներին և անասուններին ընկավ 840 միլիոն ռուբլի։

Առանձին-առանձին քննենք մեր արդյունաբերության և գյուղատնտեսության կապակցությունն ամբողջ աշխարհի հետ, պարզ ասենք՝ արտասահմանի հետ։

Այն ժամանակ կըհասկանանք, թե ինչու Խորհրդային իշխանությունն այդքան ձգտում եր վերացնել պաշարումը և վերականգնել առևտրական հարաբերությունները և թե ինչու այդ բանին ել, բայց ավելի ուշ, ձգտում եյին և մյուս պետությունները, վորի հետևանքով ՍԽՀՄ այժմ ճանաչված է աշխարհի բոլոր խոշոր պետությունների կողմից և՝ ըստ յերևույթին Հյուսիսային Ամերիկայի Միացյալ-Նահանգները, վորոնք դեռ համառում են մեզ ճանաչել, բայց արագ քայլերով մոտենում են այդ ճանաչմանը։ Նախ՝ առնենք արդյունաբերությունը և նրա կապը արտասահմանի հետ։

Արդյունաբերությունն առանց մեքենաների գոյություն ունենալ չի կարող, իսկ Ռուսաստանը նախապատերազմյան արդյունաբերությունը հարկավոր մեքենաների քանակի 58 տոկոսը արտասահմանից էր բերել տալիս։ Հենց այս մի բանով արդեն վճռական խոսք է ասված. արդյունաբերությունն առայժմ չի կարող զարգանալ առանց արտասահմանի մեքենաների ներմուծման։

Բայց բանը միայն դրանք չեն, այլև սարքավորումն և արտադրության միջոցները։ Հաշվական փաստեր կան, վոր մինչև պատերազմն արդյունաբերության և տեխնիքական տնտեսության համար արտասահմանից էր բերվում արտադրության և սարքավորման բոլոր կարևոր միջոցների մեկ յերրորդը (37 տոկոսը։

Արտաքին յերկիրների հում նյութը, մթերքները, կիսագործարանական իրերը մինչև պատերազմը աչքի ընկնող դեր եյին խաղում, ինչպես խաղում են և այժմ։

Որինակ՝ մետաղի արդյունաբերությունը մինչև որս եկ չի կարող կառավարվել առանց արտասահմանի հալվածոյի, անագի, բարիտի։ Նախապատերազմյան վերջին տարին ներմուծված են նույնիսկ թուջ (չուգուն), յերկաթ, թիթեղ և պողպատ (12 միլիոն ռուբլու), իսկ պղինձ և ուրիշ մետաղներ՝ 43 միլիոնի։

Ելեքտրոտեխնիքական արդյունաբերությունը վոտ ու ձեռքով գլխովին կապված էր արտասահմանյան նյութի հետ. արտասահմանից պատվիրվում էր պղինձ, դինամո-երկաթ, վոլֆրամ, արճիճ, թղթյա ժապավեն, փայլար, ընդհրյա լարի և հեռախոսային թուղթ, պարաֆին, տալկ, մոխրազույն սեղին, պրեսշպան կայլն։

Մանածագործական արդյունաբերությունը ներմուծում էր գույներ, քիմիական արդյունքներ, բեղունկա, սանդերք, հենքը շոհված ֆլանել, իսկ առանց ոտարյերկրյա հում նյութի նա պետք է առնվազն իր մշակույթի մի քառորդը կրճատեր։ Բամբակագործությունը մինչև պատերազմը տարեկան 24 միլիոն փութ բամբակ էր վերամշակում, վորից 7 միլիոնը՝ արտասահմանից և այն էլ ամենալավ տեսակից։ Հում մետաքսը գալիս էր արտասահմանից վերամշակելի ամբողջ քանակության վեց-յեոթներորդի չափով։ Նուրբ բուրդը գրեթե բացառապես ստացվում էր արտասահմանից և վերամշակելի 5 միլիոն 200 հազար փթից 1 միլ. 300 հազարը (մի քառորդը) ներմուծվածն էր։

Ռեղինի արդյունաբերությունը ներմուծված լաստիկով (կաուչուկ) և գուտապերչով էր աշխատում՝ ստանալով նաև ոժանդակ նյութերը, ինչպես կապարի և ցինկի ներկ (белила), քարմարցանկաներկ (глист), ծծումբ ..

Ճարպի և յուղ պատրաստող ճյուղերը վերամշակում եյին ավստրալիական ճարպը, արտասահմանյան յուղերը, ինչպես՝ գերչակի, հնդընկույզի, նշի...

Ապակեղենի և ճենա-հախճապակու արդյունաբերությունները բանեցնում եյին արտասահմանի կալիոն, սուսր, բորակաքար, ճենապակու կավ, սպաթ, կվարց։

Անագի և յերկաթավուն գույները մշակվում եյին ներմուծված անագից և յերկաթի սուսրից։

Բորակածին, բերթոլետյան աղ, ֆոսֆոր, կրեզ (камедь), ծարիր (антимон) ստացվում եյին լուցկու արդյունաբերության համար։ Մշակված կաշի, ծանր հում

նյութ՝ կաշի դաբաղելու և քիմիական նյութեր, կոշկեղենի և լծասարքի նյութերին կաշեգործական արդյունաբերության համար եյին գնում։ Հյուսիսային արդյունաբերության համար պատվիրում եյին արտասահմանի քարածուխ և կոկս։

Վերջապես արտասահմանը ռուսական արդյունաբերությանը մատակարարում եր վորակյալ բանվորներ և ինժեներներ։ Գործը միայն ներմուծումով չեր սահմանափակվում. մեր արդյունաբերությունն ինքն արտասահման եր հանում իր արտադրության արդյունքները։ Հայտնի յե, որինակ։ մեր նաֆթի և նաֆթամթերքի, մարգանեցի, փայտի, շաքարի, նույնիսկ ռեզինե գործվածքների դերն արտասահմանյան շուկայում։

Յերբ մենք այսպիսի կախումն ունենք արտասահմանից և պաշարված վիճակում ենք, մեր արդյունաբերությունը չեր կարող մինչպատերազմյան աշխատանքի կեսն ել կատարել, յեթե նույնիսկ բավարար չափով՝ և՛ բանվորներ, և՛ պարեն, և՛ սեփական վառելիք ու հում նյութ ունենայինք։

Ահա թե ինչու համար մենք այդպես ձգտում եյինք պաշարումը ճեղքել, ահա թե ինչու մենք այժմ այդքան մեծ ուշադրություն ենք դարձնում արտաքին առևտրի ֆրոնտի վրա։

Վոչ մի յերկիր՝ վոր ավելի կամ պակաս զարգացած արդյունաբերության տեր և, չի կարող նորմալ կերպով ապրել, յեթե կտրվի ուրիշ յերկիրներից. այժմ ամեն մի յերկիր համաշխարհային տնտեսության բաղադրիչ մասն է։

Այդ կարելի յե հեշտությամբ ցույց տալ նաև

նախապատերազմյան Ռուսաստանի գյուղատնտեսությամբ։

Ռուսաստանը՝ եր և դեռ մնում է հացի յերկիր։ Բայց այդ հացի հացահատիկի Ռուսաստանը, թեև դանդաղ, բայց և այնպես առաջ է շարժվում տնտեսական բարվոքման ուղիով, ուստի և հացի ավելցուկն աճում է, վոր մի յելք ունի՝ արտասահման։

Մինչև պատերազմը հացի ընդհանուր բերքի մեկ իններորդ մասն արտահանվում եր։ 1901 թ. արտահանվել եր 345 միլիոն ռուբլու, իսկ 1911 թ՝ 739 միլ. ռուբլու։

Հենց միայն այս թվերն են ասում, թե վորչափ կարեվոր է ռուս գյուղացու համար արտասահմանի հետ կապ պահպանելը։

Մինչև անգամ այժմ, յերբ գյուղական տնտեսությունը, 9 տարվա անընդհատ անկումից հետո, միայն յերկու տարի յե, վոր սկսել է վոտքի կանգնել, մենք մինչև անգամ այժմ, հենց առաջին բավարար բերքի դեպքում պետք կունենա 200-300 միլիոն փութ արտահանել արտասահման, վորովհետև անձնական գործածության համար ընդհանուր բերքը չափազանց շատ կլինի։

Բացի հացի մշակույթից գյուղատնտեսության համար մեծ նշանակություն ունին հատուկ բույսերը, այգեգործությունը և պարտիզպանությունը։

Այս մշակույթները գյուղացու համար հացի մշակույթից ավելի շահավետ են, վորովհետև տիրոջից ավելի շատ աշխատանք և ժամանակ են խլում (իսկ գյուղումը պարապ ժամանակ շատ կա), դրամի վերածած՝ բերելով թե ընդհանուր և թե զուտ բերք ավելի շատ, քան վոչ միայն աճարը, այլև ցորենը։

Յեվ Ռուսաստանում այս հատուկ մշակույթներն աճել են տարից տարի, գերազանցելով այն կարիքը, վոր զգում եյին արդյունաբերությունն ու անասնագործները։

Ի հարկե պետք եր ջանք դնել գնորդ գտնել, վոր և գտնվեց արտասահմանում։

1901 թվականից մինչև 1913-ը ծխախոտի արտահանությունը մեծացել և 3 ու կես անգամ, վուշինը՝ 2 անգամ, կանեփի թելի և վուշի խծուծինը՝ 2 անգամ, յուղաբեր սերմերինը նույնպես 2 անգամ, նույնը և կարտոֆլինը, մրգերինը, հատապտուղինը և զանազան բանջարեղեններինը։

Գյուղական տնտեսության ապրանքների այդ ամբողջ խումբը հացի հետ միասին ընդհանուր արտահանության մեջ պատվավոր տեղ բռնեցին. 761 միլիոն ռուբլուց 445 միլ. ռուբլի (58 %) 1901 թվին, և 1,520 միլիոն ռուբլուց 806 միլ. ռուբլի (53%) 1913 թ.։ Մեր գյուղատնտեսության համար 800 միլիոն ռուբլին ահագին գումար և։

Առանձնապես սկսեց արագորեն աճել կենդանիների և անասնապահության արդյունքների արտահանությունը. Գերմանիա եյին տարվում ձիեր ու խոզեր, թարմ խոզենին ել այնտեղ եր գնում, իսկ աղածը ու ապխտածը՝ Անգլիա, Դանիա և Ավստրովենգրիա, կովի յուղը՝ նույն յերկիրները, ձուն՝ նույն տեղերը և ելի Հոլանդիա և Բելգիա, կենդանի սագեր՝ Գերմանիա և Ավստրովենգրիա։

Ռուսաստանում գյուղատնտեսությունը կարող եր հարստանալ և զարգանալ միայն անասնապահության զարգացումով։ Սակայն գյուղը խոզենիով և թռչնով

սնվելու համար չափազանց աղքատ է. քաղաքներն ել՝ թեև անասնապահության արդյունքների գործածությունն ավելացնում եյին (պատերազմից առաջ), բայց վոչ այն արագությամբ, ինչ արագությամբ աճում եր անասնաբուծությունը։

Պարզ եր, թե անասնապահության հետագա արագ զարգացումը հնարավոր եր միայն արտասահմանի շուկա դուրս գալով։

Յեվ մենք տեսնում ենք, վոր 1901 թվից մինչև 1913 թ. խոզերի արտահանությունն ընդարձակվում է գրեթե յերեք անգամ, ձվինը՝ նույն չափ, կովի յուղինը՝ 2 կես անգամ, խոզենուն և մորթած ընտանի թռչուններինը՝ յերեք անգամ, նույնիսկ ձիերինը՝ յերկու անգամից ավելի։

Մեկ խոսքով՝ ռուս գյուղացին առանց արտահանության չի կարող արեխից կոշիկին անցնել, հարբստանալ, վորովհետև հատուկ մշակույթների և անասնապահության արդյունքների վերաբերմամբ մեր կարիքներն առայժմ չեն կարող նույն արագությամբ աճել, ինչ արագությամբ աճում է այդ մթերքների արտադրությունը։

Սակայն գյուղատնտեսությունն արտասահմանի հետ կապված է վոչ միայն արտահանությամբ, այլև իր ներմուծումով։

Մենք դեռ յերկար ժամանակ պետք է ներմուծենք արտասահմանի անասուններ մեր անասունների տեսակներն աղնվացնելու համար. մենք պետք է արտասահմանից բերենք բամբակի սերմ, կորնկանի սերմ և այլն։

Գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ

արտասահմանից ներմուծվում էին գործածության կիսով չափ։ Այսպես, 5 տարվա ընթացքում 1909 թ. մինչև 1913 թ. ռուսական գործարաններում արտադրվել է 242 միլիոն ռուբլու, իսկ ներմուծվել է 255 միլ. ռուբլու։

Վորքան էլ մեզնում սակավ էին ոգտվում մեքենաներից և կատարելագործված գործիքներից, այնուամենայնիվ տարեցտարի դութանը դուրս է քշում արորին, իսկ մետաղյա մանկեռը, փայտի մանկեռին։ Գյուղական տնտեսության համար շատ դժվար կըլիներ առանց մեքենաների և գործիքների ներմուծման մնալ։

Բացի դրանից արտասահմանից գալիս էին և արհեստական պարարտացման նյութեր։

Ահա ոտարերկրյա տնտեսության հետ յեղած այն կապերը, վորոնց խզումը շատ հիվանդագին ազդեցություն կըգործեր գյուղացության և ամբողջ պետության վրա։

Հենց այս պատճառով էլ Խորհրդային իշխանությունը ձգտում եր և հասավ առևտրական հարաբերությունների վերականգնման արտասահմանի հետ։ Բայց յեթե ներքին առևտրի վերաբերմամբ Խորհրդային իշխանությունը հնարավոր եր համարում ազատ առևտրի սկզբունքի վրա կանգնել, արտաքին առևտրի վերաբերմամբ չեր կարող մի այլ ճանապարհ բռնել, բացի մոնոպոլիայի ճանապարհից։

Բանն այն է, վոր յեթե մենք ամեն տեսակ ապրանք մեր յերկրից արտահանելու և ներմուծելու ազատությունը տայինք, խորհրդային յերկիրը շատ մեծ արագությամբ պետք է կործանվեր, առանց հույս ունենալու, թե իր ույժերով մեկ էլ վոտքի կըկանգնի։

Առնենք գյուղատնտեսությունը. ոտարյերկրյա կապիտալը կարող եր հեշտությամբ ամբողջ վուշը, կանեփը, կաշին և այլն գնել. մեր արդյունաբերությունը առանց հում նյութի, գյուղացիներին՝ ցածր գնորով, պետությանն առանց այն ոգուտների թողնելով, վորոնք ստացվում են արտաքին սեփական առևտրից։ Յեվ ընդհանրապես ոտարյերկրյա կապիտալի տիրապետությունը մեր շուկայում անխուսափելի կըլիներ և մենք անզոր՝ գներն ու շուկան կանոնավորելու։

Որինակ՝ 1924—25 թվականներին մեզ միանգամայն ձեռնտու չե հացն արտահանել և մենք պատրաստվում ենք արտասահմանից ցորեն ներմուծել, վորպեսզի թույլ չտանք հացի ժարողներին (թալանչիներին) նրա սպեկուլյացիայով պարապելու։

Սակայն ազատ կապիտալը կարող եր խափանել մեր հացի քաղաքականությունը, վաղորոք հացի մեծ պաշար գնելով արտահանության համար։

Գարգ է՝ վոր մենք թույլ չենք տա վուշը և կանեփի թելն արտահանել ի վնաս մեր մանվածագործական արդյունաբերության և թույլ չենք տա կաշու հում նյութերի այն տեսակներն էլ արտահանել, վորոնց պետք ունի մեր արդյունաբերությունը։ Յեվ այլն։

Ուստի և մենք արտաքին առևտրի պետական մոնոպոլիա հայտարարեցինք, այսինքն այնպիսի կարգ սահմանեցինք, վոր արտասահմանի հետ առևտուր անելի միայն ինքը՝ պետությունը և նրա լիազորները։

Այդպես թույլ չենք տա արտասահմանի ապրանքների ազատ ներմուծումը։ Մեր արդյունաբերու-

թյունը դեռ մանուկ է, նրա սարքավորությունը հնացել է, արտասահմանյան արդյունաբերության ապրանքից ավելի լավն ու էժանը պատրաստել չենք կարող. բայց հո չենք կարող այդ պատճառով բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները փակել, բոլոր արդյունաբերական բանվորներին արձակել։

Այդ բանը մենք յերբեք չենք անի. ընդհակառակը՝ մենք աշխատում ենք արդյունաբերությունն առաջ մղել, մոտեցնել նրան արտասահմանի արդյունաբերության։ Յեվ քանի դեռ այդ չի հաջողվել մեզ, մենք թույլ չենք տա, վոր ռատրյերկրյա ֆաբրիկաների և գործարանների ապրանքը ծածկի մեր շուկան, մենք ամեն կերպ պետք է պաշտպանենք մեր սեփական արդյունաբերությունը։ Արտասահմանի ապրանքել կընդունենք, վորպեսզի բավարարենք աշխատավորների այն կարիքները, վորոնց բավարարել չի կարողացել մեր սեփական արդյունաբերությունը։

Յեվ վոչ միայն ներմուծումն, այլև արտահանությունը չեն կարող ազատ լինել մի ամբողջ շարք պատճառներով։ Նախ՝ մեր նավթը, մեր փայտը, մեր կըրկնակոշիկները կամ մարգանեցը կովի քաղաքական լավ միջոց են համաշխարհային հակահեղափոխության դեմ, մինչև առևտրի ազատության դեպքում այդ միջոցը մեր ձեռքումը չեր լինի։

Յերկրորդ՝ ազատ արտահանության դեպքում մենք չեյինք ստանա այն ոգուտը, ինչ վոր ստացվում է մոնոպոլիայից. կարելի յե սպասել լավ գներ, մի գնորդի գերադասել մյուսից և այլն։

Յերրորդ՝ պլանի յենթարկել, արտադրությունն արտահանության հետ շաղկապել հնարավոր է միայն

արտաքին շուկան նկատի ունենալով, ինչ վոր համեմատաբար հեշտ է անել պետական մոնոպոլիայի դեպքում։

Խորհրդային իշխանությունն այս մոնոպոլիան վարում է Արտաքին Առևտրի Կոմիսարիատի միջոցով (Ա.Ա.Ժ.Կ), և վորպիսին՝ այսպես ասած գլավկիզմը չլինի արտաքին առևտրի հարաբերությունների մեջ, արտահանելու և ներմուծելու իրավունքը տրված է խոշոր տնտեսական որգաններին, վորպիսիք են կենտրոսոյուզը (центросоюз) և գյուղմիությունը сельскосоюз, իսկ արդյունաբերական որգաններն արտասահման արտահանումը ունեն իրենց ներկայացուցչությունները, վորոնք դնումներ են անում Արտաժողկոմի որգանների հակողության տակ։

Կապիտալիստական բոլոր պետությունները պընդում եյին, թե Խորհրդային իշխանությունը պետք է հրաժարվի արտաքին առևտրի պետական մոնոպոլիայից. սակայն մենք պինդ կանգնեցինք մեր ասածի վրա և տարանք։ Այժմ, այսպես թե այնպես, այն բոլոր պետությունները, վորոնք մեզ հետ պայմանագրով հարաբերության մեջ են, հաշտվել են մեր արտաքին առևտրի մոնոպոլիայի հետ։

Մեր նպատակն է ամեն կերպ քաջալերել գյուղատնտեսության, արդյունաբերության, տնայնագործության, գաղտնորսության և վորսորդության բոլոր ճյուղերը, վորոնք ապրանք են տրամադրում արտասահման արտահանելու համար։

Ինչպես հետո կըտեսնենք, մեր արտահանությունն աճում է, ներմուծումը՝ բարվոքվում, արտաքին առևտրի ապպարատն՝ ամրապնդվում։

6. ԳԼԱՎԿԻԶՄ, ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ, ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Մենք վերևում արդեն ասել ենք, թե ռազմական կոմունիզմի ժամանակ գլավկիզմ ունեցինք, յերբ տեղական որգաններն ամեն ինչ գլավկիցն (կենդրոնից) եյին ստանում, ուստի և մինչև անգամ մանր բաներումն ել կախումն ունեցին նրանից։

Առևտրի ազատությունը վերացվեց. գործարանական վարչությունը, ինչպես և վորևե յերկաթուղի, իրավունք չունեցին բան գնելու. ամեն ինչ տալիս եյին կենդրոնը և տեղերի պարենավորման որգանները։

Որինակ՝ գործարանին պետք է 5—10 սայլ խոտ, վոր նա կարող է փոխանակել մի հին, դեն ընկած դազդյահով. խոտը պետք է ձիերին կերակրելու համար, վորոնք գործարանի հում նյութը, մթերքը կամ վառելիքն են կրում։

Սակայն գործարանական վարչությունն իրավունք չուներ վոչ առնելու, վոչ ծախելու. նա պետք է անասուններին կերն ստանար որինական կարգով, ըստ հրամանի։

Ապա գլավկը գրամ եր բաց թողնում տրեստին, բայց տրեստն այդ գրամը տնորինել չեր կարող յելքի նախահաշվից դուրս, վորտեղ կետտակետ ցույց եր տրվում, թե այսքան ռուբլի պետք է ծախսվի այսինչ բանի վրա, իսկ այսքանը՝ այն ինչ բանի համար։

Ի հարկե ծախքերն իրենց մանրամասնությամբ յերկար ժամանակի համար նախատեսելու վոչ մի հնարավորություն չկար, ուստի և հաճախ նախահաշվի այնպիսիներից մեկի գրամը պակասում եր, մինչդեռ մյուսինը՝ նույնիսկ ավելանում։ Տեղական վարչության որգանները, վորոնց վոտ ու ձեռքը կապված եր, չեին կարող վոչ մի ավելի կամ պակաս նախաձեռնություն և ինքնագործունեություն հայտնաբերել. միայն շատ դժվարին կացության դեպքում զանց եյին անում կենդրոնի վորոշումները։

Բանվորներին կարելի յեր մի գործարանից մյուսը նետել, մեկ աշխատանքից՝ մյուսը։

Յեվայլն։

Յերբ Նեպը (նոր տնտեսական քաղաքականությունը) հայտարարվեց, յերբ Խորհրդային իշխանությունն առևտրին և արդյունաբերությանը ազատություն տվեց, յերբ «որինական հողի վրա» հանդես յեկան մասնավոր առևտրական կապիտալը և արդյունաբերությունը, գլավկիզմի վախճանը հասավ։

Գլավկիզմը՝ թեև վոչ հանկարծ, թեև մեծ ընդդիմադրությամբ, բայց և այնպես մեռավ։

Դե ուրիշ կերպ ել ինչպես կըլիներ։

Խորհրդային իշխանությունը թույլ տվեց, վոր մասնավոր արդյունաբերությունն ազատ ապրի, իրավունք տալով նրան ազատորեն արտադրելու և առևտուր անելու։

Պարզ բան է, վոր այդ մասնավոր արդյունաբերողները մեր մրցակիցներն եյին, և յեթե նրանք ավելի եժան ապրանք արտադրեին, քան մենք, գնորդը նրանց մոտ կերթա, այլ վոչ թե մեզ մոտ կըգա։

Պարզ է թե ձեռներեց արդյունաբերողները կընկալողանան տարեցտարի յետ մղել պետական արդյունաբերությունը, յերկրորդ տեղը տալով նրան, յեթե նա անկարող լինի լավագույն ապրանք պատրաստել մեծ քանակությամբ և ավելի աժան գներով, քան թե կը պատրաստեն մասնավոր արդյունաբերողները։

Բայց մեր գործարանն ու մեր տրեստը կընկալողանային մրցել մասնավոր արդյունաբերողի հետ, յեթե վերջինս շուկայում կարող է գնել, ինչ վոր կամենում է, յերբ կամենում է և ինչ գնով վոր իրեն ձեռնտու յե համարում, մինչդեռ մեր տնտեսարարը շուկայում բան գնելու իրավունք չունի, իսկ դլավկոները պարենավորում են նրան այնպես, վոր կամ հում նյութ բոլորովին չեն ուղարկում, կամ հարմար տեսակները չկան և կամ ուղարկում են մեծ հապաղումով կայլն։

Մեր տրեստը կարող էր հաղթել կապիտալիստին, յեթե կապիտալիստը կարողանար իր դրամները տնորինել, ինչպես կամենում է, առանց կապված լինելու վոբեև մեռած նախահաշիվներով, և առաջնորդվում է միայն ոգուտի նախատեսությամբ, մինչդեռ մեր տրեստը կամ պետք է կառչի նախահաշվին, ի վնաս գործի տնտեսության վարելուն, կամ պետք է խնդրի գլավկին վերաքննել այդ նախահաշիվը, վորի վրա ամիսներ, շաբաթներ և՝ լավագույն դեպքում, որեր եյին անցնում։

Մեր գործարանը կարող եր մրցել մասնավորի հետ, յեթե կապիտալիստը արտադրության հաստատ կարեոր 3—5 փութ կաշին գնում է առանց հետաձգման, իսկ մեր տեսուչը պետք է անվերջ հեռախոսի թղթակցի իր տրեստի հետ, վորպեսզի թույլտվություն ստանա գնելու այդ կաշին։

Պարզ բան է, վոր պետական տնտեսությունը չեր կարող հաղթանակ տանել կապիտալիստական տնտեսության վրա, յեթե մեր արդյունաբերությունը, փոխադրությունը կայլն, շարունակվեյին տարվել հին ձևով, այսինքն՝ գլավկիզտարար։

Ուստի և Խորհրդային իշխանությունը 1921 թ. վորոշեց վերջ տալ գլավկիզմին՝ անցնելով աշխատանքի «առևտրական» սկզբունքներով կամ՝ ավելի ճիշտ արտահայտած, տնտեսական հաշվով։

Ատիճանաբար, տարեցտարի, գրեթե մինչև վերջը մենք մեր հաշիվները փակեցինք գլավկիզմի հետ և տնտեսությունը վարելու համար ստեղծվեց այսպիսի մի գրություն. ձեռնարկությանը բաց է թողնվում գույք. սկզբնական շրջանում ցույց է տրվում ոգնություն, բայց ձեռնարկության առջև դրված է մի լիովին վորոշ խնդիր՝ ինչպես չանել։

Ձեռնարկությունն իրավունք ունի գնել ու վաճառել, տնորինել իր շրջանառության միջոցներն այնպես, ինչպես պահանջում է տնտեսական հաշվետեսությունը. մեկ խոսքով՝ կյանքի հետ գնալ, հարմարվել գործի իրական դրությանը, ջանալով իր շահերին ծառայեցնել գների, պահանջի և առաջարկի տատանումները (չմոռանանք՝ վոր պետությունը կանոնավորում է և՛ գները, և՛ պահանջն ու առաջարկը, ուստի և ձեռնարկության ազատությանը մի վորոշ սահման է դրված)։

Այդպիսի աշխատանքը՝ տնտեսական հաշվետեսության հիմունքով հնարավորություն է տալիս սըն-

տեսարարներին հայտնաբերել իրենց բոլոր ընդունակությունները (այն ամբողջ ինիցիատիվան, ձեռներեցությունը), վորոնք մոռացության ենթարկված գլավկիզմի կողմից։

Այժմ մեր տնտեսարարներն այսպիսի վիճակի մեջ են դրված. ձեռնտու գնով ապրանք են պատրաստում, այդ ապրանքը նրանցից գնում են, ուրեմն աշխատավարձը վճարելու, վառելիքի, հում նյութերի, մթերքների և նման բաների ծուրհակները վճարելու միջոց կա. իսկ յեթե տրեստը չկարողանա հարմարվել գնորդին, յեթե նա վատորակ ապրանք կըպատրաստի, են ել թանդ գնով, առանց դրամի կըմնա, կըսնանկանա։

Խորհրդային իշխանությունը գիտե, վոր կենդրոնից տնտեսություն կառավարել չի կարելի. կենդրոնից կարելի յե միայն ուղղություն տալ նրան, կանոնավորել, պլանի յենթարկել։

Յեթե ռազմական կոմունիզմի տարիներում մենք այնուամենայնիվ կենդրոնից ելինք կառավարում, այդ նախ՝ այն պատճառով, վոր տեղական որգանները, վորպես ջահել, անփորձ, անկարող ելին արդյունաբերություն վարել առանց կենդրոնի անմիջական ղեկավարության. յերկրորդ՝ այն պատճառով, վոր բանող գործարաններն ու ֆաբրիկանները՝ համեմատաբար սակավ ելին. յերրորդ՝ վոր պատերազմը արագություն և մղում եր պահանջում, ինչպես հնարավոր եր այն տարիներում միայն Գլավկիզմի միջոցով։

Այժմ հանգամանքները փոխվել են. պատերազմ չկա, տեղական որգանները փորձառություն ձեռք բերին, տնտեսական կյանքն ել տարեցտարի ավելի ե

բարդանում, ուստի և կենդրոնի ուժից վեր կըլիներ, յեթե նա մտքով անցկացներ անմիջապես վարել արդյունաբերությունը, փոխադրությունը, առևտուրը...

Ամենից վաղ Գլավկիզմը դուրս մղվեց արդյունաբերությունից։ Այստեղ մենք սկսեցինք տրեստներ ստեղծել, վորոնք տարեցտարի ավելի ազատություն ելին ստանում իրենց գործունեության մեջ։ Տրեստն այժմ բոլորովին ազատ է ամեն տեսակ գլավկներից, վորովհետև նրանք ել չկան։ Բայց դեռ մի միջավայր կա, վորտեղ գլավկիզմի գործը չի վերջացնել. այդ տրեստների վարչության և գործարանների ու ֆաբրիկաների տեսուչների հարաբերությունն է։ Ինչպես վոր առաջ գլավկը ամեն կողմից խնամակալության տակ եր առել տրեստին, այդպես ել այժմ տրեստը խնամակալն է իր տեսուչների։

Գործարանը առանց տրեստի թուլատրության, իրավունք չունի վաճառելու կամ գնելու, թեկուզ ամենամանր բանը. տրեստն ինքն է ուզում մատակարարել թե մասսայական հում նյութը, և թե այն նյութերը, վորոնք սակավ քանակով են պահանջվում, և վորովհետև ամեն անգամ նա չի կարող բոլոր կարևոր բաները ձեռք բերել, ուստի թույլ է տալիս տեսչին ձեռք բերել, ինչ վոր պետք է։

Դիմումի և թույլտվության մեջ շատ որեր և նույնիսկ շաբաթներ են անցնում։

Այս ամենը ձգձգում է գործարարի աշխատանքը, դանդաղեցնում՝ գործարանական միջոցների շրջաբերությանն ու արագությանը. մեկ խոսքով՝ խանգարում է աշխատանքը, վոր դրված է տնտեսական հաշվետվության վրա։

Բացի դրանից տրեստը հաճախ վատ հում նյութ է բաց թողնում, նրա գինը չի հայտնում, վառելիքի գինը չի ասում, ածուխն ընդունում է առանց նայելու, նաֆթը առանց հետաքրքրելու, թե կեղտոտված չէ արդյոք կայլն։

Այս ամենի մեջ վոչ վոք անմիջապես շահագրգռված չէ. տրեստը հանցանքը քցում է գործարանի վրա, իսկ գործարանն ակնարկում է հում նյութի վատվորակությունը և այլն։

Պարզ է թե՝ անհրաժեշտ է հիմնարկի կառավարման մեջ տեսչին ավելի ազատություն տալ, իսկ տրեստը վերածել դրամ հայթհայթող մասսայական մթերքով մատակարող և առուծախս անող որդանի. եվ չենք խոսում, ինքնըստիքյան հասկանալի պլանի յենթարկելու և կանոնավորման խնդիրների մասին։

Գործն այժմ դեպի այդ կողմն է շարժվում։

Փոխադրության գործում գլավկիզմն սկսեց անցյալի բաժին դառնալ մոտավորապես 1-1½ տարի անց։

Ցերկաթուղու ճանապարհներին սկսեցին առաջ գալ վարչություններ, վորոնց լայն իրավունքներ տրվեցին։ Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը (ԱՊԽ—СТО) այսպես եվ գրում եր.

«Նպատակ ունենալով զարգացնել յերկաթուղային փոխադրության առևտրատնտեսական գործունեությունը տեղական միջոցների ավելի լայն ոգտագործության ճանապարհով, այն միջոցների, վոր սպասարկվում են շրջաններին ավելի ինքնուրույնություն ու նախաձեռնություն տալու համար ճանապարհների առևտրական շահագործման և նրանց տնտեսական գործունեության խնդրում, ինչպես և անմիջական կապ

և համաձայնություն ստեղծելու փոխադրական գործունեության և ժողովրդական տնտեսության մյուս որգանների աշխատանքի մեջ, տեղերում ստեղծվում են ճանապարհների վարչություններ»։

Նրանց իրավունք եր տրվում ձեռնարկություններ վերցնել կապալով, նյութեր, վառելիք, գործիքներ, պարեն պատրաստել վաղորդ, տեղական փոխադրությունների համար սակագին նշանակել կայլն։

Զրային փոխադրության մեջ նման իրավունքներ տրվեցին պետական նավարկությանը, վոր կատարում եր շոգեշարժ և վոչ շոգեշարժ նավատորմի ընտիր միավորներին։

Գլավկիզմն ամենից ուշ դուրս գնաց կոոպերացիայից։

Բանն այն է, վոր ռազմական կոմմունիզմի տարիներում կոոպերացիան Պարժողկոմի որգանն եր, ծառան, նրա պատվերներն եր կատարում. իրապես կոոպերացիան եվ ռազմական ապպարատ դարձավ, վորի տեղական որգանները պետք է յենթարկվեն բարձրագույններին։

ՆԵՊի տարիներում կոոպերացիան ազատություն ձեռք բերեց, Պարժողկոմից անկախ հաստատություն դարձավ, սակայն դեռ յերկար ժամանակ նրանում նախկին գլավկիզմի վոգին եր թագավորում։

Կենդմիությունը (Центросоюз) ճնշում եր ստորին կոոպերացիային, ինչպես վոր գլավկները ճնշում եյին տրեստներին, իսկ տրեստներն եվ դեռ ճնշում են իրենց գործարանական վարչություններին։

Վարկերը գլխավորապես կենդրոնին եյին անցնում, իսկ պերիֆերիային (կենդրոնի շրջապատը)

ընկնում էին խղճուկ փշրդնքներ. կենդրոնը փոխանակ ուղղություն տալու, կանոնավորելու, պլանի յենթարկելու, շարունակ առևտուր էր անում, «Մյուր ու Մերլիզ» դառնալով։

Կոոպերացիան պետք է սպառողի կազմակերպություն դառնար, նրա համար խանութներ, պահեստներ, մագազիններ ստեղծող, մինչդեռ նա ինքն իրապես խանութ դարձավ, վորին թող ծառայի սպառողը։

Սակայն այստեղ էլ Գլավկիզմը տապալվեց և այժմ մեր կոոպերացիայի կենդրոնները հետզհետե այնպիսի որգաններ են հանդիսանում, վորոնք սպասարկում են կոոպերացիայի շղթայի միջին և ստորին ողակներին։

Գլավկիզմը փորձեց իր բունը հյուսել ֆինժողկոմում, խոսք յեղավ զանազան բանկերի անկարևորության մասին, յերբ Գոսբանկ կա, սակայն այդ (ֆինանսական) գլավկիզմը հեշտությամբ ջարդ ու փշուր յեղավ։

Ցեվ հիրավի, յերբ մենք ապրում ենք զարգացող դրամական տնտեսության ժամանակաշրջանում, յերբ վարկը դարձել է զարգացման մի հզոր միջոց՝ և՛ արդյունաբերության, և՛ գյուղատնտեսության, և՛ առևտրի, և՛ կոոպերացիայի համար... յերբ վարկը մի նուրբ, բարդ, ամենափոքր ձգձգումը չհանդուրժող գործ է, կարելի՞ յե ուրեմն նրան կենդրոնացնել մեկ հաստատության մեջ։ Կրկարոդանա Գոսբանկը դեպի իրեն քաշել տրեստի և սինդիկատի ազատ միջոցները, ինչպես վոր արեց արդյունաբերական բանկը։ Կրկարոդանա նա նույնն անել և կոոպերացիայի, արտաքին առևտրի, կոմմունալ տնտեսության վերաբերմամբ, ինչպես վոր անում են և պետք է անեն Համկոոպբանկը, Արտաբանկը, Կոմմունբանկը և այլն։

Կրկարոդանա Գոսբանկն այնպես լավ ուսումնասիրել տնտեսական բոլոր ճյուղերը, ինչպես ուսումնասիրում է Արդբանկը՝ արդյունաբերությունը, Համկոոպբանկը՝ կոոպերացիան, Գյուղատնտեսբանկը՝ գյուղատնտեսությունը և այլն։

Գարդ բան է վոր այստեղ Գլավկիզմին չհաջողվեց դիմանալ։

Այժմ մենք ամբողջ տնտեսության կառավարման համար այնպիսի ձև ունենք, վոր հնարավորություն է տալիս բոլոր աշխատավորներին հանդես բերել իրենց շնորհքը և ինքնագործունեությունը շատ լայն սահմաններով։ Ճիշտ է, դեռ տրտունջներ են լսվում թե՝ կառավարման գործում ազատությունն անբավարար է, բայց այդ բանը շատ հասկանալի յե։

Մենք գործունեության ազատությունն ենք մատնում տնտեսական կառավարության մեջ վոչ թե «ազատության» համար, այլ նրա համար, վոր ազատությունը տնտեսության համար ոգտակար է։ Բայց բանն էլ հենց այն է, վոր կան սահմաններ, վորոնցից դենն անցնելը վտանգավոր է, վնասաբեր է տնտեսության համար։

Ալբ մեր ույժը, Խորհրդային կառավարության ույժը, վորով նա տարբերվում է բուրժուական կառավարումից նրանում է, վոր մենք կարող ենք մշակել և կյանք մտցնել տնտեսական մի, ընդհանուր պլան։

Բուրժուական հասարակության մեջ մասնավոր սեփականությունը նվիրական է և անձեռնմխելի. ա-

մեն մի գործարանի, տրեստի կամ սինդիկատի վրա տարածվում է գաղտնիքի անթափանց վարագույր, և նույնիսկ պետական իշխանությունը չի կարող հետքաշել այդ վարագույրը, վորովհետև ինքն՝ այդ իշխանությունը սահմանված է բուրժուազիայի ձեռքով։

Այնտեղ տնտեսությունը զարգանում է առանց պլանի, պարբերաբար. այնտեղ յուրաքանչյուր ձեռնարկությունն ընդարձակվում է, ընդարձակվում է կապիտալիստի անձնական հաշվետեսությամբ. նույնը և նոր գործարաններ կառուցանելու խնդրում. այնտեղ վոչ վոք չգիտե թե՝ մի տարուց հետո վորևե ապրանքներից քանչքան կըմշակվի, մեկ կամ հինգ տարուց հետո քանի հիմնարկություն կբացվի. այնտեղ չի կարելի դուշակել շուկայի ապրանքների վոչ գները, վոչ քանակը։

Բուրժուական հասարակության մեջ արտադրությունն ու առևտուրը կազմակերպված են միայն առանձին հաստատությունների մեջ. ֆաբրիկայում՝ ընդանչելի կազմակերպություն, առևտուրի պահեստների դարակների վրա ապրանքները դարսված են որինակելի կարգով։

Մինչդեռ շուկայումը՝ քաոս, արդյունաբերությունն ամբողջապես՝ տարերք. չկա պլան և չի կարող լինել։

Խորհրդային իշխանությունը կարող է ապրել ուրիշ հիմունքներով։ Խորհրդային պետության ձեռքումն է գտնվում ամբողջ խոշոր արդյունաբերությունը, բոլոր յերկաթուղային փոխադրությունը, գետային և ծովային նավատորմի մեծ մասը, ֆինանսները, բանկերը։

Խորհրդային պետությունը հնարավորություն ու-

նի՝ այս կամ այն ճանապարհով, մերկայնել մասնավոր արտադրողներին ու առևտրականներին։

Մեկ խոսքով՝ մեր իշխանությունը իրոք կարող է իմանալ տնտեսության դրությունն ու զարգացումը թե նրա ամբողջությամբ և թե նրա գանազան ճյուղերով ի դեմս արդյունաբերության, գյուղատնտեսության կայլն։

Բացի դրանից Խորհրդային կառավարությունը կարող է միջամտել տնտեսական տարերքին և կազմակերպել այն։

Յուրաքանչյուր ձեռնարկություն, վոր քարածուխի արդյունաբերությունը չափազանց առաջ է գնացել, վորի հետևանքով ածուխն ամբողջապես չի արտահանվում, մենք հրամայում ենք քարածուխի շրջաններին կանգնեցնել արդյունաբերության հետագա մեծացումը։

Կուսակցության 44 պլենումը նկատեց, վոր յերկիրը մեծագույն ապրանքի մեծ քանակության ավելի կարիք ունի, քան թե դրված է ծրագրի մեջ և ահա նա վորոշում արեց՝ ծրագիրն ընդարձակել 15 տոկոսով։

Բուրժուական հասարակության մեջ մանածագործական ֆաբրիկայի վաստակը մտնում է նրա սեփականատիրոջ գրպանը, իսկ այժմ Խորհրդային իշխանությունը կընայի, կըհաշվի, կըխորհի թե ո՞ւր ուղղի այդ վաստակը, դեպի նույն ֆաբրիկա՞ն, դեպի մեքենաների գործարա՞նը, թե՞ տա ուսուցիչներին, վորպես ռոճիկի հավելումն։

Մենք արդյունաբերության գանազան ճյուղերի համար ծրագիր ենք մշակում, մենք աշխատում ենք գանազան արժողության դրամ բաց թողնել պլան-

ներով ըստ առանձին ռայոնների, մենք հաշվում ենք թե յերբ պետք է ուժեղացնել արտահանությունը և յերբ ներմուծումն հայլն։

Յեվ այդ բոլոր պլանները, ծրագրերը մշակվում են տնտեսության բազմակողմանի ուսումնասիրության հիմունքով, հաշվի առնելով նաև շուկայի պահանջները և սպառողների պես-պես խմբերի գնողական ունակությունը և շրջանառության մեջ յեղած դրամի քանակը, դրամանիշների նոր դումարների բաց թողնելու հնարավորությունը և ուրիշ շատ բան։

Տնտեսության այսպիսի յեղանակով միայն մենք կարող ենք մեր ձեռքումն յեղած միջոցները ոգտագործել առավելագույն շահավետությամբ։

Սկզբում մենք պլանի յենք յենթարկում տնտեսության միքանի շրջան, հետո մենք ընդարձակում ենք այն, մինչև վոր վերջապես ամբողջ տնտեսությունը դարձնում ենք պլանային։

Այն սահմանները, վորոնց մեջ մենք կարող ենք տանել տնտեսական մի, ընդհանուր պլան, շատ հանդամանքներից կախումն ունեն։ Որինակ, յեթե մենք ֆաբրիկանների մատակարարմանը և նրանց արտադրությանը չենք տիրել. կարող է խոսք լինել արդյունաբերության պլանավորման մասին. ախր յեթե ֆաբրիկաներն իրենք չգիտեն, թե վաղն ինչքան կարտադրեն, մենք ել վորտեղից կիմանանք տրեստների և ամբողջ արդյունաբերության մշակման մասին։ Ինչքան ավելի որինաչափ, ինչքան ավելի սահուն, ինչքան ավելի առողջ է արդյունաբերությունը, այնքան ել լայն կլինի պլանավորման սահմանները։

Կարող ենք բամբակի արդյունաբերության արտադրողական ծրագիրը ուրվագծել, յեթե մեզ հայտնի չեն վոչ բամբակի ցանքսերի տարածությունը, վոչ բերքի չափը, վոչ ել բամբակի գինը։

Ի հարկե, չենք կարող. ուրեմն վորքան լավ է դրված հաշվեավորությունը, վորքան լուրջ և արագ է աշխատում վիճակագրությունը, այնքան ել լայն կը լինեն մի, ընդհանուր տնտեսական պլանի սահմանները։

Այլևս. մենք նույնքան կախումն ունենք բուրժուական շուկաներից, վորքան նրանք կախումն ունեն մեր վուշից, կանեփի թելից, կաշուց, հացից։ Յեթե մեր հարաբերությունների մեջ արտասահմանյան պետությունների հետ մենք ընդհարումներ ունենանք, նրանք անպատճառ կազդեն տնտեսության վրա, յեթե արդյունաբերության ծրագիրը կազմված է այն յենթադրությամբ, թե արտահանությունն ու ներմուծումը իրար համապատասխան են, ծրագիրը կը քանդվի, յեթե քանդվի ներմուծումը կամ արտահանումը։

Այս ամենը հասկանալի յե. և մենք միայն հիշեցնել կամեցանք, թե պլանը պետք է աստիճանաբար լայնանա, շրջան-շրջանի յետևից, տարեցտարի։

Յեվ ահա մեր առջև դրված է մի շատ դժվար խնդիր՝ ամրապնդել պլանը, հանրապետական կանոնավորումը, միաժամանակ այնպիսի պայմաններ ստեղծելով, վորոնք ոգնեին տնտեսարարներին լիովին հայտնաբերել իրենց նախաձեռնությունն ու ինքնուրույնությունը։

Մեկ հասարակ որինակ առնենք. կարող է տրեստը մեծացնել տանիքի յերկաթի մշակումը առանց բարձր որդանի թույլավորության, յեթե այդ մշակումը

նախատեսված է ծրագրի մեջ ավելի սակավ չափով, քան շուկան է պահանջում։

Մի կողմից տրեստը տեսնում է թե ինչպիսի պահանջ կա. ավելանում է նա, թե պակասում. աբրեստն ուժեղացնելով տանիքի յերկաթի մշակումը, ստանում է շրջաբերության լրացուցիչ միջոցներ. մյուս կողմից եվ ուժեղացնելով մշակումը, միջոցներ դնելով վառելիքի, հում նյութի, նյութեղենների վրա, կարող է առանց դրամի մեկ, չկարողանալով աշխատավարձերը վճարել. պարտք վերցնելը կաճի և պետությունը վերջիվերջո ստիպված կըլինի փոխատվություն տալ տրեստին, վոր պլանով նախատեսված չէ. յեթե այդպիսի փոխատվություններ շատ տրվեն, այդ դեպքում պետք է դիմենք դրամ տպելու դազդյահին, մեծաքանակ թղթադրամ կտրենք և զցենք խորհրդային ռուբլին։

Այս դրությունից ինչպես դուրս գանք։

Մեր ընթերցողն այս հարցին վոչ մի պատասխան չի ստանա, յեթե նա սպասում է թե այդ պատասխանը մի մշտական կանոն կըլինի՝ բոլոր ժամանակների համար պարտադիր։

Այստեղ պետք է աշխատանք թափել, շրջահայաց լինել թե ինչ չափով մեր տրեստները զարգացել, ամրացել խելացի յեն դարձել, ինչ չափով կարող են հաշվի առնել շուկայի պարագաները (կոնյուկտուրա) եայլն։

Այս ամենից և ուրիշ շատ խնդիրներից կախումն ունի այն հանգամանքը, թե շատ ազատություն պետք է տալ տրեստին, թե սակավ։

Այս որինակիցն ակներև է, թե այնպիսի պայ-

մաններ ստեղծելու խնդիրը, վորոնց ժամանակ առանձին որգաններին և աշխատավորներին մեծ չափով ազատություն կըտրվի գործելու, չի լուծվում մի պարզ «տալ» կամ «չտալ» բառերով։

Այդ՝ ինչպես ասում են փաստի խնդիր է։

Պետք է ուսումնասիրել, թե այդ բացատրությունը չի հարվածի խորհրդային իշխանության պլանային գործունեության։

Սխալվում են նրանք, վորոնք կարծում են թե՝ որինակ, տեսուչների ազատությունը հակասում է պլանին. սխալվում են և մյուսները, վորոնք պահանջում են «ազատություն» հոգուտ հենց նույն պլանի։

1921 թ. մենք տրեստներին շատ սահմանափակ ազատություն ավինք, վորովհետև վախենում եյինք չլինի թե նրանք «ծախսոտեն», կորցնեն իրենց հանձնված դույքը։

Պետք եր առաջուց տնտղել հողը և հետո ընդարձակել իրավունքներն ու պարտականությունները։

Բայց յերբ տեսնում յես, վոր տեղական տնտեսարարները հասունացել են, սկսել են բավականին հմտանալ աշխատանքին, վոր նրանց «ազատությունը» գործին ոգտակար է, մեծ սխալ կըլիներ շարունակել ճնշել այդ տնտեսարարներին և անտեղի խնամակալությամբ սպանել նրանց մեջ ինքնագործունեությունը, հնարագիտությունը, նախաձեռնությունը։

Քանի ավելի յենք հասունանում և սովորում, խորհրդային կենդրոնական որգաններն այնքան ավելի յեն հենվում խորհրդային պերիֆերիայի (տեղական որգանների) վրա, այնքան ավելի ուշադիր վերաբերմունք ունի կենդրոնը դեպի պլանային և կանոնավորման խնդիրները, կառավարելու գործը՝ գրեթե ամբողջովին, հանձնելով տեղական որգաններին։

7. ՄԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Եթե համեմատենք թե մինչ-պատերազմյան Ռուսաստանում մեր տնտեսության հավասար մասերը՝ խոշոր արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը, առանձին-առանձին վերքան են արտադրել կը տեսնենք, որ նրանք գրեթե հավասար են։

Ըստ միքանի հաշիվների 1912 թ. գյուղատնտեսությունը 6,100 միլիոն ռուբլու արդյունք եր տվել, իսկ խոշոր արդյունաբերությունը՝ 5,600 միլ. ռուբլու։ Հետևաբար գյուղատնտեսությունն առաջին տեղն և բռնում, վոչ միայն ապահովելով բնակչությանը իր արդյունքներով, վոչ միայն արդյունաբերությանը հում նյութ մատակարարելով, այլև թե՛ մեկը և թե մյուսն արտասահման արտահանելով։

Մեզնում գյուղական տնտեսությունը տնտեսական ճակատի մի կարևորագույն մասն է՝ վոչ միայն արտադրության ծավալով, այլև գյուղացության թվով։

Ճիշտը չգիտենք թե քանի գյուղացիական տնտեսություն ունինք, բայց մոտավոր բավական ուղիղ թվական տվյալներն ասում են՝ 22 միլիոն։

Այս 22 միլ. տնտեսությունները մանր և միջակ հողամասերի մի հսկայական ծով են ներկայացնում. նրանցից ամեն մեկի վրա սակավաթիվ խոշոր և մանր անասուններ կան. այդ տեղերում բանվորական վարձու ույժ և գործադրվում, գրեթե բացառապես գյուղացիական ունևոր խավերում։ Ռուսաստանի մինչպատերազմյան գյուղացությունը կիսաքաղց եր և տրեխավոր. այժմ նա սկսում է իրեն համար ճանապարհ բանալ դեպի մի լավ կյանք կուսակցության, միությունների և խորհուրդների յեռանդուն մասնակցությամբ։

Շարժումը դեպի ավելի լավը մեր գյուղատնտեսության մեջ վաղուց չէ, վոր ծագել է, միայն 1923 թվականից, իսկ մինչև այդ նա շարունակ իջնում եր՝ ցանքսերը պակասում եյին, անասնապահությունը կրճատվում եր։

Բացառություն եյին միայն այն շրջանները, վորոնք վաղ ժամանակներից իրենց բերքովը չեյին կառավարվում և ստիպված եյին հացառատ նահանգներից ներմուծվող հացը գնել, ինչպես՝ Ուկրայնայից, Վոլգայի շրջանից և Հյուսիսային Կովկասից։

Սովի և պարենամատարումի տարիներում հյուսիսային նահանգների գյուղացիները պետք է աճարի ցանքսերը մեծացնեյին, վորպեսզի առանց հացի չը մնային։

Յեվ մենք տեսնում ենք, վոր կենդրոնական արդյունաբերության շրջանում ցանքսի տարածությունն ընդարձակվեց դեռ 1921 թվականին. նույնը՝ Բելոռուսիայում, Պրիազովրնի յերկրում, Մերձուրալյան և Հյուսիսային շրջաններում։

Բայց ամբողջ Միության մեջ ցանքսերը պակասում եյին մինչև 1923 թ., յերբ նրանք վերջապես ընդարձակվեցին։

Յեթե 1916 թ. ցանքսի տարածությունն ընդու-

նենք 100, 1920 թ.՝ 84½ և, 1921 թ.՝ 79, 1922 թ.՝ 68, 1923 թ.՝ 81, 1924 թ.՝ 88։

Զարմանալու բան չկա, որ ցանքսերն սկսեցին տալ միայն 1923 թվականից. ախր այնպիսի կատաստրոֆներ, ինչպիսին 1921 թ. յերաշան եր, անհետ չեն անցնում։

Բացի դրանից պետք է հիշել, որ Նեպի (նոր տնտեսական քաղաքականության) առաջին տարիներում արդյունաբերությունը գյուղատնտեսությանը բան տալ չեր կարող, որ ոգներ նրան վոտքի կանգնելու։ 1922 թ. մենք յերաշտի հետևանքներն ապրեցինք, իսկ 1923 թ. արդեն սկսեցինք վերելքը։

Այժմ՝ 1916 թվականին հասնելու համար, մեզ պակասում է մոտավորապես 12 դեսյատին մինչհեղափոխության յուրաքանչյուր 100-ին։

Մեր տնտեսագետներն ու վիճակագիրները կարծում են, որ յերկու տարուց հետո մենք կըհասնենք 1916 թվի ցանքսերի չափին, իսկ մինչպատերազմականին՝ յերեք տարուց հետո։

Ցանքսի տարածությունն արդեն մոտեցել է 1916 թ. մակերևույթին մի շարք շրջաններում. հաց սպառող շրջանում նա բարձր է 1½ տոկոսով. Ուկրայնայում և Սիբիրում 1916 թ. հասնելու համար պակասում է 2½—4 տոկոս. վատ է Կիրգիզստանում և Հարավ-Արևելքում, որոնք վնասվեցին 1921 և 1924 թ. և վատ բերք ստացան 1923 թ.։

Յերաշտավոր շրջաններին մենք հասցնում ենք և՛ հացահատիկ, և՛ տրակտորներ, և՛ ոգնում ենք մելիորատիվ (հողը բարելավելու) աշխատանքներով։ Խորհրդային իշխանության ոգնությամբ այդ տեղերի գյուղացությունն ավելի արագ և վոտքի յելնում, քան այն գյուղացությունը, որ ինքն իրեն է թողնված։

Ցանքսերի տարածության ընդարձակմանը՝ դժբախտաբար համաչափ չեր հացահատիկի ընդհանուր բերքը, որովհետև նա տարեցտարի պակասում եր։

1922 թ. բերքը տվել է՝ աճար, ցորեն, վարսակ, դարի, հնդկացորեն, կորեկ, յեգիպտացորեն և ուրիշ հացահատիկներ՝ 2,868 միլ. փութ, 1923 թ.՝ 2,802 միլ. փ., 1924 թ.՝ 2,564 միլ. փութ։

Այս շատ քիչ է, 1924 թ. համար հարկավ թե բավական լինի, այնպես որ մենք 1925 թ. պետք է ցորեն գնենք արտասահմանից։ 1216 թ. համեմատությամբ, յերբ բերքը մոտավորապես 3.855 միլ. փութ եր, այս կըլինի 67%, այսինքն՝ ⅔-ը (մոտավորապես)։

Մեզ պետք է գոնե մի առատ բերք, որի ոգնությամբ հացի տնտեսությունը վոտքի կանգնի։

Բացի բերքից, հնարավոր է վոտքի կանգնել հողի մշակության բարելավումով, ուժեղ պարարտացումով և այլն, ինչ որ հետզհետե մտնում է մեր գյուղը, բայց դանդաղ, շնորհիվ գյուղական աղքատության։

Հետևաբար պետք է նկատենք, որ մեր գյուղատնտեսությունը հացի, հացահատիկի տեսակետից վատ է գնում մինչև վերջին (1924-25) թվականը։

Ուրիշ դրություն է տիրում գյուղատնտեսության մյուս ճակատներում։

Առնենք նախ անասնապահությունը։

Այստեղ ել ցանքսերի տարածության նման, վերելքն սկսվեց միայն 1923 թ. ընդ որում ձիերի վերաբերմամբ գործը վատացավ նույն 1923 թ.։ Ընդհանուր վերելքը նկատված է միայն 1924 թ.։

Այսպես բոլոր անասունների քանակը 1916 թ. համեմատությամբ, վոր 100 է ընդունվում, եր՝

1922 թ.	64.
1923 թ.	68.
2924 թ.	83.

Մինչհղափոխության ժամանակների համեմատությամբ ամեն մի հարյուրին պակասում է մեզ 17։

Պետք է դիտել՝ վոր հատկապես վատ է գործը ձիերի վերաբերմամբ։

Անասունների քանակն 1919 թվականին ընդունելով 100, կըստանանք՝

	ձի.	խոշոր յեղջերավոր.	վոչխար.	խոզ.
1916 թ...	100	100	100	100
1922 թ...	64 1/2	70	65 1/2	44
1923 թ...	64	77	69	47
1924 թ...	70	91	83	87

Այս աղյուսակիցը յերևում է, վոր ձիերի կազմը դանդաղ է վերականգնում և թե՝ դեռ շատ տարի կանցնի, մինչև վոր ձիերի մինչհեղափոխական թիվն ստացվի։

Սրան կից, գյուղատնտեսությանը տրակտորներ մատակարարելու խնդիրն է առաջ գալիս, ինչ վոր անում ենք քաղցած, չոր ու ցամաք շրջանների համար։ Խոշոր յեղջերավոր անասուններն արագ են վերականգնվում և կարելի յե յենթադրել, վոր ամենաշատը, 2 տարուց հետո մենք կըհասնենք մինչպատերազմյան մակերևույթին։

Նույնը կարելի յե ասել խոզաբուծության և վոչխարաբուծության նկատմամբ։

Մեր անտեսության մեջ գլխավորապես աճում են

այն ճյուղերը, վոր շուկայի համար են աշխատում, այսինքն արտադրում են վաճառքի համար։

Կաթնատու անասունները տալիս են կաթ, պանիր, յուղ և աճում են բավական արագ թափով. խոզերը հետզհետե ավելի գործածական են դառնում քաղաքում և արտահանվում արտասահման, ուստի և խոզաբուծությունը մի տարվա ընթացքում դրեթե կրկնապատկվում է։

Վոչխարի միս շատ է գործածում բնակչությունը, իսկ բուրդը հարկավոր. է արդյունաբերության, ուստի և վոչխարի թիվն էլ է շատանում։

Մի խոսքով՝ անասնաբուծության մեջ բավական աչքի ընկնող վերելք ենք տեսնում, վոր հետևանք է քաղաքի գործածության աճման և արտասահման յուղ, թռչուն, ձու, խոզենի և նման բաներ արտահանելուն։

Միայն անասնապահությունը չէ, վոր վերելքով է գնում։

Արագապես ամրանում են բոլոր այն տնտեսությունները, վոր վաճառքի համար բերք են արտադրում, մանավանդ քաղաքի բնակչության համար (բանջարեղեն, միրգ, զանազան պտուղներ), արդյունաբերության համար՝ (բամբակ, վուշ, կանեփ, ծխախոտ, շաքարի ճակնդեղ), և արտահանության համար (վուշ, կանեփ և այլն)։

Գյուղատնտեսական հում նյութ վերամշակող արդյունաբերությունը բավական արագ է աճում մեզանում և շարունակ ավելի բամբակ, վուշ, կաշի յե պահանջում և այլն։

Ուստի զարմանալի չէ, վոր յերբեմնի բամբակագործ և վշագործ գյուղացիք սկսում են նորից վերա-

դառնալ այդ մշակույթներին, որպես ցորենից և աճարից ավելի ոգտակար մշակույթների։

1922 թվականին, բամբակագործության ամենավատ տարին, մինչպատերազմյան բամբակի ցանքսերի տարածությունից մնաց միայն 7 տոկոս, առաջվա յուրաքանչյուր հարյուր դեսյատինից դատարկ եր մնացել 93 դեսյատին, բայց 1923 թ. 7-ի փոխարեն արդեն 25 եր, իսկ 1924 թ.՝ 56.

Ինչպես տեսնում ենք, այս մի չտեսնված արագ աճումն է։

Այդ բանը բացատրվում է ոչ միայն նրանով, որ բամբակի պահանջն է շատացել, այլև հեռվանք և Խորհրդային իշխանության առանձին քաղաքականության, որ Թուրքեստանին և Կովկասին ուղարկած հացով, շաքարով, չթով և ուրիշ ապրանքներով ապահովեց, առանց որի Թուրքեստանի բնակչությունը սովոր չեր կառավարվել։ Դեկխաներն իմանալով, որ շուկայում հաց և ուրիշ ապրանք կլինի, մեծացնում են բամբակի ցանքսերը. կրճատելով ցորենի ցանքսը, առանց վախենալու թե սովամաը կլինին։ Ուստի և համ բամբակի բերքը 1923 թ. մինչև 1924 թ. Թուրքեստանում 6 միլիոն փթից հասավ 14 ու կես միլ. փթի, Անդրկովկասում 800 հազար փթից՝ 3,700 հազար փթի, Բուխարայում և Խիվայում 1.600 հազար փթից՝ 3.800 հազար փթի։

Եթե բամբակի ցանքսերը շարունակեն այդպես էլ արագ աճել. նշանակում է մեղանում շուտով կը վերականգնվի մինչպատերազմյան տարածությունը։

Այդ մեզ համար շատ կարևոր է. ՍԽՀՄ բամբակի ամենախոշոր արդյունաբերությունն է (վշի գործվածքների

համեմատությամբ) և սպասարկում է իր հժան գործվածքներով (որինակ չթով) գլխավորապես աշխատավորական մասսային։ Քանի շատ գործվածք՝ պատրաստվի, այնքան էլ նրանց գինը ցած կլինի։ 1922 թ. վուշի մշակությունն այնքան շատ չկրճատվեց, որքան բամբակագործությունը, բայց՝ կիսից ավելի։

Վուշի գները գյուղացուն ձեռնտու չեյին և հողը կամ պարապ եր մնում, կամ ցանում եյին այնտեղ աճար և ուրիշ հացահատիկներ։ Վուշի ամեն մի հարյուր դեսյատին ցանքսից 1922 թ. մնաց միայն 40 դեսյատին։

Բայց ահա 1923 թ. դարձավ 50, իսկ 1924 թ.՝ 60։

Մեծած թելի բերքն ավելի շատացավ. 1923 թ. 11 միլ. փթի դիմացը 1924 թ. հասավ 15 միլ. փթի։ Այս բանը բացատրվում է բերքի բարձրացումով։ Մեզնից վուշ գնող արդյունաբերությունն էլ, արտասահմանն էլ սկսեցին ավելի խիստ վերաբերվել թելի տեսակներին, բարձր տեսակին լավ գին տալով։ Գյուղացին սկսեց ավելի ուշադրություն դարձնել ցանքսերի վրա՝ վուշի մշակության վրա ավելի աշխատանք և միջոց դնելով։

Վուշի մշակությից էլ ավելի արագ է վերականգնվում կանեփի մշակությը, այդ բանը բացատրվում է նրանով, որ հեղափոխության տարիներում այդ մշակությը սաստիկ ընկել եր։

1922 թ. կանեփի ցանքսի միայն մեկ հինգերորդ մասը մնաց (20 տոկոս)։ Կանեփի թելի արդյունաբերությունը՝ իր արագ աճման ընթացքում, կանեփի թելի պահանջը մեծացրեց, միաժամանակ աճել սկսեց նրա արտահանությունը։ Տնայնագործները նույնպես մեծացրին նրա վերամշակությունը։

1923 թ. ցանքսերն յերեք անգամ շատացան և մինչպատերազմյան 20 տոկոսի փոխարեն մենք արդեն ունեյինք 60 տոկոս, իսկ 1924 թ.՝ 77 տոկոս։

Ամեն մի 77 դեսյատին ցանքսին պետք է ավելացնենք 23 դեսյատին, վոր հասնենք մինչպատերազմյան մակերևույթին։

Բավականին նկատելի չափով վերականգնվում են և շաքարի ճակնդեղի ցանքսերը։ Այստեղ նկատի ունենալու յե, վոր մինչև հեղափոխությունը շաքարի գործարանատերերն իրենց տրամադրության տակ մեծ տնկարաններ ունեյին, վորոնց վրա ճակնդեղն ավելի կատարելագործված ձևով ևր ցանվում, քան թե ցանվում է գյուղացիական տնտեսություններում։

Հեղափոխության ժամանակ գործարանապատկան հողերի մեծ մասը գյուղացիների քեռքն անցավ և միայն մի փոքր տոկոսը վերադարձվեց մեր գործարաններին։

Յեթե նախկին տնկարանների շաքարի արդյունաբերության ձեռքումը լինեյին, ցանքսերն ավելի արագությամբ կըվերականգնվեյին, քան ինչ վոր լինում է այժմ։ Սակայն այժմյան վերելքն ել քիչ չե։

1922 թ. մինչպատերազմյան ցանքսերի 23 տոկոսը կար, 1923 թ. հասավ 31 տոկոս, 1914 թ՝. 44 տոկոս։

Աճում են ժախորկայի, ծխախոտի, ձեթաբեր բույսերի ցանքսը։ Մեկ խոսքով մենք՝ այսպես առած, շուկայի մշակությունների լավ աճելությունն ունենք։

Արագ են վերականգնվում գյուղատնտեսության այն ճյուղերը, վոր՝ դլխավորապես, սպասարկում են

շուկային. ուստի և գյուղական տնտեսությունն ավելի յե հարստանում, չնայելով վոր հացի բերքը յերկու տարի կրճատվում է։

Յեթե գյուղատնտեսության պրոդուկցիան արտահայտել կամենանք մինչպատերազմյան դներով, կըտեսնենք, վոր հացն ու կարտոֆիլը 1923—24 թ. տվել են 2,791 միլ. ռուբլի, իսկ 1924—25 թ.՝ 2.581 միլ. ռուբլի, այսինքն 8 տոկոս պակաս. մինչդեռ վուշը, կանեփը, բամբակը, շաքարի ճակնդեղն ու ծխախոտը 172 միլ. ռուբլուց հասել է 249 միլ. ռուբլու, այսինքն բարձրացել են 1 ու կես անգամ (45 տոկոս), անասնապահությունը 1.398 միլ. ռուբլուց՝ 1.699 միլ. ռուբլու, (22 տոկոս), այգեգործությունն ու գինեգործությունը 163 միլ. ռուբլուց՝ 181 միլ. ռուբլու (11 տոկոս)։ Հացի և կարտոֆիլի մեջ գյուղատնտեսությունը կորցրել է 210 միլ. ռուբլի, իսկ վերևում հիշված ճյուղերում վաստակել՝ 396 միլ. ռուբլի։

Նկատի ունենալով, վոր գյուղացիք արդեն մասնակի ճեղք են բաց արել տնտեսության հին ձևերի մեջ, վոր սկսում են արդեն բազմադաշտայնին անցնել, հաստատապես կարելի յե ասել, վոր դժվարատար մշակույթներն ընդհանրապես ավելի արագ կըզարգանան, քան հացահատիկայինները։

Մեր դժբաղդությունը հենց միայն այն է, վոր հաճարն ու՝ ընդհանրապես, հացահատիկային բույսերը հանդիսանում են առաջնակարգ, մինչդեռ նրանք ավելի պակաս ոգտակար են, քան վուշը, կանեփը, անասնաբուծությունը խոզաբուծությամբ հանդերձ։

Հաճար ցանող գյուղը միշտ տրեխավոր է. մեր գյուղացին ունեոր կըդառնա միայն այն դեպքում,

յերբ մեր դաշտերում կանաչին կըտա կորնկանը, յերբ անասունը կըդադարի հողը կխմորելուց, յերբ նույն հացն՝ ավելի մեծ չափով, քան այժմս է, կրկերցնենք անասուններին, առաջնություն տալով կաթին, յուղին, խոզենուն և նման բաներին։

Այժմ գյուղացությունը տնտեսավորության նոր ձևերի համբին է կանգնում և այդ ճամբի վերջը նախատեսել չես կարող։ Գյուղատնտեսության հեղափոխությունն ամբողջ Միության վերաբերմամբ թվելով արտահայտել չենք կարող. բայց առանձին տեղեկություններ կան զանազան շրջաններից և նահանգներից, վոր ցույց են տալիս արագ անցնումն դեպի նոր ճանապարհներ։

Ի հարկե, այդ անցնումն ավելի հեշտ և արագ է կատարվում արդյունաբերությամբ հարուստ նահանգներում, վորտեղ իրենք՝ գյուղացիներն էլ ավելի զրագետ են, վորոնց կապը շուկայի հետ ավելի ամուր է, վորոնց վրա բանվորների ազդեցությունը խիստ նկատելի է։

Որինակ՝ Մոսկվայի խորհուրդը հաղորդում է, թե 1923 թ. հողաշինարարական աշխատանքներ են կատարվել 151,500 դեսյատին տարածության վրա, իսկ 1924 թ.՝ 256,300 դեսյատին տարածության վրա. մինչդեռ հողաշինարարության համար գլխումն յեղել է 400,000 դեսյատին։

Յեռադաշտյանի դեմ մղվող պայքարի մասին նույն խորհուրդը գրում է թե՝ 1924 թ. նահանգի գյուղերի մեկ յերրորդից ավելի յե բազմադաշտյան ցանքաշրջանառությունը և յեթե նրանց վրա ավելացնենք այն՝ գրեթե, 2000 գյուղը, վորոնք պատրաստ

են բազմադաշտյան սիստեմին անցնել, բայց չեն անցնում կորնկանի սերմի պակասության պատճառով, ուրեմն 1—2 տարուց հետո յեռադաշտյան գյուղերի կեսից ավելին կըպակասի. վոչ մի կասկած չկա, վոր այժմ գյուղացին՝ ինչ էլ լինի, հին յեռադաշտյանին չի կառչի և այսուհետև հաճար էլ չի լինի։

Ընդհանրապես կարծում են, վոր գյուղացին տոհմական պատվավոր պահպանողական է, վոր վախենում է ամեն տեսակ նորությունից, ինչպես սատանան՝ խնկից, ըստ հավատացյալների համեմատության։

Այդ ըմբռնումը միանգամայն սխալ է։

Բանն այն է վոր ցարական Ռուսաստանում ամեն մի նորություն դյուղ եր մտնում պարոնի, վաշխառուի, սրիկյա-գործակալի (կոմիսիոներ) ձեռքով։ Գյուղացին քիմիական պարարտացման նյութ գնելիս՝ անպետք բաների դեմը կանգնելու վտանգն ուներ։ Նորությունից ոգտվելը գյուղացու համար վտանգավոր եր այն չափով, ինչ չափով վոր պահնատի միջոցներ չուներ։

Բացի դրանից, արդի գործիքներն ու մեքենաները, ցանքսի ընտիր նյութերը լավ արտադրող ցուլը կամ արու ձին շատ թանգ են և մեր տնտեսության ուժիցը ուղղակի վեր։

Վորտեղ տնտեսության մեջ նորությունները շահավետությամբ են գործադրվում, գյուղացին հաճությամբ և ընդհանրապես, որինակ՝ ամերիկական գյուղատնտեսության մեջ, ավտոմոբիլը սովորական բան է։

Մեր Միության մեջ, վորտեղ մենք աշխատում ենք գյուղացուն զրագետ դարձնել, հատկապես նրա

համար ցուցահանդեսների, դասընթացքների, լրագրության, հանրամատչելի գրականություն կազմակերպել, սկսում ենք գյուղատնտեսության գործին միացնել գյուղի ամենամեծ կուլտուրական ուժը՝ ուսուցչությունը,—մեր Միության մեջ գյուղացին մեծ արագությամբ ընդառաջ կը գնա նորին, մանավանդ վոր մեքենան, կամ կորնկանը գնում է արդեն վոչ թե սբիկա-գործակալների միջոցով, այլ մերոնց և կոոպերատիվ որգանների միջոցով, վորոնք շահագրգռված են՝ վոչ թե գյուղացիներին խափելով, այլ ամեն կերպ նրանց աջակցելով։

Մենք համոզված ենք, վոր մեր ավաններն ու գյուղերը հետզհետե ավելի հաճախ հրաժարվելու յեն յեռադաշտյան սիստեմից, արորից, նախորդապահ անասուններից և անցնելու յեն դեպի գութանը, բազմադաշտյան սիստեմը և դեպի բերը՝ նախորդի փոխարեն։

Այդ բանն ել ավելի անխուսափելի յե և այն պատճառով, վոր խորհրդային քաղաքը հետզհետե ավելի յե ընդառաջ գնում գյուղին, ինչպես նրա լավ բարեկամը։

Քաղաքը հետզհետե ավելի յե ձգում գյուղին դեպի լավագույն մի կյանք, վոր մատչելի չե մանր տնտեսատերերին։

Ցեվ վորովհետև մեր գյուղացին չի կարող խոշոր տնտեսատեր դառնալ այն պատճառով, վոր հողի առուծախն արգելված է և՝ բացի դրանից, ամբողջ գյուղացիությունը չի կարող հողաշատ լինել (հողը հերիք չի անի), ապա ուրեմն նրան մի միակ յելք է մնում՝

դեպի խոշոր արտադրություն կոոպերացիայի միջոցով։

Մանր տնտեսատերը մեն-մենակ չի կարող աղքատությունից դուրս գալ, վորովհետև գործիքները, մեքենաները, աղնվացնող արտադրողները և նման բաները թանդ են, ձեռք են բերվում տարիների ընթացքում։ Բայց համեմատաբար հեշտ է ձեռք բերել նույնիսկ թանդ մեքենաներ, յեթե հավաքաբար են ձեռք բերվում։

Լենինը գյուղատնտեսության խոշոր արտադրությանը ահագին, վճռական նշանակություն եր տալիս։

Նա գրում եր. «Հաղթելու, ստեղծագործելու և սոցիալիզմն ամրապնդելու համար, պրոլետարիատը պետք է կրկնակի կամ կրկնակի ու միասնական խնդիր լուծի. նախ՝ պետք է կապիտալի դեմ մղվող հեղափոխական կռվի մեջ իր նվիրական հերոսությամբ իր կողմը գրավի աշխատավորների և շահագործվողների ամբողջ մասսան, գրավի նրան, կազմակերպի, ղեկավարի բուրժուազիային տապալելու և կատարելապես խեղդելու նրա ամեն մի դիմադրությունը։ Ցերկրորդ՝ իր յետևից տանի բոլոր աշխատավորների և շահագործվողների մասսային, ինչպես և մանր բուրժուական տարերին դեպի նոր տնտեսական շինարարություն, ստեղծի նոր հասարակական կապեր, նոր աշխատավորական կարգապահություն, աշխատանքի նոր կազմակերպություն վոր կապում է գիտության վերջին խոսքն ու կապիտալիստական տեխնիկան գիտակից աշխատավորների մասսայական միությանը, վոր սոցիալիստական խոշոր արտադրություն է ստեղծում»։

Լենինը շատ անգամ է խոսել այդ մասին թե՝ գյուղը պետք է գնա դեպի խոշոր արտադրությունը. բայց գյուղացության համար այդ ճամբան միայն կոոպերացիան է։

Բայց ինչ է կոոպերացիան մեր՝ Խորհրդային պայմաններում արդյունաբերության փոխադրության, ամբողջ տնտեսության աճման ժամանակ։

Սոցիալիզմ ստեղծելու համար, մենք պետք է ընտեղծենք «արտադրական-սպառողական կոմմունաների ցանց, վոր բարեխղճորեն հաշվի առնեն իրենց արտադրությունն ու սպառողականությունը, աշխատանքը տնտեսեն, անշեղ կերպով բարձրացնեն նրա արտադրությունը»։ Ահա այսպես ենք նայում Լենինը կոոպերացիային։ Կոոպերացիայի մասին գրած իր հռչակավոր հոդվածում Լենինն ասում էր թե սոցիալիզմի համար մեզ անելու մի բան է մնում՝ աշխատավոր բնակչությանն ամբողջապես կոոպերացնել։

«Մեզնում՝ յերբ պետական իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքումն է, յերբ պետական իշխանությունն է արտադրության բոլոր միջոցների տերը, իրոք մեզնում մնացել է միայն բնակչության կոոպերացման խնդիրը։

«Յեթե բնակչության կոոպերացումը գլուխ գա առավելագույն չափով, ինքնըստինքյան նպատակին կըհասնի... Սոցիալիզմը»։

«Իսկապես, յերբ արտադրության բոլոր խոշոր միջոցները պետության ձեռքումն են, պետական իշխանությունը պրոլետարիատինն է, այդ պրոլետարիատը կապված է բազմամիլիոն մանր ու մանրագույն գյուղացության հետ, ապահովապես պրոլետարիատն է

ղեկավարում գյուղացությանը կայն,—իսկապես այս չէ՞ այն ամենը, ինչ վոր պետք է, վորպեսզի կոոպերացիայից, հենց միայն կոոպերացիայից, վորին մենք առաջ արհամարհում էին իբրև մի չարչիական բան և՝ վորին՝ մի վորոշ կողմից, այժմ էլ, Նեպի ժամանակ, արհամարհելու իրավունքն ունինք, մի՞թե այս չի այն անհրաժեշտը, վորպեսզի կառուցանենք մի կատարյալ սոցիալիստական հասարակություն»։

«Ուրիշ բան է բանվորական ամեն տեսակ միություն յերազել սոցիալիզմ կառուցանելու համար, ուրիշ՝ սովորել գործնականորեն կառուցանել այդ սոցիալիզմն այնպես, վոր ամեն մի գյուղացի կարողանա մասնակցել այդ կառուցմանը»։

«Իսկապես ասած, մեզ մնացել է «միայն» մի բան՝ մեր բնակչությունն այն աստիճանի «քաղաքակրթել», վոր նա հասկանա կոոպերացիային իր ամբողջությամբ մասնակցելու խոշոր ոգուտները և կարգավորի այդ մասնակցությունը։ «Միայն» այս։ Ուրիշ վոչ մի գերխնամություն այժմ մեզ պետք չէ սոցիալիզմին հասնելու համար»։

Ահա մի շարք հատվածներ Լենինի «Կոոպերացիայի մասին» հոդվածից՝ նրա վերջին կտակից։

Ի՞նչպես հասկանանք Լենինի կոոպերացիայի մասին ունեցած հայացքը։

Ի՞նչպես կարելի է սոցիալիզմին հասնել միայն ընդհանուր կոոպերացումով։

Ըստ Լենինի՝ խնդիրը շատ հեշտ է լուծվում։

Սոցիալիզմը կապիտալիստական սահմաններից դուրս զարգացող արտադրական ուժերի արդյունքն է։

Իսկ արդի արտադրական ուժերն ուրիշ բան չեն,

բայց յեթե խոշոր արտադրության գործողության մեջ։

Խոշոր արտադրության կազմակերպեցեք և հենց դրանով դուք սոցիալիստական հասարակություն կըստեղծեք, յերբ իշխանությունը պրոլետարիատի ձեռքումն է, յերբ հենց նրա ձեռքումն է խոշոր արդյունաբերությունը, փոխադրությունը, ֆինանսները և այլն։

Ցենթագրենք թե՝ ինչպես սեփականատեր, գյուղացին, վոր չի ընդունում «ես ու են զանազան» կոմունիզմները, պնդում է թե՝ ինքն իր գլխի տերն է, վոր ինքը վոչ մի բանի չի խառնվի և վոչ վոքի ճանաչել չի ուզի.—ահա, յերևակայեցեք թե ինչպես նա քայլ առ քայլ կընահանջի կոմունիստական գաղափարների առաջ և թե ինչպես հենց ինքը կոմունիստ կըդառնա։

Այս բանը յենթադրենք այն նպատակով, վոր պետքի բացարձակ տարակուսանքի մեջ չմնանք Լենինի այն մտքի առաջ թե գյուղացին սոցիալիստ չե, բայց ինքը սոցիալիզմ կըկառուցանի։

Կենցաղն է վորոշում մեր գիտակցությունը, հայացքները, ուսմունքը։ Յեթե գյուղական կենցաղը (կյանքը) մասնավոր-սեփականատիրական է, նրա հայացքներն ել սեփականատիրական կըլինեն, այսինքն՝ բուրժուական։

Ներկայումս տեսնում ենք, վոր գյուղական տընտեսատերը իր սեփական խրճիթումն է տպրում, իր սեփական կնոջ, յերեխաների, ձիերի, կովի հետ, աշխատում է իր սեփական հողի վրա սեփական գութանով կամ ցաքանով, բազար է կրում իր սեփական բերքը

սեփական սայլով և վաստակը ի հարկե դնում է իր սեփական քսակը։

Ո՞ւր է այստեղ կոմունիզմ։

Բայց ահա գյուղացին ուրիշ տնտեսատերերի հետ միասին գնեց մի բկատու (թորխ)։ Ահա բկատուի վերաբերմամբ նա այլևս մասնավոր սեփականատեր չե, այլ մասնակից հասարակական, համայնական (կոմունական) սեփականության։

Բացի դրանից գյուղացիք միասին գնեցին արտադրող մի ցուլ։ Այդ գնմանը մասնակցող ամեն մեկը, վոչ միայն տեր է հանդիսանում ցուլին ամենի հետ միասին, այլև սկսում է հասկանալ թե մասնավոր սեփականությունը միշտ լավ չե հասարակականից, կոոպերատիվից։ Ցեվ ճիշտ վոր մենակ լավ ցուլ չես գնի, վորովհետև թանդ է։ Հետզհետե, քայլ առ քայլ կոոպերացիան կընդգրկի գյուղացիական տնտեսության նոր ու նոր ասպարեզները։ Յերևան կըգան հասարակական վարձակայաններ (прокатный пункт), վաճառահանության սպառողական և՝ վերջիվերջո, արտադրական կոոպերացիաներ։

Տրակտորն առանձին-առանձին, մանր հողամասերի հողագործություն չի հանդուրժում, տրակտորը հողամեծ տարածություն և պահանջում, տրակտորը հողամասերի մեջն ընկած սահմաններն է ջնջում։

Ամենևին դժվար չե յերևակայել թե ինչպես մի որ ագրոնոմիան առանձին-առանձին տնտեսատերերը, ոգտվելով քիմիական պարարտացման նյութերով և կատարելագործված գործիքներով, միասին կըմշակեն ամբողջ հողը, միասին կըհավաքեն բերքը առանց խտրության թե ում հողամասից են հավաքվում և կըբա-

ժանեն իրար մեջ ցանքսի չափով, ինչքան վոր հասնում է այդ կոոպերացիայի ամեն մի անդամին։

Այսպես, գյուղացիք անձնական փորձով կըհասկանան գիտական խոշոր արտադրության հսկայական առավելությունները, վոր Խորհրդային հասարակության մեջ հնարավոր է միայն կոոպերացիայի միջոցով։

Սակայն խոշոր արտադրությունը զանազան պահանջներ ունի կյանքից. պահանջում է՝ դպրոցական աշխատանքն ուժեղացնել. մասնագետներից ոգտվելը, գրագետ մարդիկ պատրաստել, վորոնք տնտեսական գրանցում, հաշվառություն վարեն կայլն։ Վերջապես նա գյուղացոց կարիքներն է բարձրացնում և հնարավորություն է տալիս բավարարել այդ կարիքները։ Այսպես հետզհետե գյուղում կերևան կոոպերատիվ ուսումնարան և ուսուցիչ, ընդհան ուր ճաշարան, կոոպերատիվ մսուրներ՝ մանուկների համար, հանրությամբ վարձած գյուղատնտես, վերջապես ակումբ, թատրոն, կինո...

Եվ այս ամենը՝ գյուղացիների կյանքը բարվոքելով հանդերձ, կըստիպի նրանց խոստովանել թե՝ «միասին» գործելն ավելի լավ է, քան թե «մենակ» գործելը։

Սեփականատիրական հայացքներ և սեփականատերական կենցաղ ունեցող մանր սեփականատերը՝ կոոպերացման միջոցով ոգտվելով գիտությունից և տեխնիկայից, մասնակից է դառնում այն հասարակական տնտեսությանը, վոր հիմնված է կոմմունիստական հայացքների և կոմմունար կենցաղի վրա։

Հետևաբար կոոպերացիան վոչ միայն ուղիղ և միակ, ամենքի համար հնարավոր միջոցն է գյուղացի-

ների կյանքի մակերևույթը բարձրացնելու, մասնավոր առևտրականի, հում նյութերի սպեկուլյանտ ապրանքառուի և մեքենազրկության դեմ կռվելու կայլն, այլև գեպի կոմմունիզմ տանող ճանապարհն է, վոր Լենինն անվանեց՝ «ամենից ավելի պարզ, ճիշտ և գյուղացուն մատչելի ճանապարհ, վորով կարող է գնալ յուրաքանչյուր մանր գյուղացի»։

---

8 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մինչև պատերազմն արդյունաբերությունը գյուղատնտեսությունից միայն սակավ չափով պակաս եր մշակում։

Հեղափոխության տարիներում նա ավելի ընկավ, քան գյուղատնտեսությունը, վորովհետև վերջինս ընկնելու տեղ չուներ։ Արդյունաբերությունն իր տեխնիքական տեսակետից շատ ավելի բարձր է, քան գյուղատնտեսությունը։ Նա պահանջում է ամեն տեսակի հումնյութ, վառելիք, յուղեր, մեքենաներ, գործիքներ, զանազան արհեստներ և վորակյալ բանվորներ, տեխնիկներ, ինժեներներ. մինչդեռ գյուղատնտեսությունը կառավարվում է ձիով, գութանով, ցաքանով և մարդկային ույժով,

Պաշարումը և պատերազմը արդյունաբերությունը թողին առանց նոր մեքենաների, առանց յեգիպտական բամբակի, առանց անգլիական ածուխի, առանց գերմանական գծած պլանների՝ ելեքտրոտեխնիքական գործարանների համար, առանց մասնագետների, վորոնք նենգաղուլ եյին սարքում (саботаж) կայլն։

Քաղաքացիական կռիվների ժամանակ մենք կըտրված եյինք Դոնի ավազանից, Ուրալից, Բագվից, Գրոզնուց կայլն, կայլն։ Արդյունաբերությունը 1920 թվականին մինչպատերազմյանից իջավ մինչև 16—20 տոկոսը, այսինքն մինչև մեկ հինգերորդը և նույնիսկ՝ մեկ վեցերորդը։

Մինչդեռ գյուղատնտեսությունը վնասվեց միայն այնչափով, ինչչափով վոր զրկվեց բանվորական ույժից, ձիերից (զորահավաք) և՝ շատ պակաս չափով, ինվենտարի փչացումից։

Գյուղատնտեսությունն ամենավատ տարին պահպանվել է վոչ պակաս, քան մինչպատերազմյանի յերկուերրորդ մասով։

Այժմ մեր արդյունաբերությունը լավ է աճում և ավելի արագ, քան գյուղատնտեսությունը։ Յեթե 1922—23 թ. պրոդուկցիան ընդունենք 100, կըստանանք՝

	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն
1922—23 թ. . .	100	100
1923—24 » . .	107	130
1924—25 » . .	108	180 (մոտավոր)։

Տարակույս չկա, վոր արդյունաբերությունը կըհասնի գյուղատնտեսականը և նրան իր յետևից կըքաշի՝ հրելով դեպի մեքենաները, արհեստական պարարտացումը և գիտության ու տեխնիկայի այլ նվաճումները։

Մեր արդյունաբերությունը յերբ կըվերականգնվի և կըհասնի մինչպատերազմյան ժամանակին։

Այդ հարցին միայն շատ մոտավոր պատասխան կարելի յե տալ։ Ամբողջ արդյունաբերության ընդհանուր պրոդուկցիան մինչպատերազմյան արժեքներով վորոշվում է այսպես.

1913 թ. . .	5620	միլիոն ռուբլի
1920—21 » . .	930	» »
1921—22 » . .	1356	» »
1922—13 » . .	1958	» »
1923—24 » . .	2545	» »

Ուրեմն 1922—23 թ. արդյունաբերությունը մեծացել 44 տոկոս, 1923—24 թ.՝ 50 տոկոս։

Կարելի է յենթադրել, որ 1924—25 թ. տոկոսների նոր հավելումն կլինի և կդառնա 60։ Այդ դեպքում ընդհանուր պրոդուկցիան կլինի 4072 միլ. ռուբլի։

Յեթե հետագայում ընդհանուր մշակումը տարեցտարի միայն 25 տոկոս մեծանա, մենք մինչպատերազմյան պրոդուկցիայից կհասնենք 1927 թ.՝

1924—25 թ. . . 4072 միլ. ռուբ.
1925—26 » . . 5090 » »
1926—27 » . . 6362 » »

Յերկու տարվա ընթացքում արդյունաբերական պրոդուկցիան կարող ենք հասցնել մինչպատերազմյանին։

Ճիշտ է, առանց նոր շինարարության այդ բանին հասնել անկարելի է, բայց ի հարկե մենք շինարարությունը կբսկսենք, $1^1|_2$—2 տարուց հետո, թեև հենց այժմ ել միայն սակավ չափերով, շինարարություն է կատարվում։ Պետական արդյունաբերությունն ել վնաս չի անում, մինչև իսկ ոգուտ է տանում, բացի մետաղագործականից և քարածխայինից։

Արդյունաբերությունն ապահովված է բանվորներով, բացի հազվագյուտ արհեստներից ու վարպետներից։

Պետական խոշոր ձեռնարկությունների մեջ 1922—23 թ. կար 1.250.000 բանվոր, իսկ 1923—24 թ. դարձավ 1.356,000. Նշանակում է թե առաջվա 100-ի փոխարեն աշխատում է 108 մարդ։

Պետք է ավելացնել և այն, որ բանվորական կազմն ավելացել է արդյունաբերության գրեթե բոլոր

ճյուղերում, բացի աղի արդյունաբերությունից, որտեղ կարգի է բերված աղ արդյունահանելու յեղանակը և գրվում են մեքենաներ. ռեզինի արդյունաբերությունից, որ դիտմամբ է կրճատված վաճառքի կրիզիսի պատճառով, լուցկու, յուղի և պոլիգրաֆիականի։ 1924—25 թ. այս ճյուղերն ել ավելացնում են իրենց բանվորական կազմը։

Արդյունաբերության և բանվորների աճման հետ միասին կրճատվում է բանող արդյունաբերական գործատների թիվը. պետությունը կյանք է մտցնում արդյունաբերության համար կենդրոնացումը, փակելով փնասաբեր գործարանները, ֆաբրիկաները, հանքերը և ծանրաբեռնում է հասութաբեր ձեռնարկությունները։

Պետական խոշոր արդյունաբերության մեջ 1922—23 թ. գործում եր 3.438 ձեռնարկություն, իսկ 1923—24 թ.՝ 2.837։ Ուրեմն յուրաքանչյուր 100-ից մեծացել է 82։ 1922—23 թ. ամեն մի բանող գործատնատում՝ միջին թվով, աշխատում եր 363 մարդ, 1923—24 թ.՝ 478 մարդ։ 1922—23 թ. մեկ գործատունը՝ միջին հաշվով, մշակում եր 347 հազար ռուբլու ապրանք, իսկ 1923—24 թ.՝ 556 հազար ռուբլու։ Միայն այդ բանի շնորհիվ է, որ մեծածախս գները կարող եյին իջնել և կիջնեն։ Քանի շատ ապրանք է արտադրվում, այնքան ել ածան է նստում։ Ճիշտ է, 1923 թ. աշնանը ֆաբրիկա-գործարանային ապրանքը թանդ է ծախվում սինդիկատի և տրեստների ուրույն քաղաքական հետևանքով, որոնք ձգտում եյին գնորդից առնել այնքան, ինչքան նա կըզիմանար։ Սակայն մենք այժմ գներն իջեցնում ենք, ինչպես նկատելի է հետևյալ թվերից.

Արդյունաբերական ապրանքի մեծածախս գները 1923 թ. հոկտեմբերի 1-ին յեթե ընդունենք 100, հետևյալ ամիսներում կլինեն.

1923 թ.	հոկտեմբերի	1 . .	100
1924 թ.	հունվարի	1 . .	85
»	ապրիլի	1 . .	76
»	հուլիսի	1 . .	74
»	հոկտեմբերի	1 . .	72

Աշխատանքի արտադրողականությունը և միջին մշակումը մի բանվորական որվա հաշվով աճում է ըստ այսմ՝

1922—23 թ. թ.	1-ին	յեռամսյակում	3 ռ.	99 կ.
1923—24 » »	1-ին	«	4 ռ.	29 կ.
»	2-րդ	»	4 ռ.	60 կ.
»	2-րդ	»	4 ռ.	96 կ.
»	4-րդ	»	5 ռ.	24 կ.

Ըստ սմին, այժմյան արդյունաբերությունը բավականին հավասար է աշխատում, տարվա մի քառորդից մյուսին անցնելիս ավելացնելով արտադրությունը։ 1920, 1921 և նույն իսկ 1922 թվականներին արդյունաբերությունը աշնանը բարձրանում եր, ձմեռը՝ կանգ առնում մի մակերևույթի վրա, գարնանը թռիչք եր գործում դեպի ցած, հուլիսին և ոգոստոսին մշակումը շատ ցած եր լինում։ 1922—23 թ. թ. արդյունաբերությունն առաջին անգամ աշխատում եր՝ շատ թե քիչ, հավասար, առանց սուր թռիչքների դեպի վեր ու դեպի վար. սակայն 3-րդ և 4-րդ յեռամսյակներում մշակումն ելի պակասեց. 1923—14 թ. ընդհանրակը պրոդուկցիան անընդհատ աճում եր, իսկ հուլիս, ոգոստոս և սեպտեմբեր ամիսներում նույնիսկ ավելի

շատ, քան թե նախորդ յեռամսյակներից մեկն ու մեկում։

Գնատական խոշոր արդյունաբերության պրոդուկցիայի արժեքը մինչպատերազմյանի գներով՝ միլիոն ռուբլու հաշվով՝

	1922—23	1923—24
1-ին յեռամսյակ . . .	279	352
2-րդ » . . .	296	373
3-րդ » . . .	289	375
4-րդ » . . .	286	411

Ընդհանուր առմամբ, արդյունաբերությունը վոտքի յե կանգնել. նա այլևս գյուղացու հաշվին չի ապրի յե կանգնել. նա այլևս գյուղացու հաշվին չի ապրում, ինչպես եր ռազմական կոմունիզմի տարիներում, ինչպես եր ռազմական կոմունիզմի տարիներում և նոր տնտեսական քաղաքականության առաջին տարիներում։

Ընդհակառակը՝ այժմ արդյունաբերությունը յերկիրն ապահովում է ապրանքի մեծ քանակությամբ և իջնող գներով։

Սակայն արդյունաբերության բոլոր ճյուղերն այդ վիճակին չեն հասել։

Ավելի լավ վիճակի մեջ են վուշի, նաֆթային և քարածխային արդյունաբերությունները, ավելի վատ՝ հանքայինը և մետաղագործականը։

Ահա թե մինչպատերազմյանի ինչ տոկոսով եյին աշխատում նրանք 1923—24 թ.՝

Վուշինը՝ . . .	100-ից բարձր
Նավթարդյունաբերականը .	68 »
Ածուխի արդյունաբերությունը	54 »
Բամբակագործական ճյուղը .	45 »
Զուգուն հալելը . . .	16 »

Առանձին ճյուղերում կըտեսնենք թե՝ արդյունա-

բերությունը ինչու այդպես անհավասար է աշխատում։

Նաֆթի արդյունաբերությունից սկսենք։ Այս ճյուղի վիճակը միայն արդյունահանությամբ չափել չենք կարող, վորովհետև կարելի յե նաֆթահոր փորելը բոլորովին դադարեցնել, վորից արդյունահանվում է կամ խփում է նաֆթը, և այնուամենայնիվ, նաֆթն ելի կըգա։ Կարելի յե յերկու անգամ ավելի կրճատել փորելը, այդ դեպքում արդյունաբերությունը սկզբնեբում կըկրճատվի վոչ թե յերկու անգամ, այլ՝ քիչ քանակությամբ։

Այս բանը կարելի յե ցույց տալ հետևյալ թվերով. Բաքվում 1921—22 թ. թ. փորվել եր 7.069 սաժեն, այսինքն մոտավորապես մի տասներորդ մասը 1913 թ. փորածի (65.000 սաժ.), իսկ նաֆթ ստացվել եր 184 միլիոն փութ, այսինքն մոտավորապես նույն 1913 թ. արդյունաբերության չորս տասներորդը (467 միլ. փութ)։

Նաֆթարդյունաբերությունը պահվել եր մեղնում շնորհիվ այն հիմնական աշխատանքների, վոր կատարվել եյին յերկար տարիներ հեղափոխությունից առաջ։

1922—23 թ.թ. սկսած փորման աշխատանքները մենք խիստ մեծացրինք նաև Բաքվում. որինակ՝ փորվածքը 1921—22 թ. 7070 սաժենից 1922—23 թ. հասավ մինչև 93,650 սաժենի (յերեք անգամից ավելի) և 1923—24 թ.՝ 36,220 սաժենի։

Այս բանի շնորհիվ նաֆթի արդյունահանության գործը ամուր հիմքերի վրա դրվեց։ Ամբողջ Միության մեջ 1922—23 թ. 274 միլիոն փութ զուտ արդյունքը 1923—24 թ. հասավ 323 միլիոն փթի։ Նաֆթի արդյունաբերության գլխավոր խնդիրը շուկան է. պետք է գնորդ ճարել։

Այս խնդիրը մասամբ լուծվում է մեր արդյունաբերության և փոխադրության աճումով, վորոնք մեծ քանակությամբ նաֆթամթերք են սպառում, մասամբ ել քաղաքի և գյուղի բնակչության մեջ քշելով, մանավանդ կերոսինը։

Շատ խոշոր նշանակություն ունի նաֆթամթերքների արտահանումն արտասահման։ Այստեղ մեր առաջն է ցցվում մի խնդիր, թե ինչպես անենք, վոր փոխադրությունը մինչև ծովային նավահանդիստներն աժան նստի, վորտեղ յերկաթուղիով տանելը թանդ է նստում։ Այժմ նաֆթատար խողովակներ անցկացնելու խնդիրն է դրված, վորոնք շատ պետք են մեզ, բայց նրանց կառուցումը կըտևի՝ ըստ մեկ հաշվի 4 տարի, իսկ ըստ մյուսի՝ 5 տարի։

Արտասահմանում մեր նաֆթարդյունաբերության մթերքներին գնորդ անտարակույս կըճարվի, միայն թե պետք է նաֆթամթերքի արտահանումը ձեռնտու լինի մեզ։

Քարածխային արդյունաբերությունը ներկայումս հասել է մինչպատերազմյան արդյունահանման 94 տոկ. (կեսից ավելի)։ Նշանակում է թե այս ճյուղն առաջ է անցել ընդհանուր արդյունաբերությունից (45 տոկոս մինչպատերազմյանից), առաջ է անցել և փոխադրությունից։ Հետևանքն այն յեղավ, վոր մենք դիտավորությամբ դադարեցրինք նրա աճումը, վորպեսզի մթերելու վրա ծախս չանենք, շատ սակավ են մեր շրջանաբերության միջոցները, ուստի և փոխանակ ծախքեր անելու պարարտության վրա, ձեռնտու յե շրջաբերության մեջ դնել այն։

Բայց այս ճյուղը հեշտությամբ կարելի յե ընդ-

դարձակել բավական մեծ չափերով։ Կա մշտական բանվորական կազմ, կա և պահեստի բանվորություն, որից քարածխային արդյունաբերությունը կարող է վերցնել բանվորների նոր կադրեր։ 1922—23 թ. բանվորական կազմը 156,340 մարդ էր, իսկ 1923—24 թ.՝ 165,780։ Միջին թվով ընդհանուր արդյունահանումն աճում է. 1922—23 թ. 4,218 փութ, իսկ 1923—24 թ. 5,197 փութ։ Սեփական կարիքների ծախքը կարճվում է, ուստի և զուտ արտադրանքն ավելանում է, իսկ ածուխն՝ եժանանում։

	1922—23 թ.	1923—24 թ.
Ընդհանուր (воловая) արդահանությունը միլ. փթի հաշվով	659	863
Սեփական. կարիքների ծախք	156	136
Արդյունահանությունից տոկոսներով	24 տոկ.	16 տոկ.

Վերջին անցած տարին արդյունահանությունը գերաճեց իր նախորդիցը 31 տոկոսով, այսինքն գրեթե մեկ յերրորդով։

Արդյունաբերության մյուս ճյուղերից, ինչպես վերևումն ասել ենք, աչքի յե ընկնում վուշինը, որ մինչպատերազմյան լարվածությամբ է աշխատում։ Ինչպես բացատրենք, որ հենց այն ճյուղն է գերազանցել մանածագործական մյուս արտադրություններին, որ ավելի թանգ ապրանք է մշակում։

Կարծում ենք միայն յերկու պատճառով. մի կողմից՝ որ յերկիրը չափազանց մեծ կարիք ունի մանածագործական գործվածքների, և մյուս կողմից՝ պատրաստի հում մթերքով (վուշի թել), ինչով որ պարծենալ չեյին կարող վոչ բամբակի և վոչ էլ բրդի մշակության ճյուղերը։

Վուշի խոշոր պետարդյունաբերությունն սկսեց աճել շատ մեծ արագությամբ Նեպի հենց առաջին տարվանից։

	Մշակված և վուշի մանված	
1920—21 թ. . . .	9,4	հազար տոննա*)
1921—22 թ. . . .	16,1	» »
1922—23 թ. . . .	29,4	» »
1923—24 թ. . . .	37,9	» »
1912	33,3	» »

Բանող գործարանների թիվը գրեթե չի փոփոխվում (51—57), բայց նրանց ծանրաբեռնումն աճում է։

Այսպես 1922—23 թ. չորրորդ յեռամսյակում մի գործատան ընկնում էր 1,078 բանվոր, 1923—24 թ.՝ 1354 բանվոր։ Ի հարկե աճում է և մշակումն ել, որ վոբոշված է 1923—24 թ. համար՝ 96,5 միլիոն ռուբլու, նախորդ տարվա 73,7 միլ. ռուբլու հանդեպ.

	1922—23 թ.	1923—24 թ.
Մշակումն 1 ֆաբրիկայի միլ. ռ. հաշվով	1,27	1,63
» 1 բանվ. ռ. »	1361	1378

Ամենի վատ վիճակ ունի բամբակագործական արդյունաբերությունը։

Նա ռազմական կոմմունիզմի տարիներում գրեթե դադարել էր աշխատելուց, որովհետև հում նյութ չը-կար (Թուրքեստանը կորված էր, բամբակի ցանքսերը խիստ ընկել եյին), այդ ճյուղի հսկայական ֆաբրի-

*) 1 տոննը հավասար է մոտ 62 փթի։

կանների համար վառելիք չկար, պակասում էին նաև բանվորներ հայլն։ Այժմ նա շատ է բարձրանում, բայց վոչ այնպես արագ, ինչպես կարող եր բարձրանալ։ 1923—24 թ. նա լավ առաջ գնաց միայն առաջին յեռամսյակում և չորրորդի առաջին կիսում։

Բայց յերբ գնորդն սկսեց բամբակագործական ապրանք առնել, այն՝ ինչ վոր կոչվում է գլուխ կոտրելով ապրանք գնել, այդ ճյուղը միքանի ամսից հետո թռիչք գործից դեպի վեր և այժմ ընդարձակում է իր արտադրությունը, նախորդ տարվանից (1923-24թ.) 70 տոկոսով առաջ անցնելով։ Իսկ յեթե մշակումն ամսեամիս արագ չեր աճում, սակայն շնորհիվ առանձին թռիչքների դեպի վեր, տարեկան պրոդուկցիան 1923—24 թ. նկատելի չափով բարձր է, քան 1922—13 թ.

Մշակված է	1922—23 թ.	1923—24 թ.
Գատրաստի ապրանք միլիոն մետրի հաշվով	581	836
Տոկոսներով 1922—23 թ.	100 տոկ.	144 տոկ.
Ամբողջ պրոդուկցիան միլ. ռ. հաշվով (մինչպատ. գն.)	174	236
Տոկոսներով 1922—23 թ.	100 »	136 »

Գործող ֆաբրիկաների թիվը պակասում է, նրանց բեռնավորումն աճում, այնպես վոր 1922—23 թ. մեկ ֆաբրիկային ընկնում եր 1566 բանվոր և 1319 հազար ռուբլու պրոդուկցիա, մինչդեռ 1923—24 թ. 2161 բանվոր և 2,037 հազար ռուբլու պրոդուկցիա։

Ինչպես գրել ենք գյուղատնտեսության վերաբերող զրույցի մեջ, բամբակի ցանքսերն այնպիսի արագությամբ են վերականգնվում, վոր բամբակագործական ճյուղը հում նյութի կարիք չի զգա, բացի հատուկ տեսակներից, գոնե մինչպատերազմյանի համեմատությամբ (հիշենք՝ վոր մինչև պատերազմը 24 միլիոն փութ վերամշակված բամբակից 7 միլ. փութը արտասահմանից եր ներմուծվում)։

Բրդեղենի արդյունաբերությունը ռազմական կոմունիզմի տարիներում արտոնյալ վիճակ ուներ (նրան գերադասություն եր տրվում), վորովհետև բանակի համար շինել և ուրիշ բրդեղեն եր մշակվում։ Վառելիքը, հացը հայլն, առաջին հերթին նրան եյին տրվում, այնպես վոր նրա պրոդուկցիան նույնիսկ 1920—21 թ. հավասար եր մինչպատերազմյանի մեկ քառորդին (մինչև անգամ էլ ավելի՝ 27 տոկ.)։ Հետայլ տարիներում բրդեղենի արդյունաբերությունը՝ համեմատաբար դանդաղ է աճում, սակայն առանց հետ մնալու ընդհանուր արդյունաբերությունից։

Այսպես ընդհանուր պրոդուկցիան՝ ըստ մինչպատերազմյան գների յեր.

	Միլ. ռուբ. հաշվ.	տոկ.-ով 1913 թ.
1913 թ.	195	100 տոկ.
1920—21 թ.	53	27 »
1921—22 թ.	76	39 »
1922—23 թ.	72	37 տոկ.
1923—24 թ.	88	45 »

Մեր խոշոր արդյունաբերություններից մեկն է յուղի արտադրությունը։

Ըստ յերևույթին նրան վիճակված է այն մյուս ճյուղերից ավելի արագ զարգանալ, վորոնք վերամշակում են գյուղատնտեսության հում նյութը, վորովհետև յուղաբեր բույսերի ցանքսերը վաղուց գերազանցել են մինչպատերազմյան տարածությունը և կըշա-

բունակեն աճել այն չափով, ինչ չափով բաղմադաշտյան սիստեմը դուրս կըմղի յեռադաշտյանին։ Բացի դրանից Սիբիրումը պետք է բարգավաճի յուղի պատրաստությունը յեղևնու ընկույզից։ Իսկ առայժմ պետական արդյունաբերությունը տալիս է 1923—24 թ. միայն 6.117 հազար փութ, վորը՝ մասնավոր մշակման հետ միասին, մինչպատերազմյանի մոտավորապես մեկ յերրորդն է կազմում։

Ռեզինի արդյունաբերությունը շարունակ կայուն շուկա յե փնտռում և իր պրոդուկցիան մերթ սաստիկ մեծացնում է, մերթ սաստիկ կրճատում, նայելով թե պատրաստի գնորդ կա թե վոչ։ 1923 թ. աշնանը՝ վաճառքի հայտնի կրիզիսի ժամանակ (առևտրի լճացում), ռեզինի արդյունաբերությունն ապրանքի բավական մեծ պաշար կուտակեց, այնպես վոր հարկ յեղավ արտադրությունը մի կողմ դնել և միայն ամառն ապրանքի շատ պահանջ յեղավ, վորի հետևանքով մշակումը նորից մեծացրին։ Իսկ ընդհանրապես անցած (1923 - 24) տարին ավելի պակաս արտադրեց, քան թե 1922—23 թ.։ Ամեն բոպե կարելի յե արտադրությունն ընդլայնել, բանը միայն շուկան է։

Մեր ընթերցողին չհետաքրքրել չի կարող հիմնական քիմիական արդյունաբերությունը, վոր աղեր, թթվուտներ, ալկալի (щелочь), ֆոսֆորաթթվուտի կիր և նման արդյունք է մշակում, վոր անհրաժեշտ են թե ռազմական և թե խաղաղ տնտեսական շինարարության համար։ Այդ ճյուղը, վոր թեև անընդհատ եր զարգանում, բայց շատ դանդաղ, վերջին յերկու տարվա ընթացքում բավական արագ քայլերով բարձրացավ։

Ահա՝ որինակ, 1920—21 թ. 2.460 հազար փութ թթվուտ է մշակել, 1921—22 թ.՝ մի փոքր ավելի՝ 2.869 հազար փութ, և ահա, 1922—23 թ. 4.305 հազար փութ (50 տոկոսից ավելի), իսկ 1923—24 թ. արդեն 7.952 հազար փութ է (85 տոկոս)։

Արագ աճում է նաև ալկալիի մշակումը.

1920—21 թ.	468	հազար փութ
1921—22 թ.	2,570	» »
1922—23 թ.	5,741	» »
1923—24 թ.	7,027	» »

Պարարտացման արտադրությունն ել մեծանում է մի առանձին արագությամբ միայն 1823—24 թ.

Մշակված է պարարտացման նյութ.

1920—21 թ.	265	հազար փութ.
1921—22 թ.	261	» »
1922—23 թ.	414	» »
1923—24 թ.	1.282	» »

Ամենից ավելի արագ վերականգնվում է և ապագայում կաճի մեծաղային արդյունաբերությունը։

Հեղափոխության տարիներում առանց վառելիքի, պարենի, կերի, առանց յերկաթուղային կանոնավոր հաղորդակցության, մետալային արդյունաղործությունն արագ չքանում եր, մանավանդ յերբ ամենաուժեղ շրջանները (Հարավ և Ուրալ ռազմական ասպարեզից չեյին դուրս գալիս, իսկ Պիտերյան շրջանը գրեթե ամբողջովին կախումն ուներ անգլիական ածուխից, վոր չկար պաշարման հետևանքով։

Այդ 1920—21 թ. հալվել եր 7 միլ. փութ չուգուն, մինչդեռ 1913 թ. հալվածքը հասնում եր 257 միլիոն փթի, այսինք 37 անգամ ավելի։ Մարտենի

գործն ավելի լավ եր, բայց մարտենն ել 1920—21 թ. ավեց 20 միլ. փութ, այսինքն մինչպատերազմյանից 13 անգամ պակաս։

Նեպի հետ միասին մետաղագործությունն ել վերելքով է գնում և այն ել բավական արագությամբ.

	Չուգուն	Մարտեն
	Միլիոն փթի հաշվով.	
1920—21 թ.	7	20
1921—22 թ.	$10^1/_2$	$19^1/_2$
1922 23 թ.	$18^1/_2$	36
1923—24 թ.	$40^1/_2$	$60^1/_2$

Ուրեմն յեթե չուգունի հալվածքը 1920—21 թ. մինչպատերազմյանից $18^1/_2$ տոկոս է, 1923—24 թ. արդեն մոտ 16 տոկոս. վերականգնման արագությունը բավական մեծ է, սակայն մետաղագործությունը դեռ շատ հեռու յե այն մակերևույթից, վորին հասել է ամբողջ արդյունաբերությունը, մինչդեռ մետաղի և մետաղյա իրերի պահանջը ահագին է։

Մենք գիտենք, թե ինչպես վրա տվեց գյուղը գյուղատնտեսության գործիքներին և մեքենաներին. գիտենք, վոր մեր սեփական արտադրությունը բոլորովին անկարող է բավարարել գյուղատնտեսական մեքենաների և գործիքների պահանջը։

Հայտնի յե նույնպես, վոր բնակարանային շինարարությունը մեռյալ կետից շարժվել է և տարեցտարի պետք է աճի։ Արդյունաբերությունն ել մոտեցել է այն սահմանագծին, վորից այն կողմ առանց վերանորոգության և նոր շինարարության անկարելի յե։ Մանածագործական արդյունաբերությունն արդեն պահանջում է մետաղագործականից մանածային և

ջուլհակային դաղգահներ և՝ ընդհանրապես, տեխնիքական սարքավորումն։ Անհրաժեշտ են բամբակ մաքրելու, ինչպես և մանածանելիական մեքենաներ, բրդի մեքենաներ և վուշի սկզբնական մշակման մեքենաներ։

1924—25 թ. մանածագործական արդյունաբերությունն առնվազը 7 միլիոն ռուբլու մետաղյա գործվածքների պահանջ կունենա. ածխայինը և նաֆթայինը՝ 12 միլիոն ռուբլու, սրա վրա ավելացրած մյուս արդյունաբերական ճյուղերի համար 8 միլիոն ռուբլու, չհաշվելով իրեն՝ մետաղարդյունաբերությունը, վոր մտադրություն ունի ինքն իրենից գնել 13 միլ. ռուբլու գործվածք։

Մետաղի ամենախոշոր սպառողը փոխադրությունն է, վոր ի դեմս ՃՀԺԿ 1924—25 թ. առնվազն 56 միլ. ռուբլու մետաղյա գործվածքներ կըգնի։

Գղնձի պահանջն ել աճում է այն չափով, ինչ չափով մեծանում է ելեքտրաշինարարական, շինարարական, ավտոմոբիլային, հեռախոսային և հեռագրային գործերի թափը։

Թե վորքան մեծ պահանջ կա մետաղյա գործվածքների, այդ մասին վկայում են այնպիսի փաստեր, ինչպիսին է մետաղատրեստների նախավաճառքը, վոր առաջին յերկու-յերեք ամսում ամբողջ տարվա պրոդուկցիայի մոտ յերկու յերրորդ և չորս հինգ-յերորդ (տեղ-տեղ ել ամբողջ 100 տոկոս) է։

Գնորդների թիվն աճում է. իսկ այս արդյունաբերությունը շուկային չի հասնում այն պարզ պատճառով, վոր արտադրության զարգացման համար դըրամ է պետք՝ վառելիք, հանքանյութ, նյութեր ձեռք բերելու և աշխատավարձ տալու համար։

Պետությունը կարող է միայն այդպիսի աջակցություն ցույց տալ, որի շնորհիվ արտադրությունը մոտավորապես մեկ և կես անգամ կրմեծանա։ Թե ինչ արագությամբ են ուզում զարգացնել մետաղյա արտադրությունները, կերևա հետևյալ աղյուսակից, որի մեջ 1924—25 թ. ծրագիրը վերցրած է առանց 15 տոկոս հավելման, որ հաստատված է կուսակցության կգ հունվարի (1925 թ.) պլենումում։

Բաց թողածը հազար ռուբ. հաշվով մինչպատերազմ. արժեքներով.

	1923—24	1934—25 (պլան)	%% 1923—24 հ.
Սև մետաղագործություն	77273	109678	142
Գունավոր »	24857	32809	132
Մեքենաշինարարություն	65216	82089	126
Նավաշինարարություն	6231	6423	102
Գյուղմեքենաշինարարություն՝	15233	31636	204
Մետաղ. գործվածքներ	9393	10481	112

Ինչպես ցույց է տալիս աջ կողմի վերջին սյունակը, յենթադրված է գյուղմեքենաշինարարությունը կրկնապատկել ու սև մետաղագործությունը մեծացնել՝ գրեթե մեկ և կես անգամ. յերրորդ տեղն են զրված գունավոր մետաղագործությունը և մեքենաշինարարությունը։

Ի հարկե այդպես էլ պետք է լիներ. սև մետաղագործությունն ամբողջ մետաղարդյունաբերության հետ զուգընթաց է գնում, բայց չուգունն ամենից առաջ տրվում է գյուղմեքենաշինարարության գործարաններին, որովհետև գյուղատնտեսության աճումը մենք վոչ մի կերպ դանդաղեցնել չենք կարող։ Նավաշինարարությունն ի հարկե վերջին տեղն է մնում, որովհետև մենք դեռ կարող ենք այս գործում մի փոքր հավրերել։ Կարելի է վստահ լինել, որ մետաղարդյունաբերությունը գլուխ կբերի արտադրությունը մեկ ու կես անգամից ավելի մեծացնելու խնդիրը։ Այո, անտարակույս. բանն այն է, որ նա հաստատ կանգնած է անընդհատ բարձրացման ուղիի վրա։ Ահա, որինակ՝ 1923—24 թ.՝

	Չուգունի հալվածք միլոն փթի հաշվով	Բանվորների թիվը ըստ ցուցակի հազար մարդու հաշվով
1-ին յեռամսյակում	8,6	188
2-րդ »	9,6	182
3-րդ »	10,8	184
4-րդ »	11,4	201

Հետագա աճման համար տեղ կա, որովհետև խոշոր գործարաններից շատերն անգործ են, իսկ բանողները շատ թույլ են բեռնավորված. 1922—23 թ.՝ 25 տոկոս, 1923—24՝ 38 տոկոս, 1924—25՝ մոտավորապես 60 տոկոս։

Մետաղարդյունաբերությունը վառելիքով ապահովված է, որով ածուխի արդյունաբերությունը նրա պահանջից անց է։

Յերկրորդ՝ հանքարդյունաբերությունը կարող է՝

համեմատաբար, դյուրությամբ ընդարձակվել մետաղագործության պահանջներին հավասար։

Ցերկաթի հանքանյութերը շարունակ ավելի յեն արդյունահանվում յուրաքանչյուր յեռամսյակում, և վորովհետև ռազմական կոմունիզմի տարիներում հանքանյութերի արդյունահանությունը գրեթե դադրեց, ուստի այժմ նա արդյունաբերության մյուս ճյուղերից ավելի արագ է աճում։

Այսպես, միլիոն փթի հաշվով հայթհայթված է՝

1913	թ. . .	530	100 տոկոս
1921—22	» . .	11	2 »
1922—23	» . .	26	5 »
1923—24	» . .	55	10 »
1-իր յեռամսյակ	.	8,7	—
2-րդ	» .	11,5	—
3-րդ	» .	15,5	—
4-րդ	» .	19,0	—

Տարակույս չկա, վոր անհրաժեշտության դեպքում հանքանյութի հայթհայթումը կարելի կըլինի կրկնապատկել։

Մարգանեցի արդյունահանությունը նույնպես ավելանում է յեռամսյակից յեռամսյակ. 1922—23 թ. արդյունահանվել է 222 հազար տոննն, իսկ 1923—24 թ.՝ 427 հազար տոննն։ Այս հանքանյութը մենք արտասահման ենք արտահանում, ուստի և կարող ենք ավելացնել արդյունահանումը, առանց հաշվելու մեր յերկրի պահանջները։ Ամբողջ խնդիրն ժամանացումն է։ Առայժմ մարգանեցի՝ հանքանյութի արդյունահանումն այնքան թանգ է, վոր ձեռնտու յե միայն արտահանել հին պաշարը։ Ի հարկե, քանի շատ ենք արդյունահանում, քանի ավելի ենք բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը, այնքան ել ավելի ածան է նստում մեզ վրա մարգանեցի հանքանյութը։ Ինչպես տեսնում ենք, պետական խոշոր արդյունաբերությունն սկսել է իր վերելքը և իջնելու, կամ նույնիսկ կանգ առնելու տրամադրություն ել չունի։ Ապահովված է նրա վառելիքը և՝ ի լրումն, տարեցտարի ավելի լավ վորակով և ավելի պակաս արժեքով։ Հում նյութի խնդիրն այլևս չի անհանգստացնում, դատելով այն բանով, վոր գյուղատնտեսությունն արագությամբ է վերականգնում իր այն ճյուղերը, վորտեղից արդյունագործությունն իրեն անհրաժեշտ հում նյութն է վերցնում։

Պարենավորման մասին խոսելն իսկ ավելորդ է, վորովհետև մենք հնարավորություն ունենք պարենի առաջին քանակություն պատրաստել և արտասահմանից բերել տալ, յեթե սպեկուլյանտներն սկսեն հացի գները չարաշահել։

Հիմնական կապիտալը նորոգություն է պահանջում, բայց մենք առայժմ կաշխատենք յեղած սարքավորումով ելի 2-3 տարի, դիմելով միայն մասնակի վերասարքման, այնպես վոր այս խնդիրն ել անհուսալի չէ. ընդհակառակը՝ մենք այդ տարիների ընթացքում տնտեսապես այնքան կամրապնդվենք, վոր կարելի լինի ավելի կամ պակաս չափով մի խոշոր դուսմար բաժին հանել մեր արդյունաբերության հիմնական կապիտալը լրացնելու և «յերիտասարդացնելու» համար։

Բանվորների պակասության խնդիրն արդյունաբերության առաջ չի ցցվի, վորպես՝ փոքրիշատե սուր խնդիր։

Մեր արդյունագործությունը բանվորներով ապահովված է այն աստիճանի, որ աշխատանքի 70 բորսայում 1924 թ. հուլիսին արդյունաբերական խմբից 209 հազար անգործ կար։ Հետագա ամիսների ընթացքում նրանց մի փոքրիկ մասին միայն արտադրության մեջ քաշեցին։ Արդյունաբերության պատրաստի կազմը կարելի է ապահովված համարել այն չափով, ինչ չափով որ աճում է աշխատավարձը նույնիսկ 1923-24 թ., յերբ մենք դանդաղացնում եյինք այն մեր սեփական ձեռքով։

Բոլոր խոշոր արդյունաբերության մեջ աշխատավարձը 1923 թ. հոկտեմբերի 19 ռ. 80 կոպեկից (Մոսկվայի ապրանքային ռուբլի) 1924 թ. սեպտեմբերին հասավ 23 ռ. 90 կոպ.։

Ճիշտ է, ուժեղ ընդհատումներ տեղի ունեցան և ապրիլին, որինակ՝ աշխատավարձն իջավ մինչև 18 ռ. 80 կոպեկ, բայց բանվորները նկատում են, որ աշխատավարձը՝ թեև յերբեմն—յերբեմն իջնում է, այնուամենայնիվ ընդհանրապես թեքվում է դեպի վերելք։ Յեթե հոկտեմբերյան աշխատավարձն ընդունենք 100, կըստանանք այսպիսի առաջխաղացություն.

192	թ.	հոկտեմբերին	100	1924 թ. ապրիլի	95
»		նոյեմբերին	97	» մայիսին	103
»		դեկտեմբերին	96	» հունիսին	100
1934	թ.	հունվարին	99	» հուլիսին	108
»		փետրվարին	99	» ոգոստոսին	106
»		մարտին	100	» սեպտեմբեր	126

Վոչ մի տարակույս չկա, որ աշխատանքի արտադրության բարձրացման կամպանիայի հետ միասին բարձրանալու և թե որավարձը և թե վորոշյալ ժամանակի վարձը։

Գործավարձի գործադրությունը մացնելուց հետո, աշխատավարձն սկսեց բարձրանալ և բանվորական կազմի պատրաստված մասը, որին սովորաբար գործավարձ են վճարում, զգալի չափով բարձրացնում է իր աշխատավարձը։

Ի միջի այլոց, ավելորդ չի լինի ցույց տալ, որ աշխատանքի արտադրողականությունը 1923-24 թ. առաջին անգամ Նեպի տարիներում աճեց աշխատավարձի հետ համաչափորեն բայց առանց այն տատանումների, ինչ որ դիտում ենք վերջնիս վերաբերմամբ (տես վերևի աղյուսակը)։

Միջին մշակումն մի բանվորական որում տոկոսով, ընդունելով 1923 թ. հոկտեմբերինը 100՝.

1923	թ.	հոկտեմբեր	100	1924 թ. ապրիլ	116
»		նոյեմբեր	102	» մայիսի	119
»		դեկտեմբեր	103	» հուլիս	120
1924	թ.	հունվար	105	» հուլիս	127
»		փետրվար	110	» ոգոստոս	113
»		մարտ	112	» սեպտեմբ	127

Այսպես է դրված պետական խոշոր արդյունաբերության գործը։ Մասնավոր արդյունաբերությունը խոշոր արտադրության մեջ շատ չնչին տեղ է բռնում, ինչ որ 5 տոկոս՝ արդյունաբերական ամբողջ պրոդուկցիայի մեջ. այդքան էլ բանվորական կազմից։ Մասնավորը պետականից պակաս է 19 անգամ, այնպես որ զգալի ազդեցություն չունի մեր տնտեսության վրա։

Այդպես չն մանր արդյունաբերությունը, այսինքն՝ արհեստավորականն ու տնայնագործականը։

Գյուղական և քաղաքային մանր արդյունաբե-

բությունը մինչև պատերազմն ամբողջ արդյունաբերական մշակման մեկ յերրորդն եյին կատարում։ Պրոֆ. Ռիբնիկովի հաշիվներով խոշոր արդյունաբերության 2.400,000 բանվորներն արտադրում են 4.700 միլ. ռուբլու, իսկ մանր արդյունաբերությամբ զբաղված 5.200,000 մարդը մշակում են 2.400 միլիոն ռուբլու։

Տնայնագործական պարապմունքն ու արհեստը, ինչպես տեսնում ենք, պատվավոր տեղ եյին բռնում, թեև աշխատանքի արտադրողականությունը տնտեսական այդ ճյուղերում չափազանց ցած է. խոշոր արդյունաբերության մեջ պատերազմից առաջ մեկ բանվորը տարին 1,958 ռուբլու գործ եր անում, մինչդեռ մանր արդյունաբերության մեջ՝ 462 ռուբլու, իսկ գյուղական տնայնագործն՝ ել ավելի պակաս՝ տարեկան 425 ռուբլու։

Նեպի առաջին տարիներում մանր արդյունագործությունը խոշորից զգալի չափով արագ եր վերականգնվում, վորովհետև տնայնագործն ու արհեստավորը վառելիքի, հում նյութի մեծ քանակության և բանվորների պահանջ չունեն հայրն։

Սկզբնական շրջանում (1921 և 1922 թ. թ.) գյուղը կառավարվում եր գլխավորապես տնայնագործական մշակման առարկաներով։

Բայց այժմ պատկերը փոխվել է։

Խոշոր արդյունաբերությունն աճում է, նրա ապրանքն սկսում է իր վորակովն ու եժանությամբ մրցել տնայնագործի և արհեստավորի ապրանքի հետ։

Այժմ մանր արտադրությունը կըսկսի մտնել իր վաղեմի հունը՝ տեղի տալով խոշորին։ Սակայն դեռ շատ տարի մենք առանց տնայնագործների չենք կա-

ռավարվել, վորովհետև նրանց գործվածքներից միքանիսը խոշոր արդյունագործությունը չի արտադրում։ Ցեվ քանի դեռ յերկար տարի մեղնում գոյություն կունենա տնայնագործական արհեստը, մենք պետք է ոգնենք նրան։ Զմոռանանք, վոր տնայնագործը տարեկան 462 ռուբլու գործ է անում, իսկ ի՞նչ է վճարվում նրան. որական միքանի կոպեկ, յեթե նկատի ունենանք մասսայական տնայնագործին։ Նա շարունակ աշխատում է ապրանքառուի համար, վոր միայնակ իր ձեռքումն է պահում տնայնագործների ամբողջ շրջանները և գյուղը։

Մեր խնդիրն է ոգնել նրան կազմակերպելու արհեստակցական կոոպերացիա, վորի շնորհիվ նա կարող է խոշոր արտադրություն ստեղծել, աշխատանքի արտադրողականությունը և իր աշխատավարձը բարձրացնել, անմիջականորեն կապվել շուկայի հետ խուսափելով գիշակեր սպեկուլյանտից։

Մեզանում տնայնագործ ատաղձագործների, դերձակների, դարբինների, փականագործների, թամբագործների, մուշտակագործների, կոշկակարների, թաղիքագործների (թաղիքե կոշիկ), ջուլհակների ահագին բանակներ կան։

Ոգնել իրանց բարձրացնելու իրենց արտադրողականությունը կատարելագործված տեխնիքական սարքավորման ոգնությամբ, ձեռնտու հիմունքներով կազմակերպել պարենի, մթերքի, հում նյութի, գործիքների հայթհայթումն տնայնագործներին, կարգավորել նրանց գործվածքների վաճառահանությունը, զարգացնելով արհեստակցական կոոպերացիայի ցանցը,—ահա մեր պարտականությունը քաղաքի և գյուղի սա-

կավ կազմակերպված, ջլատված տնայնագործների առաջ։

Վերջին հաշվով տնայնագործը մեք բարեկամն է, այլ վոչ թշնամին։ Բացի դրանից, նա հասարակական ոգտակար գործ է անում։ Տնայնագործների կոոպերացիա կազմակերպելով, մենք ե՛լ ավելի կրգրավենք նրանց մեր կողմը և կընպաստենք նրա աշխատանքի արտադրողականության բարձրացման։

---

9. ԱՌԵՎՏՈՒՐԸ

Ինչպես արդեն ասել ենք, արդյունաբերությունը և գյուղական տնտեսությունը կարող են ավելի կամ պակաս չափով անցավ զարգանալ միայն այն դեպքում, յեթե նրանք իրենց արդյունքները իրար հետ շարունակ փոխանակեն։ Մասնավոր սեփականատիրական, մանր արտադրության ժամանակ (20 միլ. գյուղացիական տնտեսություն) այդ փոխանակությունը կատարվում եր շուկայի կարգով, այսինքն՝ առուծախով։

Առևտրի ընդմիջումը նշան է տնտեսության ընդմիջման։

Այդ բանը կարող է լինել զանազան պատճառներով.

Կամ՝ առևտրական ցանցն է թույլ և ույժ չունի ամբողջ ապրանքը տնտեսության մեջ շրջանից փոխադրել այնտեղ, կամ թե չե գներն են անընդունելի, կամ վարկավորումն է կարճվել, և այդպես շատ ուրիշ պատճառներ։

Դրանցից յերկու գլխավորը կանգնած են մեր առաջ՝ առևտրական ապպարատի թուլությունը և ֆաբրիկա գործարանական ապրանքի գների բարձրությունը։

Գների վերաբերմամբ կասենք, վոր 1923 թվականին մեծածախսի մակրատը մեծ արագությամբ եր

բացվում, մինչդեռ գյուղատնտեսության ապրանքների գներն ընկնում էին, իսկ արդյունաբերականինը բարձրանում։

Թե ինչ սահմանների հասավ այդ մկրատը, այդ բանը հետևյալ թվերն են վկայում. Սարատովում մինչև պատերազմը մի արշին չթին գյուղացին տալիս եր մոտ 8 ֆունտ հաճար, իսկ 1923 թ.՝ 35 ֆունտ, այսինքն $4^1/_2$ անգամ ավելի. Տվերում՝ նույնպես $4^1/_2$ անգամ թանգ, Ղազանում՝ $8^1/_2$ անգամ՝, Որենբուրգում՝ $5^1/_2$ անգամ, Նովոնիկալայևսկում՝ 5 անգամ, Ռոստովում $12^1/_2$ անգամ։

Յեթե միայն չիթը չվերցնենք, այլ ապրանքները, վոր մեծ քանակությամբ են գնում գյուղացիները, կըտեսնենք, վոր 1923 թ. հոկտեմբերի 1-ին (այդ ժամանակ մկրատն առանձնապես լայն բացվեց) արդյունաբերական ապրանքը գյուղացիականից յերկք անգամ ավելի թանգացավ։

1923 թ. հոկտեմբերից բեկումն տեղի ունեցավ, վորովհետև Խորհրդային իշխանությունը վորոշեց՝ ինչ կերպ էլ լինի, արդյունաբերական գների բարձրացման քաղաքականությունը դադարեցնել։

1924 թ. հունվարին այդ գները գյուղատնտեսության գներից յերկու անգամ բարձր էին (հոկտեմբերին յերեք անգամ եր), իսկ 1924 թ. սեպտեմբերին՝ մեկ և կես անգամ։

Ուրեմն աջողվեց մեզ մեծածախսի մկրատը սեղմել յերկու անգամ, և այժմ արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների տարբերությունն ընդամենը միայն $1^1/_4$ անգամ, վոր՝ առայժմ պետք է համարել նորմալ, վորովհետև գյուղատնտեսությունը

մոտեցավ մինչպատերազմյան 80 տոկոսին, մինչդեռ արդյունաբերականը՝ 50 տոկոսին։ Ֆաբրիկաների և գործարանների թույլ բեռնավորման հետևանքով՝ ապրանքների ինքնարժեքը բարձր է։

Հետզհետե մեծածախսի մկրատը կըսեղմվի։

Այժմ մեր առջևն է մի այլ տեսակի մկրատ՝ մեծածախս-մանրածախսինը։

Բանն այն է, վոր 1924 թ. ընթացքում մանրածախսի վերադիրը՝ մեծածախսի գների համեմատությամբ, աճեց։ Հետևանքն այն եր լինում, վոր մեծածախսի գները պետությունն իջեցնում է, իսկ մանրածախսինը՝ տեղ-տեղ նույնիսկ մեծանում են։

Այդ բանը վկայում են այս թվերը։

1924 թ. մեկ արշին չթին տալիս էին հաճար՝ ֆունտի հաշվով.

	Հուլիսի 1	Սեպտեմբ. 1
Տվերում՝	$11^{11}/_2$ ֆ.	$12^1/_2$ ֆ.
Ղազանում՝	23 »	31 »
Սարատովում՝	9 »	$10^1/_2$ »
Ռոստովում՝(Դոնի)	11 »	14 »
Որենբուրգում՝	8 »	16 »

Յեթե մեծածախսի գներն ընդունենք 100 և նրանց համեմատությամբ հաշվենք մանրածախսի գները, կըստանանք հետևյալը.

	Մեծածախս	Մանրածախս
1923 թ. հոկտ.-դեկտ. միջինը	100	129
1924 թ. հունվար-մարտ	100	149
» ապրիլ-հունիս	100	136
» հուլիս	100	142
» ոգոստոս	100	146
» սեպտեմբեր	100	143

Ահա այս մկրատի դեմն է, որ պայքար ենք մղում և այդ շատ դժվար գործ է։

Մեծածախսի մկրատը շատ պատճառներ ունի, որոնցից գլխավորները հիշենք. գյուղատնտեսության գներն իջնում էին այն պատճառով, որ 1923 թ. բերքը լավ եր և հացից ավելցուկ մնաց, մինչդեռ արդյունաբերական ապրանքը՝ համեմատաբար, սակավ եր, ուստի և մեր տրեստներն ու սինդիկատները գներն ավելացնում էին այնքան, մինչև որ գնորդը դադարեցրեց իր գնումները. վրա յեկավ վաճառահանության հայտնի կրիզիսը, որ սկսվեց հուլիսին և վերջացավ 1923 թ. նոյեմբերին։ Խորհրդային իշխանությունը տրեստներից և սինդիկատներից պահանջեց գներն իջեցնել, և այդպես էլ յեղավ։ Ապա կենդրոնական պլան հաստատող որգանները շատ ապրանքների համար կայուն գներ հայտարարեցին, նկատի ունենալով արտադրության ինքնարժեքը։ Այստեղ իջան արդյունաբերական ապրանքների գները. իսկ ինչ գյուղատնտեսական ապրանքների գներին և վերաբերում, նրանք սկսեցին բարձրանալ հատկապես այն պատճառով, որ 1923 թ. հոկտեմբեր-դեկտեմբերի ընթացքում բերքի մեծ մասն արդեն վաճառված եր, իսկ Խորհրդային իշխանությունը շատ ջանք գործ դրեց հացն արտասահման արտահանելու վրա, ինչպես որ յեղավ։ Շուկայում հացը պակասեց, բերքից էլ լավ ակնկալություն չունեցին, ուստի և գները բարձրացան։

Այսպես սեղմվում եր մեծածախսի մկրատը։

Սակայն շատ ավելի դժվար է սեղմել մանրածախսի մկրատը։

Պետական և կոոպերատիվ առևտրի մեջ մանրածախսի գները բարձր չեն, որովհետև շատ սպառվող ապրանքների գները կենդրոնական իշխանությունը կանոնավորում է և այդ կարգավորմանը յենթարկվում են՝ և՛ պետական, և՛ կոոպերատիվ առևտրի որգանները։

Մինչդեռ մասնավոր առևտրականը գներն իջեցնում է միայն այն ժամանակ, յերբ գնորդին հրապուրելու ուրիշ ճանապարհ չկա, և բարձրացնում է, յերբ գնորդը բարձր գին է վճարում։

1924 թ. ընթացքում անհրաժեշտ գործածական արդյունաբերական ապրանքները գնորդներից ավելի պակաս եյին, այսինքն առաջարկությունը պահանջից հետ ընկավ. ուստի և մասնավոր մանրավաճառն ապրանք չեր ծախում, մինչև որ կոոպերատիվում ամբողջ ապրանքն սպառվեց. իսկ յերբ կոոպերացիան առանց ապրանքի մնաց, մասնավոր մանրավաճառը գնորդներից յերեք անգամ ավելի բարձր գին եր վերցնում։

Մանրածախսի մկրատն ընկճելու համար, սպեկուլյացիան դանդաղացնելու կամ նրա գները չափավորելու համար, անհրաժեշտ է պահանջվող արդյունաբերական ապրանքների արտադրությունը մեծացնել և ամրացնել կոոպերացիան։

Յեթե ապրանքը բավարար չափով կա, գնորդն այն խանութը կերթա, որտեղ ապրանքն ավելի էժան է։

Այս պատճառով 1924—25 ա. թ. ուժեղ կերպով ընդարձակվում են արդյունաբերության այն ճյուղերը, որ սպասարկում են լայն գյուղացիական շուկային, գլխավորապես՝ բամբակագործականը։

Իսկ ինչ վերաբերում է սպառողական կոոպերացիային, նա 1924 թ. շատ արագ եր աճում։ Կարծում ենք, վոր այդ աճումը կանգ չի առնի, թեև յերբեմն ֆինանսական ծանր պայմանների մեջ է ընկնում։

Անհրաժեշտ է ամեն կերպ ամրապնդել սպառողական կոոպերացիան՝ հենվելով միայն անձնական ձեռներեցության և կազմակերպվածության վրա։

Յուրաքանչյուր բանվոր, գյուղացի և ծառայող պետք է հիշե, վոր իրենցից է կախված մասնավոր առևտրականի չարաշահությունից ազատվելու խնդիրը։

Այդ բանին հասնելու համար պետք է կոոպերացիայի մեջ մտնեն, լրիվ մուծեն իրենց փայավճարը, վորոշ նպատակների համար միջոցներ ընձեռեն, աշխատեն կոոպերացիայի մեջ, վոր նա կենդանի լինի, այլ վոչ մեռած, չինովնիկական կազմակերպություն չդառնա և պետք է հիշեն, վոր հնարավոր չէ նրանց ամեն բարիք ստանալը մեկ անգամից, հիշեն՝ վոր կոոպերացիան տարեցտարի յե գրավելու նորանոր դիրքեր։

Միքանի հաջողություններ արդեն տեսնում ենք։

1923—24 թ. թ. առևտրական շրջաբերությունները ավելի արագ են աճում, քան տնտեսությունն՝ իր ամբողջությամբ։ Մոսկվայի Ապրանքային Բորսայի շրջաբերությունը 1923 թ. 80 միլիոն չերվոնեց ռուբլուց հասավ 206 միլ. ռուբլու 1924 թ. սեպտեմբերին (2½ անգամ)։ Գավառական 50 բորսայի շրջաբերությունն 2½ անգամից ավելի աճեց՝ 1923 թ. հոկտեմբերի 67 միլ. ռուբլուց հասավ 180 միլիոն չերվոնեց ռուբլու 1924 թ. սեպտեմբերին։

Շատ կարևոր է նկատել, վոր գավառական առևտուրը Մոսկվայի առևտրից ավելի արագ է աճում. 1923—24 թվականի առաջին յեռամսյակում Մոսկվայի Ապր. Բորսան 305 միլիոն ռուբլու շրջանառություն կատարեց, իսկ գավառական 70 բորսան՝ 253 միլիոն ռուբլու, այսինքն Մոսկվայից պակաս. 4-րդ յեռամսյակում Մոսկվայի Ապր. Բորսան շրջանառություն արեց 467 միլ. ռուբլու, իսկ 70 գավառականը՝ 515 միլ. ռուբլու, այսինքն Մոսկվայից ավելի։

Այս ցույց է տալիս, վոր մենք սկսում ենք կապ հաստատել վոչ միայն արդյունաբերական կենտրոններին մոտիկ գյուղացության հետ, այլև՝ հեռավորների հետ։

Այդ յերևույթի գլխավոր պատճառը գյուղատնտեսության և կոոպերատիվ առևտրի ապարատի զարգացումն է։ Որինակ՝ բամբակագործական տրեստները 1923 թ. հոկտեմբերին շրջաբերություն արին կոոպերացիայի հետ 5½ տոկոսով, իսկ մասնավոր առևտրականների հետ՝ 28 տոկոսով, մինչդեռ 1924 թ. սեպտեմբերին ընդհակառակն՝ մասնավոր առևտուրը բամբակագործական ապրանք ստացավ 2½ տոկոսով, իսկ կոոպերացիան՝ 25 տոկոսով։

Գավառական առևտրի նկատմամբ պետք է ասենք, վոր 1924 թ. հուլիս, ոգոստոս, սեպտեմբեր ամիսներին մանածագործական սինդիկատի բաժանմունքները, այսինքն գավառը, իրենց ապրանքի յերկու յերրորդը կոոպերացիային են վաճառել, իսկ մասնավոր առևտրականներին՝ մոտավորապես, մեկ յեռերորդը։

Անշեղ կերպով պետք է տանել այն գիծը, վոր ՌԿԿ իր 13 համագումարում վորոշել է կոոպերացիայի վերաբերմամբ՝ նպաստելով նրա զարգացմանը։

Հարակից սրան չպետք է մոռանալ, որ կոոպերացիան պետք է հենվի գլխավորապես իր սեփական միջոցների վրա։

Շատ խոշոր դեր է կատարում և վաճառքի կոոպերացիան, որովհետև նրա միջոցով գյուղացին ավելի ճիշտ և ավելի ձեռնտու գներով է ծախում իր բերքը։

Սակայն ներքին առևտրի խնդիրները միայն կոոպերացիայի, տնտեսության աճումից չեն կախված և վոչ էլ գների կանոնավորումից պետության ձեռքով։ Տնտեսության մեջ շատ կարևոր տեղ է բռնում և արտաքին առևտուրը։

Յեթե մենք շաքարի պակասություն ունենք, յեթե մարդկանցները վեր են թռցնում գները, մենք արտասահմանից շաքար ենք բերել տալիս, թափում ենք շուկա և իջեցնում գները։ Յեթե հացի գները ցած են, հացն արտասահման են տանում, ներքին (սեփական) շուկան ազատում ենք ավելցուկից և այս ձևով հացի գները բարձրացնում ենք։

Ներմուծումն ու արտահանությունը մեր ձեռքում գերազանց միջոցներ են շուկայի գները կանոնավորելու համար։

Արտաքին առևտուրն անհրաժեշտ է մեզ և այն պատճառով, որ ապրանքների մի ամբողջ շարք մենք ինքներս չենք պատրաստում, ուստի և արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունն առանց ներմուծման և արտահանության չեն կարող կառավարվել։ Լավ արտահանություն ունենալը մեզ համար և այն ոգուտն ունի, որ մեզ վոսկի յե տալիս, որով մենք պահովում ենք մեր թղթադրամ ռուբլին։

Արտաքին առևտրի շրջաբերությունը վերականգնվեց միայն 1920 թվականին, յերբ մենք պատերազմը պաշարման ողակը. 1921 թ. շատ ուժեղ կերպով զարգացավ. 1923—24 թ. մենք արդեն մինչպատերազմյան արժեքներով 333 միլիոն ռուբլու արտահանություն ունեցանք, այսինքն 1913 թ. արտահանության մեկ քառորդից պակաս։

Մինչպատերազմյան գներով արտահանվել ե՝

1913 թ.	. .	1,520	միլ. ռուբլու
1921-22	. .	64	» »
1922-23	. .	133	» »
1923-24	. .	333	» »

1923-24 թ. այդքան արագ աճումը բացատրվում է նրանով, որ մենք հացի և գյուղատնտեսության հում նյութերի արտահանությունը կարգավորել ենք։ 1922-23 թ. 47 միլիոն ռուբլու կենսամթերք է արտահանվել, իսկ 1923-24 թ.՝ 193 միլիոն ռուբլու։ 1923-24 թ. հում նյութ և կիսամշակ նյութեր ենք արտահանել 139 միլիոն ռուբլու, 1922—23 թ. 84 միլիոն ռուբլու հանդեպ։ 1924-25 թ. մեզ չի հաջողվի հաց արտահանել, բայց դրա փոխարեն շարունակում ենք մեծացնել վուշի, ձվի, յուղի, խոզամազի, թռչունների, խոզենու, մուշտակեղենի, իսկ արդյունաբերական ապրանքներից՝ նաֆթի, փայտի, կրկնակոշիկների արտահանությունը. դեպի արևելք՝ անկված, ապակեղեն և այլն։ Ընդհանրապես մենք հույս ունենք, որ մեր արտահանությունը կըմեծանա։

Մեր ապրանքը գնում է Յեվրոպայի բոլոր յերկիրները, Պարսկաստան, Տաճկաստան, Չինաստան, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ-Նահանգները և այլն։

Գյուղացության համար արտահանությունը հրակայական դեր է խաղում այն չափով, ինչ չափով վոր տնտեսական նոր ձևերին անցնելը խոստանում է տալ մեծ քանակությամբ յուղ, միս, թռչուն հայլն, հայլն։

Ներմուծումն արտահանությունից դգալի չափով դանդաղ է աճում այն պարզ պատճառով, վոր մենք դիտմամբ սեղմեցինք այն, վորովհետև աղատ միջոցներ չունեցինք արտասահմանի գնումների համար։

1920 թ. ներմուծումն յեղել է 29 միլ. ռուբլու (մինչպատերազմյան գներով), 1921 թ.՝ 210 միլ. ռուբլու, 1922 թ.՝ 274 միլ. ռուբլու, մինչդեռ 1913 թ. ներմուծված եր 1,374 միլ. ռուբլու։

1922-23 թ. մենք ներմուծումն կրճատեցինք մինչև 148 միլ. ռուբլու, իսկ 1923—24 թ. մի փոքր բարձրացրինք (մինչև 207 միլ. ռուբլու)։

Հետևաբար մեր ներմուծումը հասցրինք մինչ պատերազմյան 15 տոկոսին (մեկ յեթերորդ մասը)։

Մենք ձգտում եյինք ակտիվ հաշվեկշռի, այսինքն՝ վոր արտահանությունը գերակշռեր ներմուծմանը և հասանք այդ բանին.

	Ներմուծումն	Արտահանություն
	Միլիոն ռուբլու հաշվով	
1922-23 թ. . .	148	138
1923-24 թ. . .	207	333

1924-25 թ. մենք պետք է ուժեղացնենք վոչ միայն գործիքների, մեքենաների, արդյունաբերական հում նյութերի, այլև պատրաստի գործվածքների ներ...ծումն՝ այդ ապրանքների գների բարձրացման դեմ կռվելու համար, այլև ցորեն, վորի գներն արդեն

բարձրացնում են հացի մասնավոր առևտրականները։

Ուստի և մեր արտահանությունը դժվար թե ըզդալի չափով բարձր լինի ներմուծումից, բայց հաշվեկշռի ակտիվը մենք կըպահենք։

Այժմ յերբ աշխարհի բոլոր պետությունները մեզ ճանաչեցին, բացի Հյուսիսային Ամերիկայի Միացյալ-Նահանգներից, մենք ել ավելի խորամուխ կը լինենք առևտրական հարաբերությունների մեջ արտասահմանի հետ և մեր առջևը կըկանգնի (թեև արդեն կանգնած է) նոր մկրատի խնդիրը, վորի մեկ լիստը (лезвие) մեր գներն են, մյուսը արտասահմանի գները։

Յեթե մեր մթերքը մյուս յերկիրների մթերքների համեմատությամբ թանդ է, արտասահմանում մերը չեն գնի։ Մենք այժմ արդեն զգում ենք յեվրոպական, ավելի ճիշն ասենք՝ համաշխարհային գների ազդեցությունը յուղի, վուշի, կանեփի և այլ բաների վրա։ Վորպեսզի գյուղատնտեսության ապրանքների յեվրոպական շուկային տիրենք, մենք պետք է վուշը, հացը, ձուն, յուղը... ավելի թանդ չգնահատենք, քան արտասահմանում։

Իսկ յեթե մկրատի լեստերը կըբացվեն, մեր արտահանությունը կըխափանվի։

Մեր Միության ներսում (ներքին շուկայում) վաճառվող ապրանքների գների խնդիրն այնքան ել սարսափելի չե։ Այստեղ մենք մաքսերով և այս ու այն ապրանքի ներմուծումն ընդհատելով՝ կարող ենք ապահովել մեզ մրցումից։

Բայց նախ՝ բնակչությունը կիմանա արտասահմանյան եժան գները և եժան ապրանքների ներ-

ժուծումն կըպահանջի. յերկրորդ՝ այս վերջինները՝ յեթե վոչ բաց դռնից, գոնե մաքսանենդության լուսամտից ներս կըսողան դեպի մեր շուկան, մրցելով մեր ապրանքի հետ։ Արտադրանքի ինքնարժեքն եժանացնել՝ ահա մեզ համար եական խնդիրը, յեթե ուզում ենք թե մեր և թե համաշխարհային գների մկրատը սեղմել։

---

10. ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Փոխադրությունը փոխանակության միջոց է գյուղի և քաղաքի միջև, գյուղերի միջև, և հենց քաղաքների միջև։ Այժմյան աշխատանքի հասարակական բաժանման դրությամբ ամեն մի շրջան սպասարկում է մյուս բոլորին, յերբ շուկայի համար ապրանք է արտադրում. Աստրախանի սելյոդկան ծախվում է Մոսկվայում այնպես, ինչպես և Տաշքինդում, իսկ Ուկրայնայի ալյուրը հում նյութ է վոչ միայն Վոլգյան շրջանի փռերի, այլև ամենուրեք ՍԽՀՄ-ի բոլոր փռերի համար։ Այժմ մասնագիտության է վերածվում նույնիսկ շուտ փչացող ապրանքների մշակույթը՝ նըկատի ունենալով ժամանակակից փոխադրության արագությունը։

Առանց ջրային և յերկաթուղային փոխադրության հասարակական կյանքն այժմ արդեն անհնարին է։ Արտասահմանում, բարձր զարգացման հասած կապիտալիստական յերկիրներում կյանքն անհնարին է նույնիսկ առանց ավտոմոբիլային փոխադրության, վոր հետզհետե ավելի արագ և վճռականորեն դուրս է մղում սայլատար փոխադրությունը։

Առանձին իմաստ չունի փոխադրության նշանակության մասին խոսելը, վորպես փոխանակության միջոցի մասին, վորովհետև ամեն վոք ինքն է տեսնում նրա կատարած դերը։ Մենք ցույց կըտանք, վոր

փոխադրության նշանակությունը միայն այն չէ, որ նա փոխանակության միջոց է, այլև այն է, որ նա ազդեցություն է գործում այն բնակչության վրա, որ տեղավորված է ճանապարհի շրջանում և շոգենավային գծի վրա։

Փոխադրությունը ոչ միայն տեղափոխվում է, այլև մղում է, ստիպում է տեղափոխել, շուկայի հարաբերությունների մեջ է քաշում գյուղական տնտեսության նոր բանակներ, ստեղծում է աշխույժ տնտեսական շրջաններ։

Հենց այդ պատճառով էլ յերկաթուղիները, ծովային և գետերի նավատորմիղները, խճուղիները պետք է կառուցվեն այն հաշվով, որ փոխադրության մակերևույթն ընդհանուր տնտեսության մակերևույթից բարձր լինի։

Յեթե նա բարձր է, այդ դեպքում մի կողմից՝ հենց ավելցուկի գոյությունը հասարակության նոր խավեր է քաշում դեպի շուկայի կյանքը (նոր գիծ կամ յերկաթուղու նոր ճյուղ, շոգենավային նոր կայան և այլն), և մյուս կողմից՝ տնտեսության անընդհատ տեղափոխությունն է ապահովում արդյունաբերության, գյուղատնտեսության, ներմուծման և արտասահման արտահանելու անակնկալ արագ առաջխաղացության դեպքում։

Ցարական Ռուսաստանը յերկաթուղիներով շատ աղքատ եր, ջրային ճանապարհներն էլ բավարար չափով չեյին ոգտագործվում։ Ֆրանսիայում մինչև պատերազմը յուրաքանչյուր 10,000 բնակչին ընկնում եր 13 կիլոմետր յերկաթուղի, Բելգիայում՝ 12 կիլոմետր, Գերմանիայում 11, Մեծ Բրիտանիայում՝ 8 կիլոմետրից ավելի, իսկ յեվրոպական Ռուսաստանում՝ միայն 4 կիլոմետր։

Ռուսաստանի յերկաթուղիների ցանցը չափազանց թույլ եր, բայց և այդ յեղածն էլ չեր ոգտագործվում այն չափով, ինչ չափով ոգտագործվում եր եվրոպական յերկիրներում։ Մինչ պատերազմը յերկաթուղու ցանցի ամեն մի 100 կիլոմետրին ընկնում եր՝

Վ ա գ ո ն

	Շոգեմեքենա	Մարդատար	Այրանքատար
Մեծ Բրիտանիա .	62	142	2,100
Բելգիա . .	—	180	1,980
Գերմանիա . .	47	100	1,050
Ֆրանսիա . .	32	72	780
Հոլանդիա . .	39	96	420
Ռուսաստ. (առանց Ֆին.)	30	32	680

Ահա փոխադրության այդ թուլությունն ղղալի յեղավ ինչպես իմպերիալիստական, նույնպես և քաղաքացիական պատերազմների տարիներում։ Սակայն մեզ աջողվեց դուրս քաշել նրան այն ճահճից, որ ուժասպառ եր արել և՛ յերկաթուղին, և՛ նավարկությունը, և՛ հաղորդակցության սայլատար միջոցները։

Այժմ մեզ դժվարությամբ աջողվեց հասնել այնպիսի դրության, որ ընկ. Կամենևը բնորոշեց հետևյալ բառերով՝ «փոխադրությունն աշխատում է առանց մերժումի»։ Բանն այն է, որ մեր տնտեսությունն իր ամբողջությամբ (խոշոր, միջին, մանր, արդյունաբերություն, հետն էլ գյուղատնտեսությունը) 1923—24 թ. մինչպատերազմյանի մոտավորապես 60—70 տոկոսի մակերևույթի վրա յեր կանգնած. սրան կից, սայլատար փոխադրությունը լիովին հա-

մապահանում էր տնտեսական զարգացմանը, իսկ մեզնում ապրանքների մեծ մասը փոխադրվում են սայլերով։ Ցերկաթուղային և ջրային փոխադրության բաժին եկին ընկում՝ գլխավորապես խոշոր արդյունաբերության և գյուղատնտեսության բեռները, յերբ նրանք սայլատար փոխադրության շրջանի սահմաններից դուրս եկին դտնվում։

Ինչպես հայտնի յե, 1923—24 թ. խոշոր արդյունաբերությունը մինչպատերազմյանի 45 տոկոս մակերևույթի սահմաններումն էր աշխատում։

Քաղաքներն ու արդյունաբերությունը գյուղատնտեսական արդյունքները սպառում եկին այդ թվից մի փոքր ավելի։

Իսկ յերկաթուղու առևտրական գնացքներով փոխադրված է ընդամենը 1919 միլիարդ փթա-վերստ, այսինքն՝ մինչպատերազմյանի 57 տոկոս։

Դեռ տվյալներ չունենք 1923—24 թ. յերկաթուղու աշխատանքի միքանի կողմերի մասին, բայց այդպիսիք կան 1922—23 թ. մասին։ Այն ժամանակ արգեն ապրանք-ռազմական գնացքի բանվորական շոգեմեքենան միջին թվով մեկ որում 1913 թ. 88 տոկոսն և կարում-անցնում. ապրանքատար վագոնների առևտրական որդանները մինչպատերազմյանից հետ էր մնում միայն 3 տոկոսով, իսկ բեռնակիր վագոնի միջին բեռնավորումը՝ 2 տոկոսով։

Գործի վարչական կողմն՝ ինչպես տեսնում ենք, բավական լավ է դրված, գրեթե մինչպատերազմյանին հավասար, բայց պատերազմի և հեղափոխության տարիներում շատ վագոններ ու շոգեմեքենաներ գործադրությունից դուրս ընկան և կիսապատքական դարձան. վաղուց է, վոր չեն փոխվել կարևոր չափով յերկաթուղագծերն (ռելսերը) ու գծակալ գերանները (շպալներ), ուստի և ճանապարհը նախկին բեռնավորմանն ու արագությանը չի դիմանում։ Որինակ մինչև պատերազմը վնասված շոգեմեքենաներ կային 17 տոկոսով, իսկ 1923—24 թ.՝ 55 տոկոս. 1923 թ. վնասված վագոններ կային 5 տոկոսով, իսկ 1923—24 թ. 31 տոկոսով։

1924—25 թ. արդյունաբերությանը բավական մեծ աճում ենք սպասում, իսկ գյուղատնտեսությունը մեզ ավելի բան է տալու, քան տվեց 1924 թ., յեթե միայն բերքը զոնե միջակ լինի։

Հետևաբար առաջ է գալիս մի խնդիր. արդյոք փոխադրությունը համաչափ կլինի՞ ամբողջ տնտեսությանը։

Մենք կարծում ենք՝ կլինի. մենք դեռ կարող ենք յերկաթուղու ցանցի յերկարությունը մեծացնել վերականգնելով մինչև այժմ փակված գծերը։

Զոնե 1923—24 թ. ընթացքում մեր գործող յերկաթուղացանցի յերկարությունն անընդհատ աճել է՝

1922—23 թ.	2-րդ	յեռամսյակում	. 63,684	վերստ
1923—24 թ.	1-ին	»	. 67,871	»
»	2-րդ	»	. 67,896	»
»	3-րդ	»	. 67,958	»
»	4-րդ	»	. 68,084	»

Մենք կարող ենք անթերի շոգեմեքենաների և վագոնների թիվն ավելացնել. 1922—23 թ. անթերի շոգեմեքենաների տոկոսը 42 եր, վագոնները՝ 68. իսկ 1923—24 թ.՝ արդեն դարձավ 45 և 69։

Կարող ենք մեծացնել բեռնավորումն և հեղուկների լիցքը. և հիրավի 1913—24 թ. դրանց միջինը 16 տոկոսով բարձր եր 1922—23 թ.։

Ի հետևումն այս բոլոր կատարելագործությունների և կազմակերպությունների, մենք կարող ենք բարձրացնել բեռների շրջաբերությունը, որ գրեթե հանդարտորեն աճում է ամբողջ 1923 և 1924 տարիներում։

Բեռների շրջաբերությունը միլիարդ փթա-վերստի հաշվով.

1923 թ.	հունվար-մարտ	313
»	ապրել-հունիս	323
»	հուլիս-սեպտեմբեր	392
»	հոկտեմբեր-դեկտեմբեր	470
1924 թ.	հունվար-մարտ	449
»	ապրիլ-հունիս	482
»	հուլիս-սեպտեմբեր	518

Մենք կարող ենք արագ քայլերով վերականգնել յերկաթուղային փոխադրությունը, քանի որ ֆինանսական դրությունն արդեն առանց դեֆիցիտի (բյուջեյի բաց) յե, իսկ յերկաթուղայինների յեկամուտը գրեթե ամեն մի յեռամսյակում աճում է, որի հետևանքով 1923—24 թ. տարեկան յեկամուտը 80 տոկոսով ավելի յե 1922—23 թ. յեկամտից։

Կարելի յե վստահ լինել, որ յեկամուտը կաճի։ Ի հարկե կարելի յե և նույնիսկ պետք է։ Արդեն ասել ենք, որ մինչև այժմ աճել է։

Թվեր բերենք.

Արդյունքը չերվոնեցի միլիոն ռուբլու հաշվով.

1922—23 թ.	1-ին կիսամյակին	132
»	2-րդ »	202
1923—24 թ.	1-ին »	273
»	2-րդ »	328

Այս դրության մեջ և յերկաթուղային փոխադրության գործը։ Ջրային դրությունն է վատ՝ թե ծովայինի և թե գետայինի։ Մինչպատերազմյանի համեմատությամբ գետերի շոգեշարժ նավատորմը մեկ հինգերորդով պակասել է նախկին 5000 միավորի փոխարեն միայն 4000-ը կա, որոնք չեն կարող նախկին արագությամբ և բեռնավորումով աշխատել, շնորհիվ ծանձաղացման, ֆարվատերային վատ ծառայության, բարձողների աշխատանքի ցածր արտադրողականության և այլն։

Նկատի ունենալու յե նաև անբերրի և սովի տարիները՝ Վոլգյան շրջանի և Հարավ-Արևելքի, որոնք ահագին քանակությամբ հաց եյին ուղարկում մեր գետերի գլխավոր յերակներով՝ Վոլգայով, Ոկայով, Կամայով։ Սովի և անբերրիության շնորհիվ հացի բեռները կրճատվեցին, պակասեց նույնպես և արդյունաբերական ապրանքների բերելը։ Մեկ խոսքով գետերի նավատորմը սպառողների այն կադրը չուներ, որ ապահովում է նավատորմը ամեն մի միջակ բերքի տարին։ Ծովային նավատորմը մասամբ կողոպտվել է, մասամբ էլ բավական հնացել։ Շոգեշարժ նավատորմը բեռնունակությամբ մինչպատերազմյանից գրեթե յերկու անգամ, իսկ նավերի թվով՝ յերկու յերրորդով պակասել է։

Առագաստավոր ծովային նավատորմն էլ իր միավորների թվով պակասել է վեց անգամ, իսկ բեռնունակությամբ՝ հինգ անգամ։ 1924 թ. Խորհրդային իշխանությունը վորոշեց նոր նավերի կառուցումն սկսել, վորպեսզի նախ՝ մեր մետաղի գործարաններին պատվերներ տրվին, յերկրորդ՝ վորպեսզի գոնե մասամբ,

ազատենք ՍԽՀՄ այն գերվճարից, որ տրվում է ոտարյերկրյա փոխադրող ընկերություններին, և՝ վերջապես, նրա համար որ կարողանանք գլուխ բերել փոխադրությունն ապրանքների այն անհագին քանակության, որ տարեցտարի աճում է և կաճի ամբողջ տնտեսության վերելքին զուգընթաց։

Փողադրությունը հրամանատարական բարձունքն է, որ գրեթե իր ամբողջությամբ գտնվում է Խորհրդային պետության ձեռքում։

Բայց փոխադրության գլխավոր տեսակը սայլակրությունն է՝ ձիերով, յեզներով, ցուլերով և այլն. սայլատար փոխադրությունը գրեթե ամբողջապես առանց բացառության կատարում են մասնավոր անձեր, հատկապես 20 միլիոնանոց գյուղատնտեսությունների փոխադրությունը։

Փոխադրության այս տեսակը տեղ-տեղ նույնիսկ մրցում է յերկաթուղիների հետ։ Մենք դեպքեր գիտենք, յերբ բեռներ ուղարկողները գերադասում են 100—150 վերստ տարածության վրա սայլակրության դիմել։ Այդ բացատրվում է ոչ միայն ճանապարհածախքի թանգությամբ, այլև զանազան ծանրաբեռնող ձևականություններով, հավելյալ տուրքերով՝ մի գնացքից մյուսը փոխադրելով, որ թանգ է նստում, այլև յերկաթուղու փողադրության դանդաղությամբ։

Մեր անելիքն այն է լինում, որ յերկաթուղային և ջրային փոխադրությունն այնպես կազմակերպենք, որ ձին նրանց հետ չմրցի, այլ նրանց՝ իբրև հավելված, լրացուցիչ ծառ։

Իսկ ավտոմոբիլային փոքրիշատե արագ յերթևեկության զարգացման վրա խոսելը վաղաժամ է, որովհետև մեր ճանապարհները՝ նույնիսկ սայլի համար, վատ են, ել չենք խոսում տասնյակ հազար կամուրջների մասին, որոնք գիմանում են ձիատարին, բայց որոնց վրայով ավտոմոբիլն յերկու անգամ իրար յետևից չի անցնի։

Գյուղատնտեսության ակման հետ միասին կաճի և գավառային բյուջեն, կըզարգանա նաև ճանապարհային շինարարությունը։

---

11. ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Նախորդ զրույցներով մենք կամեցանք ցույց տալ, վոր Խորհրդային տնտեսությունը աճում և ամրանում է։

Պարզ բան է, վոր այդ աճումը պետք է անդրադառնար նախ և առաջ պետական ֆինանսների վրա։

Ցեվ նա անդրադարձավ։ Վերցնենք պետական բյուջեն։ Նա յերկու մաս ունի. մեկը ցույց է տալիս թե պետությունը վորքան պետք է գանձի հարկերից, յերկաթուղիներից, արդյունաբերությունից, առևտրից, բանկերից, անտառներից, և այլն. իսկ մյուսը թվում է ծախքերը՝ բանակի, դպրոցների, ամբողջ պետական ապպարատի, արդյունաբերության պահպանության և այլն։

Վորքան շատ է ստանում պետությունը, այնքան ել ավելի կարող է ծախսել։

Բայց շատ ստանալ կարող է միայն այն դեպքում, յեթե տնտեսությունն է աճում, կամ պետությունը քնակչության վրա անչափ ծանր բեռ է դնում, վոր անհամապատասխան է տնտեսական հզորության։ ՍԽՀՄ-ի մեջ հարկերը համաձայնեցում են գյուղատնտեսության, արդյունաբերության, ընդհանրապես տնտեսության զրությանը, այնպես վոր ժողովրդին չափազանց ծանրաբեռնելու մասին խոսք լինել չի կարող։

Բյուջեյի աճումը տնտեսության աճման հետևանք է լինում։

Ցերվոնեցի միլիոն ռուբլու հաշվով՝

	բյուջե
1921—22 թ.	1,000
1922—23 թ.	1,388
1923—24 թ.	1,880
1924—25 թ.	2,279

Այսպես Նեպի տարիների ընթացքում բյուջեն մեծացել է $2^1/_4$ անգամ։

Ցեվ այդ աճումը յեղավ սովից հետո, մեկ լավ բերքի (1922) և յերկու վատ բերքի (1923—24) ժամանակ։

Ուրեմն ինչն է աճում մեր բյուջեյում։

Նախ և առաջ պետական գույքի և ձեռնարկությունների յեկամուտը. դրանց մեջ են մտնում պետական արդյունաբերությունը, փոխադրությունը, առևտուրը, բանկերը, անտառները, հանքերը և այլն։

Այդ վոչ-հարկային մուտքերը շատ մեծ չափով մեծացան՝

1921—22 թ.	199 միլ. ռուբլի
1922—23 թ.	511 » »
1923—24 թ.	850 » »
1924—25 թ.	1094 » »

Ինչպես տեսնում ենք, այս մուտքերը բացառիկ արագությամբ են աճում և զարմանալի յել չի, վորովհետև մինչև Նեպը ձեռնարկություններն ու գույքը միայն վնաս եյին բերում։ Միայն տնտեսական հաշվի յեղանակին անցնելով՝ մենք վերջապես սկսեցինք ստանալ շահաբեր գործարան գործարանի հետևից, տնտեսական մի ճյուղ մյուսի հետևից, վորպես շահաբեր։

Այժմ արդյունաբերությունը՝ բացի մետաղակա-

նից և քարածխայինից, մեզ վոչ միայն վնաս չի տալիս, այլ մինչև իսկ վաստակ և բերում. փոխադրությունն էլ անգնֆիցիտ է. առևտուրը, բանկիրը էլն յեկամուտ են բերում։ Ահա թե ինչու 1924—25 թ. վոչ հարկային մուտքերն ամբողջ բյուջեյի գրեթե կեսն են (48 տոկ.)։ Ավելի պակաս արագությամբ են աճում հարկային մուտքերը.

1921—22 թ.	450 միլ. ռուբ.
1922—23 թ.	405 » »
1923—24 թ.	623 » »
1924—25 թ.	978 » »

Մինչ վոչ-հարկային յեկամուտներն այդ տարիներում աճեցին 5 ու կես անգամ, հարկերն աճել են միայն 2 անգամ։ Այս հանգամանքը բացատրվում է այսպես, վոր մեր պետությունը՝ հարկեր նշանակելիս, շատ զգույշ է, վախենալով մի գուցե տնտեսությանը վնաս հասցնի։

Ախր յեթե մենք արդյունաբերության կամ գյուղատնտեսության վրա չափազանց ծանր հարկեր դնենք, այդ տնտեսական ճյուղերը կորուստ կունենան շրջանառու կապիտալի մեջ, չեն մեծանա հիմնական կապիտալի կարիքների չափով էլն։

Ճիշտ է, հարկերը պետության ձեռքն են անցնում, վոր կարող եր գանձած գումարներն այդ ճյուղերին վերադարձնել։

Բայց բանն էլ հենց այն է, վոր պետությունն ամեն ինչի հետևել անզոր է, ուշացած ոգնություն կարող է անել, կարող է վոչ բավարար չափով ոգնել, պետական ուրիշ կարիքների վրա ծախսած լինելու հետևանքով։

Խորհրդային իշխանությունը գերադասում է հարկերն զգուշությամբ դնել տնտեսության և բնակչության վրա, քան թե ակներև ծանր չափերով դանձել և ապա դանձածը վերադարձնել։

Յեվ այսպես, սովորական յեկամուտները՝ թե հարկայինը և թե վոչ հարկայինը, աճել են այս կերպ՝

1921—22 թ.	649 միլ. ռուբլի
1922—23 թ.	916 » »
1923—24 թ.	1,473 » »
1924—25 թ.	2,072 » »

Ուրեմն յեկամուտներն այդ տարիներում ավելի քան յեռապատկվել են։ Այդ բանի շնորհիվ հնարավոր յեղավ բյուջետային եմիսսիայից ազատվել, այսինքն թղթադրամ բաց թողնելուց, վորպեսզի ծախքերը ծածկեյինք։

Դանձարանական թղթադրամը մենք արդեն բյուջեյի կարգով չենք բաց թողնում։ «Թղթի» վերջին տարին 1923—24 թվականն եր։

Առաջ թղթադրամը յեկամտի գլխավոր աղբյուրն եր։

Պետությունը թղթիկներ եր տպում, ապրանքի եր տալիս՝ վորպես աշխատավարձ էլն, այսորվա դնով, մինչդեռ հետևյալ որը այդ թղթե ռուբլիների դներն ավելի եժանանում եյին։

Այսպես, Խորհրդային իշխանության ծախսած յուրաքանչյուր 100 ռուբլու փոխարեն, թելադրամի դաղդյահը տալիս եր՝ 1921—22 թ. 35 ռուբլի. այսինքն՝ մեկ յերրորդից ավելի, 1922—23 թ. 29 ռուբլի. 1923—24 թ.՝ 10 ռուբլի, 1924—25 թ. վոչինչ։

Ցենթադրված է 1924—25 թ. 80 միլիոն ռուբլու դրամ կտրել, բայց միայն պղնձե և արծաթե դրամ։

Ցեվ այսպես մեր պետական բյուջեն վերջապես դարձավ «անթուղթ»։ Բայց մենք ելի շարունակում ենք չերվոնեց տալել, այսինքն՝ ելի նույն թղթադրամը։

Այո, շարունակում ենք, բայց վոչ գանձարանի, այլ Գետբանկի ձեռքով, վոր ամենևին միևնույն բանը չե։

Բանն այն ե, վոր առանց դրամի շուկան չի կարող գոյություն ունենալ։ Խորհրդային դրամներն ընդունվում էին նույնիսկ ամենավատ տարիներում, այնքան մեծ ե դրամի կարիքն ընդհանրապես։ Վորքան ավելի ապրանք կա շուկայում, այնքան ել ավելի դրամի պահանջ կա, վորովհետև միջին հաշվով մեկ դրամանիշը ապրանքների մի վորոշ քանակության շրջաբերությանը կարող ե մասնակցել, այլ վոչ անսահման։

Շուկան այնքան դրամ ե պահանջում, ինչքան ապրանք կա շրջանառության մեջ, բաժանված շրջանառության թվի վրա։ Դիցուք թե ռուբլիով մի վորոշ ժամանակ կարելի յե շրջել 10 ռուբլու ապրանք (մեկից յես գնեցի 1 ռուբլու, նա ել մի ուրիշից, ուրիշն ել մեկ ուրիշից հայլն), իսկ շուկայում 1 միլիարդ ռուբլու ապրանք կա։ Մեկ միլիարդ դրամ ե պետք բաժանած 10-ի վրա, այսինքն՝ 100 միլ. ռուբլի։ Ցեթե 200 միլիոն ռուբլի դրամ հրապարակ հանենք, ամեն 2 ռուբլին մեկ ռուբլու գործ կըտեսնի, այսինքն 1 ռուբլին կըդառնա 50 կոպեկ։

Ցերբ գանձարանը թղթադրամ եր տալիս, այդ այն նպատակով եր, վոր անհրաժեշտ ծախքերը ծածկելու հնարավորություն ունենա. գանձարանը դրամ եր բաց թողնում այն դեպքերում, յերբ շուկան դրամանշերի կարիք չեր զգում։

Գետբանկը չերվոնեց ե բաց թողնում այն չափով, ինչ չափով վոր շուկան նրա կարիքն ե զգում։

Գետբանկն ինչպես ե իմանում թե շուկան դրամի կարիք ունի թե վոչ։ Նա այդ իմանում ե իր գործառնություններով (операция), յեթե զանազան առևտրական տներ և անձեր դրամի համար բանկին են դիմում հաստատուն ապահովություն ներկայացնելով, նշանակում ե, թե տնտեսությանը դրամ ե պետք արտադրությունը, առևտուրը հայլն զարգացնելու համար. այլապես մարդիկ տոկոսով դրամ հո չեն վերցնի, յեթե համոզված չլինին, թե դրամը շրջան անելիս վոչ միայն տոկոսները կըծածկի, այլև շահ կըբերի։

Գետբանկը չերվոնեց ե բաց թողնում շուկայի ճնշումով և յերբ նրան չեն դիմում դրամի համար, նա ել չերվոնեց չի բաց թողնում։

Այսպես, շնորհիվ այն հանգամանքի, վոր չերվոնեցի եմիսսիան Գետբանկի ձեռքումն ե, դրամն ընդհանրապես բաց ե թողնվում տնտեսական կարիքների համաձայն։

Բանկային եմիսսիան մեզնում մնացել ե. իսկ գանձարանը միայն պղնձի, արծաթի և ոսկի թղթադրամ ե կտրում, վորպեսին Գետբանկը չի տալիս։

Սակայն մետաղյա եմիսսիան չի բավականանում, վորպեսզի պետական այն բոլոր ծախքերն արվին, ինչ վոր նախատեսված են բյուջեյով։ 1924—25 թ. մենք հույս ունենք 110 միլիոն ռուբլու ներքին փոխառության պարտատոմսեր (облигация) տարածել։

Այդ կոչվում ե վարկային գործառնություն։

Պետությունը պարտատոմսեր ե բաց թողնում, վոր ծախվում են իրենց նշանակված գներից ավելի

պակաս գնով և բերում են վորոշ յեկամուտ (տոկոս)։

Բնակչությունը, ներքին փոխառության շնորհիվ, խնայողություն և անում, իսկ պետությունն այդ միջոցները գործի մեջ է դնում ու թղթադրամ ել չի տպում այն գումարի չափով, ինչ գումարի վոր պարտատոմսեր է տարածել։

Նեպի սկզբում ներքին փոխառությունը գլուխ չեր գա, վորովհետև բնակչությունը դրամ չուներ, իսկ ով վոր ուներ, նա ել պետության վրա վստահություն չուներ։ Հացի փոխառությունը անվստահության պարսպի մեջ ճեղք բացեց և նրանից հետո վոսկու փոխառություն բաց թողեց։ 1921—22 թ. վարկային գործառնություններով մուծվել է մեկ միլիոն ռուբլի. 1922—23 թ.՝ 85 միլ. ռուբլի, 1923—24 թ.՝ 222 միլ. ռուբլի, 1923—25 թ. յենթադրվում է՝ վոր կըստացվի 110 միլ. ռուբ.։ Խորհրդային իշխանությունը վորոշել է վարկային գործառնությունները կրճատել 2 անգամ, վորովհետև ցանկալի չի համարում պարտատոմսերն ուժով տարածել, ինչպես վոր լինում եր 1923—24 թ. (պարտատոմսերով եյին վճարում բանվորների աշխատավարձը, ծառայողների ռոճիկները և այլն)։

Ուրեմն, յեթե առնենք եմիսսիան և վարկային գործառնությունները, ավելացնենք դրանց վրա՝ այսպես կոչված, արտակարգ յեկամուտը պետական ֆոնդերի իրացումից (реализация) (17 միլ. ռուբլի), կըստանանք այն գումարը, վոր չեյին կարողանա ծածկել սովորական յեկամուտները՝ հարկերից, պետական ձեռնարկություններից և դուրքից յեկած մուծումները։ Այդ գումարը մեր դեֆիցիտն է։ Դեֆիցիտ չունի այն բյուջեն, վորի մեջ մուտքերը ծածկում են ծախքը առանց ներ-

քին փոխառությունների և եմիսսիաների։ Մենք ընդհուպ մոտեցել ենք անդեֆիցիտ բյուջեյի։ 1921—22 թ. մեր պակասորդը ամբողջ բյուջեյի մեկ յերրորդն եր (35 տոկոս). 1922—23 թ.՝ ելի մեկ յերրորդը (34 տոկոս), 1923—24 թ.՝ 27 տոկոս, իսկ 1924—25 թ.՝ 9 տոկոս։

Յեթե վատ բերքը և սրանից վնասվածների ոգնության վրա դրված ծախքերը չլինեյին, մենք հենց այս տարի անդեֆիցիտ բյուջե կունենայինք։ Յեկամուտների այժման հետևանքով մենք կարող եյինք մեծացնել պետական ծախքերը, հատկապես զգալի ոգնություն ցույց կըտայինք կուլտուրական ֆրոնտին։ Ընթացիկ տարին առաջին տարին է, յերբ այդ ճակատում շնչելու հնարավորություն կա։ Մինչև 1924—25 թ. մեր ուսուցիչները, ուսուցիչները, բանֆակյանները և ուրիշները բառացիորեն հոգեվարքի մեջ եյին և սպառվող համբերությամբ մի լավ կյանքի եյին սպասում, լավ, վոչ թե շքեղության իմաստով, այլ սովազերծ գոյության իմաստով։

Մինթե բյուջեն մեծացնելու հնարավորություն չեղավ հենց այն պատճառով, վոր չափազանց ծանր են հարկերը, մանավանդ գյուղացիներինը։

Այս հարցի պատասխանը բացասական է։

Թե հարկերը գյուղացու տնտեսության համար ծանր են, այդ ճիշտ է. բայց ախր միայն նոր-նոր է, վոր դուրս ենք գալիս սոսկալի չքավորությունից։ Մինչև պատերազմը Ռուսաստանը համարվում եր շարունակ սոված յերկիրներից մեկը։ Պատերազմն ել ավելի իջեցրեց տնտեսության մակերևույթը։ Հեղափոխության ժամանակ, մասնավորապես «ռազմական կոմ-

մունիզմի» տարիներում, տնտեսական քայքայումը շարունակվեց։ Միայն այժմ է, որ մենք ամուր կանգնած ենք վերելքի վրա, բայց չենք վերականգնել տնտեսությունը մինչև իսկ նախահեղափոխության ժամանակի չափով։

Թվում է, թե իրերի այս վիճակում հարկերը պետք է շատ բարձր լինեին։

Սակայն նրանք նախապատերազմյան ժամանակի հարկերից բավական ցած են։

1924—25 թ. յենթադրվում է, որ հարկային մուծումներից կըստացվի 978 միլ. ռուբլի, մինչդեռ 1913 թ. հասնում էր 1.366 միլ. ռուբլու, իսկ յեթե չերվոնեցի վերածենք՝ 2.323 միլ. ռուբլու։ Ուրեմն 1924—25 թ. հարկերը մինչպատերազմյանի՝ մոտավորապես, կեսն են (42 տոկոս)։ Անցած 1923—24 թ. 692 միլ. ռուբլու հարկ է հավաքվել, այսինքն՝ 1913 թ. հարկերի մեկ յերրորդից էլ պակաս (29 տոկոս)։

Մեկ լուրջ տնտեսագետի հաշիվների համաձայն, բոլոր հարկերը, վարձակալությունը, հողային և ապահովագրական վճարումները գյուղական բնակչության ամեն մի հոգուն ընկնում են ռուբլու հաշվով՝

1912 թ.	. .	10 ռ. 40 կոպ.
1920—21 »	. .	10 » 30 »
1921—22 »	. .	6 » 30 »
1922—23 »	. .	5 » 90 »

Ասացինք՝ որ այժմյան հարկերը շատ ծանր են գյուղացու տնտեսության համար, բայց պակասում են՝ յեթե բնակչության ամեն մի հոգու վրա հաշվենք։

Զուտ յեկամտի համեմատությամբ էլ նրանք պակասում են. 1912 թ. զուտ յեկամուտի ամեն մի

ռուբլուց 18 կոպ. գնում էր հարկերին, կապալներին, հողային և ապահովագրական վճարումներին. 1920—21 թ.՝ 25 կ., հետո տոկոսն իջնում է 18 կոպեկի 1921—22 թ., իսկ 1922—23 թ.՝ 15½ կոպ.։ Այս էլ պետք է ասենք, որ այժմ գյուղացին գլխավորապես ուղղակի հարկեր է վճարում, մինչդեռ մինչպատերազմը յերկու յերրորդից ավելին անուղղակի հարկեր էր տալիս։

Յեթե հաշվենք թե գյուղացին 100 հարկային կոպեկից քանի կոպեկն էր անուղղակի հարկ տալիս, կըստանանք.

	Ուղղակի	Անուղղակի
1912 թ.	28 կոպ.	72 կոպ.
1920—21 թ.	96 »	04 »
1921—22 թ.	84 »	16 »
1922—23 թ.	67 »	33 »

Ճիշտ է, անուղղակի հարկի բաժինն աճում է, իսկ ուղղակին իջնում բայց մինչպատերազմյանից շատ հեռու յե։ Անուղղակի հարկը գյուղացու վրա ավելի յե ծանրանում, որովհետև առաջուց հաշվի տակ դնել չես կարող. մինչդեռ ուղղակի հարկը քիչ թե շատ հայտնի յե և կարելի յե հաշվել։

Խորհրդային իշխանությունն ամեն կերպ ձգտում է աշխատավոր բնակչության ամեն մի հոգուն հասանելի հարկը կրճատել. և քանի ավելի լավ աշխատի արդյունաբերությունը, քանի ավելի հաստատային լինի գյուղատնտեսությունը, այնքան ավելի քիչ տեղ կըբռնեն հարկերը զուտ յեկամտի մեջ։

Այս իսկույն կընկատվի հենց առաջին քիչ թե շատ հաջող բերքի ժամանակ։

Իսկ առայժմս մենք հարկադրված ենք միջոցներ հայթահայթել նույնիսկ այնպիսի յեղանակով, ինչպիսին և սպիրտի խմիչքների վաճառքը։

1922—23 թ. խմիչքների հարկը (акциз) մեզ 18 միլիոն ռուբլի յե տվել, 1923-24 թ.՝ 62 միլ. ռուբլի, իսկ 1924-25 թ. յենթադրվում է թե կընհավաքենք մոտ 127 բուբլի։

Ինչպես տեսնում ենք, մեր չքավորության մեջ այդ շատ մեծ թիվ է։ Սակայն գինու, գարեջրի և 30° ողու արտադրությունը միայն ֆինանսական նկատառությամբ չի առաջ գալիս։

Նկատի յե առնվում և այն, որ խմիչքների պետական աշկարա առուտուրը, ինչ էլ լինի, այնուամենայնիվ հարված է տալիս դաղտնի խմիչք քաշելու զբաղմունքին։ Իսկ ինչ վերաբերում է գինիների մշակության, մենք առայժմ չենք կարող ուրիշ դադում տալ գինեգործությամբ զբաղվող գյուղացիներին. գինեգործության արգելումով մենք կըքայքայենք գյուղատնտեսության ամբողջ շրջաններ։ Չէ՞ որ այգեգործությամբ և գինեգործությամբ են պարապում Խրիմի, Հայաստանի, Վրաստանի, Դաղստանի, Թուրքեստանի և ուրիշ տեղերի գյուղացիները։

ՍԽՀՄ ֆինանսական դրության վերաբերող մեր զրույցը վերջացնելով, մենք ցույց ենք տալիս, որ ֆինանսներում՝ ինչպես հայելու մեջ, անդրադարձած է մեր տնտեսական դրությունը։

Աճում է մեր տնտեսությունը, աճում է ՍԽՀՄ-ի ֆինանսական բարեկեցությունը։

Մեր առջև չենք տեսնում անդունդներ և անանցանելի ճահիճներ. մենք այն ճանապարհն յելանք, որ-

հի վրայով գնալիս՝ բոլոր աշխատավորների ույժերի լիակատար լարումով, կըդիմանանք մինչև համաշխարհային հեղափոխությունը։

Այդ հեղափոխության հաջորդ որն իսկ, մենք վոչ միայն ոգնություն ենք ստանալու հարևան, ավելի զարգացած խորհրդային յերկիրներից, այլև մենք ինքներս կըկարողանանք տալ այն, ինչով վոր մենք քիչ թե շատ հարուստ ենք՝ հաց, վուշ, փայտ, նավթ, և այլն։

---

12. ԴԵՊԻ ԿՈՄՄՈՒՆԻԶՄ

Առանց համաշխարհային պրոլետարիատի աջակցության մենք չեյինք կարող դիմանալ յեոթ տարի։ Իմպերիալիստական աշխարհը հարուստ է, գերազանցորեն զինված, տեր է ագիտացիայի սքանչելագույն ապպարատի։ Նա բանակների, յեկեղեցու, դպրոցների և համալսարանների, ժանդարմերիայի և վոստիկանության, խուզարկու կազմակերպության և կաշառքի հսկայական սիստեմի օգնությամբ կարող է խեղդել վոչ միայն մեզ պես չքավոր յերկիրը, այլև մեզնից զորեղին։ Սակայն կռվի թե տնտեսական և թե քաղաքական միջոցները բոլոր իմպերիալիստական յերկիրների բուրժուազիայի ձեռքում ՍԽՀՄ հաղթելու համար անպետք յերևացին։

Ցեվ այդ հասկանալի յե. ախր բանը միայն բանակները, դրամը, յեկեղեցիները և դպրոցները չեն, այլև բանվոր դասակարգ, վոր Ցեվրոպայում ամենահզոր դասակարգն է։

1907—11 թվականներին յուրաքանչյուր 100 բանակչից արդյունաբերության և լեռնային գործում զբաղված եյին՝ Բելգիայում 51 մարդ, Անգլիայում 47, Շոտլանդիայում 49, Գերմանիայում 40, Ֆրանսիայում՝ 36։ Պետք է նույնպես հաշվի առնել փոխադրության, կապի, առևտրի բանվորներին, գյուղատնտեսության բատրակներին։

Ցեվրոպական պրոլետարիատն՝ իր մեծամասնությամբ դեռ դեղին սոցիալիստների յետևից է գնում, բայց յերբ խոսքը մեր յերկրի վրա յե բացվում՝ հարձակվենք ՍԽՀՄ վրա, թե վոչ, բանվոր դասակարգն իր ամբողջությամբ մեր կողմն է կանգնում և պայքար մղում այս լոզունգով. «Ձեռքներդ հեռու Խորհրդային Ռուսաստանից»։

Իմպերիալիստական պետությունների համար դժվար բան չեր մեր յերկրի այս կամ այն շրջանը գրավել, նույնիսկ Մոսկվան, ել չենք ասում Լենինգրադը։ Սակայն բանվոր դասակարգը վճռապես պաշտպան և կանգնում Խորհրդային Միության։

Այսպիսով մենք արդեն ութներորդ տարին է գոյություն ունենք և այժմս փաստապես մեզնից է կախված մեր բարեկեցությունը. մենք վոչ միայն կարող ենք դիմանալ, այլև ավելի հարստանալ, քան եյինք 1917 թ. հոկտեմբերին։

Համաշխարհային կապիտալիզմը, ի հարկե ոգնում է մեր ներքին հակահեղափոխական ուժերին, ոգնում է գաղտնի և համեմատաբար վոչ մեծ չափով։

Այժմ մի հետաքրքիր դրություն է ստեղծվել։

Մենք, վոր խոշոր «պետություններից» ամենաաղքատ յերկիրն ենք, աճում, զարգանում, ամրանում ենք, վստահ լինելով, վոր 1928 թվին, կամ մի տարի յել առաջ, կըհասնենք մինչպատերազմյան դրությանը և ապա՝ ավելի արագ, քան պատերազմից առաջ, կը շարունակենք զարգանալ. իսկ իմպերիալիստական պետությունները դժվար կացությունից չեն դուրս գալիս. թե տնտեսական և թե դասակարգային հակամարտությունները այնտեղ շարունակ աճում են։ Կապիտա-

լիստական աշխարհը մոտենում է հեղափոխության, մոտենում է ջղաձգաբար, ընդդիմադրությամբ, կատաստրոֆաներով, հասարակական յերկրաշարժներով, մինչդեռ մենք տարեցտարի աստիճանաբար, առանց նկատելի ցնցումների, գնում ենք դեպի բարձրացում սարն ի վեր։

Մենք չենք հասնի սոցիալիզմին միայնակ, առանց համաշխարհային հեղափոխության ոգնության։

Յեթե վերացական կերպով դատենք, պատասխանը դրական է։

Յեթե բանվորական շարժումը իմպերիալիստական յերկիրներում կաճի և համաշխարհային կապիտալի ռազմական միջամտությունը ՍԽՀՄ-ի գործերում հետզհետե անհնարին կդառնա, այդ ժամանակ արդի տնտեսական վերելքով և ամրակուռ միացմամբ՝ գյուղացության հետ մենք անտարակույս ավելի ու ավելի սոցիալիստական յերկիր կդառնանք։ Քանի խոշոր և արտադրողական լինի արդյունաբերությունը, այնքան հարուստ կլինին քաղաքացիք, նախ և առաջ բանվորները և մեր քաղաքային ինքնավարությունները, այնքան ավելի արագ կրկառուցվին՝ իրոք որինակելի տներ—կոմմունաներ ընտիր ճաշարաններով, լվացքատներով, մանկամսուրներով, ակումբներով, թատրոններով, ռադիո-դահլիճներով։

Մեր քաղաքն աստիճանաբար կբսկսի աղատագրվել մեշչանական կենցաղից իր սեփական խոհանոցներով, պրիմուսներով, տաշտերով, պլիտաներով և կը կազմակերպվի կոմմունիստական յեղանակով։

Գյուղերումն ել կըբարգավաճի նման մի բան։ Գյուղացին սեփականատեր է. նա կոմմունիզմ չի ուզում. 1921 թ. նա ասում եր. «փառք աստծու, իշխանությունը ելի բոլշևիկների ձեռքին է, իսկ կոմմունիստներ ել չկան»։

Լենինը շեշտում եր թե իր ծրագիրն ավազի վրա է հիմնում նա, ով հույս է տածում թե գյուղացին սոցիալիստ կըլինի։ Վոչ յերբեք. գյուղացին սոցիալիստ լինել չի կարող, քանի նա սեփականության անսահման ծովումն է ապրում, վորդուց ու հարսից սկսած մինչև ձին, գութանն ու սայլը։

Բայց բանն այդ չե, այլ այն նորը, վոր անդիմադրելի կերպով շարժվում է դեպի գյուղը։

Բանն այն է, վոր գյուղացին՝ բացի աշխատանքի ժամանակակից գործիքների գործադրությունից, բացի գիտության և տեխնիկայի արդի նվաճումների ոգտագործությունից, ուրիշ ճանապարհ չունի դեպի մի լավագույն կյանք։

Միայն քիմիական պարարտացման, տրակտորների և գյուղատնտեսի ոգնությամբ կարող է մեր գյուղացին իրեն համար լավագույն կյանք ստեղծել։ Ուրեմն, գյուղական 22 միլիոն տնտեսությունները, ուզեն-չուզեն, պետք է կազմակերպեն կոսպերացիա, տարեցտարի մեր ժանը սեփականատիրական գյուղը կոմմունական դարձնելով։ Սկզբում կոմմունիզմի ծիլերը հազիվ նկատելի կըլինեն, բայց հետո աստիճանաբար նրանք կաճեն և կըբռնեն մեր տնտեսական կարգի ու ամբողջ կենցաղի հրապարակը։

Պետական իշխանությունը գյուղական չունևորների կողում ընդդեմ համփաների (կուլակների) չեզոք դիրք չի բռնի. ընդհակառակը՝ մենք ամեն միջոց գործ կըդնենք, վոր աղքատ գյուղացին լավացնի իր կեն-

ցաղը, բարձրացնի իր կյանքի մակերևույթը։ Որենքն արգելում է համփային կոոպերացիայի մեջ մտնել, իսկ յեթե նա այնուամենայնիվ մտնում է և հաճախ ղեկավար դերով, այդ միայն շնորհիվ գյուղացիական անկուլտուրականության և վերահսկիչ աչքերի պակասության, վորոնք կըդիտեին համփային կոոպերացիայի մեջ։

Բայց մենք զորանում ենք, գյուղումը կազմվում են գյուղթղթակիցների, կոմյերիտականների, մեր ուսուցիչների, բժիշկների, գյուղատնտեսների կադրեր։

Համփան տարեցտարի ավելի մենավոր է դառնում։

Անկասկած է՝ վոր յուրաքանչյուր տարի ավելի պետք է դյուրին լինի մեզ կազմակերպել բատրակներին Համանտառհողային միության մեջ, աղքատներին և միջակներին՝ կոոպերացիայի մեջ՝ գյուղը համփայից (կուլակից) խլելու համար։

Արդյունաբերության աճումը հնարավորություն է տալիս մեզ ամեն ամիս եժանացող ապրանք թափել ավելի մեծ քանակությամբ, վոր անկասկած ամրացնում է գյուղացու թյան և պրոլետարիատի կապը, հարստացնում մեկին և մյուսին, կյանքի մակերևույթն է բարձրացնում տնտեսության բոլոր շրջանների մակերևույթը։

Ցեվ նկատի ունենալով ընդհանուր տնտեսական վերելքը, մենք պետք է մեծ ույժով շեշտենք պլանային սկզբունքի դերը Խորհրդային շինարարության մեջ և մասնավոր սեփականության բացակայությունը խոշոր ֆաբրիկաներում և գործարաններում, փոխադրության մեջ և բանկերում։

Վորևե կապիտալիստական պետության մեջ ահագին վաստակ կա, վոր յուրացվում է մասնավոր սեփականատերերից, վայելվում, վատնվում է, գործի վրա չի դրվում և այդ ամբողջությամբ չի ծառայում արտադրության ընդարձակմանը։

Հայտնի յե, որինակ՝ թե արտասահմանում ինչ հսկայական գումարներ եյին վատնում իրենց վրա ռուս-ֆաբրիկանտները ու գործարանատերերը. հայտնի յե նույնպես թե վորքան միջոցներ եյին վատնվում հոխության առարկաների վրա, վորոնք արտասահմանումն են պատրաստվում։

Հավելյալ արժեքի ծախսումն այնտեղն եր հասցնում, վոր անհամաչափ եյին աճում ճոխության առարկաների ճյուղերի արտադրությունը և արդյունաբերության միջոցների մի մասի գործադրությունը տնտեսության ուրիշ ճյուղերի վրա։

Խորհրդային իրավակարգում այդպիսի ծախսում միանգամայն անհնարին է. ամեն մի ռուբլին, վոր մենք շահում ենք արտադրությունից, կամ առևտրից, կամ փոխադրությունից, իսկույն գործի մեջն ենք դնում։ Արտադրության մեջ խորհրդային պրոլետարիատը հավելյալ արդյունք է ստեղծում. այդ հավելյալը մասամբ ուղղվում է դեպի նույն արտադրությունը, մասամբ էլ դեպի հասարակական կյանքի այն ճյուղերը, վորոնք վերջիվերջո աջակցում են արտադրության աճմանը։

Այսպիսով, այդ միևնույն ռուբլին մեր ձեռքում մյուս բոլոր հավասար պայմանների դեպքում մի խոշոր մեծություն է, քան բուրժուազիայի ձեռքում։

Փոքր տեր չի խաղում նաև հասարակական գործունեության պլանացման հնարավորությունը։

Մենք կարող ենք հաշվի առնել հասարակական բաժինների համապատասխանությունը և միջոցներն ուղղել այնտեղ, որտեղ նրանք ամենամեծ ոգուտ են բերում պետությանը։

Պլանային սկզբունքի մասին գրել ենք նախորդ գրույցներից մեկի մեջ. այստեղ միայն մենք ցույց կըտանք, որ նա արագացնում է մեր վերելքը և հենց դրանով էլ մոտեցնում է մեզ կոմմունիզմին լայն ծավալով։ Մենք թույլ չենք տալիս և թույլ չենք տա տրեստին, որ իր բոլոր վաստակը ծախսի իր անձնական հայեցողությամբ։ Հետզհետե ավելի պետք է հաշվի առնենք հասարակական կյանքի բոլոր կողմերը, նրանց փոխադարձ ազդեցությունը և այդ հաշվառությունը մեզ թույլ կըտա կանխիկ միջոցներն ուղղել հասարակության այն ճյուղերը, որտեղ կարիք է զգացվում։ Մենք արդեն այժմ պլանային բավական լայն և խոր աշխատանք ենք կատարում. հաշվի չենք առնում շուկան և նրա համաձայն արտադրական ծրագիր ենք կազմում։

Բոլոր խոշոր էլեկտրոշինարարությունը պլանային շինարարություն է, որի պտուղները մենք արդեն սկսել ենք հավաքել, ինչ չափով որ մի շարք էլեկտրակայաններ սպարսարկում են բնակչությանը։

Սոցիալիզմն ուռճանում է՝ որպես արդյունք բազմամիլիոն աշխատավորների ձեռնարկության և ինքնագործունեության, որ մեծացած է պլանային ստեղծագործության հետ։ Վոչ մի հիմք չունենք յենթադրելու թե տարերայինը պլանայինից ավելի արագ է աճում և թե վերջինս իր վախճանական վիճակում կըչքանա։ Ընդհակառակը՝ նոր տնտեսական քաղաքականության բոլոր տարիներում պլանային աշխատանքն աճում, ամրանում և կատարելագործվում է։ Իսկ ինչ վերաբերում է մասսաների նախաձեռնությանը և ինքնագործունեությանը, կասենք, որ միայն կույրերը չեն տեսնում թե ինչպես արագ բարձրանում են աշխատավորների նորանոր խավեր դեպի հասարակական աշխատանքը։ Բայառապես մեծ է կոմսերիտականների և պիոներների կազմակերպությունների դերը։

Նրանք խորտակում են հայրերի և մայրերի պահպանողական շղթաները, ստիպելով վերջիններին հարմարվել իրենց յերեխաներին և կյանքին։ Բնակչության այդ խավերը՝ կոմսերիտականներն ու պիոներները տարիների ընթացքում կյանք կըմտնեն, ինչպես ակտիվ և գիտակցական առաջնակարգ ույժ. հենց այժմ էլ նրանք ույժեղ կերպով աղդում են, որ հասակավոր մարդիկ նոր աշխատանքին լծվեն։ Մեր յերկիրը վերջիվերջո կոմմունիզմին կըհասներ և միայնակ։ Բայց՝ իսկապես ասած, ապարդյուն չե այն հարցը թե Խորհրդային Միությունը հնարավորություն կունենա՞ մի կոմմունիստական յերկիր դառնալ անկախ համաշխարհային հեղափոխությունից։

Ապարդյուն չե այդ հարցը հենց միայն այն պատճառով, որ անցումն դեպի կոմմունիզմը, այն էլ մեր չքավորության և անգրագիտության վիճակում, վոչ մեկ՝ այլ շատ սերունդների գործ է, այսինքն մեր առաջն այնքան ժամանակ կա, որի ընթացքում չի կարող համաշխարհային հեղափոխություն չլինել։

Հենց այդ պատճառով միանգամայն որինական է հարցն ուրիշ կերպ դնել, համաշխարային հեղափոխության յերկրորդ որը մենք ինչպես կըգնանք դեպի կոմմունիզմ։

Վոչ մի կասկած չկա, թե վորևե, շատ ընդհանուր, սահմաններով մենք կըկառուցենք մեր տնտեսությունը մի ընդհանուր համաշխարհային պլանով։ Կասկած չկա, վոր արդյունաբերությամբ և բանվորներով հարուստ Անգլիան, Գերմանիան և ուրիշները շատ ջանք կըդնեն մեր յերկրի արդյունաբերության և ելեկտրիֆիկացիայի զարգացման վրա, վորին մենք կարող կըլինենք պատասխանել հացով, վուշով, բամբակով և գյուղատնտեսության ու արդյունաբերության ուրիշ նյութերով (նաֆթ, փայտ, մարգանեց, պղինձ, պլատին և ուրիշ շատ բան)։

Յեվրոպական և ամերիկական պրոլետարիատը կարող է ուղարկել հետամնաց յերկիրները՝ ինչպես Պարսկաստանն ու Տաճկաստանն են կայլն, հրահանգիչների, վորակյալ բանվորների, վարպետների, տեխնիկների, ինժեներների, կազմակերպիչների, վարչագետների ամբողջ բանակներ։ Հետամնաց յերկիրներում հսկայական քանակությամբ ավելորդ բանվորներ կան. միաժամանակ այդ յերկիրները մեքենաների, գործիքների, ժամանակակից աշխատանքին հմտանալու չափազանց մեծ կարիք ունին։ Իսկ այնտեղ՝ Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում՝ հակառակը։

Այդ յերկուսի զուգակցությունը՝ Խորհրդային կառավարությամբ և պլանային աշխատանքով, բացառիկ հետևանքներ կըտա։ Յեվրոպական հզոր տեխնիկան՝ յերբ ոգտագործվի Խորհրդային հասարակության ձեռքով պետական պլանի համաձայն, հնարավորություն կըտա նորոգելու մեր արդյունաբերության հիմնական կապիտալը և արագ քայլերով առաջ վարելու այն զարգացման ճանապարհով. իսկ Յեվրոպան

հենց մի անգամից կարող է տալ մեր գյուղին ահագին քանակությամբ քիմիական պարարտացման նյութեր, ինչպես և մեքենաներ ու գործիքներ։

Մասնավոր-սեփականատիրական կապանքներից ազատված արտադրական ուժերը պետք է զարգանան բացառիկ թափով, դրան կընպաստեն այն հանգամանքները, վոր առայժմ մատչելի չեն հաշվառման։ Առաջինը՝ հավելյալ արդյունքի այն մասի գործադրությունը գործի վրա, վոր ծախսվում, վատնվում է բուրժուական բեժիմում։ Դեռ վոչ վոք չի հաշվել թե սեփականատերերի յուրացրած հավելյալ արժեքի վորպիսի քանակություն է խժռվում։ Հավանորեն մի պատկառելի գումար կըստացվի։

Յերկրորդ՝ գիտության և տեխնիքայի զարգացման վրա կաշխատի մարդկանց մի անհամար կազմություն, քան այժմ է։

Արդեն 1925 թ. մեր կյանքում ճանաչել չի կարելի այն, ինչի վոր մենք մասնակցում ելինք հինգ տարի առաջ։

Կանցնի ելի հինգ տարի և մենք հետ նայելով հեշտությամբ չենք ճանաչի մեր այսորվա կյանքը։ Յեվ այդ չքավորության և անգրագիտության, վոչվաղուցվա պատերազմների հատևանքների, քաղցի, տիֆի, մոլեգնության ժամանակ։

Համաշխարհային պրոլետարիատի հետ միասին մենք դեպի կոմմունիզմ կըգնանք անհամեմատ ավելի արագ քայլերով, մանավանդ վոր այն-ահագին միջոցները, վոր այժմ ծախսվում են սպառազինության վրա, առանց մնացորդի կուղղվեն դեպի կուլտուրական ճակատը։

Մեր առջևը կոմմունիզմի փարոսն է շողշողում։

Աղբելը ցնծություն է, ընկերներ։

Հ.Ս.Ս.Հ. Գրքերի Պետական Գրադարան
Հ.Ս.Ս.Հ. Գրքերի Պետական Գրադարան
7/XI. 1922
ՍՈՉԻ, Ազատության
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0193704

29.209

ԳԻՆԸ 65 ԿՈՊԵԿ